

ԵՄՄԵՆԹԱԼ (ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ)  
ՊԱՆԻՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ  
ՀԱՄԱՌՈՏ ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ՋԵՌՆԱՐԿ

---

637.3

ԵՄՄԵՆԹԱԼ (ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ)  
ՊԱՆԻՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՌՈՏ  
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

A II 7102 583  
35956



ԳՅՈՒՂԸՐԱՏ

Գլխավորարարի հրատարակած՝ մասնագետ-տեխնոլոգ Յ. Չ. Անչերի «Краткое практическое руководство по выработке швейцарского сыра» գրքի հայերեն թարգմանությունը հրատարակվում է Հայպանիբանտի պատվերով: Գիրքը թարգմանել է գրք. Ն. Մալախյանը, հավելումներով ու կրճատումներով խմբագրել է կաթի տեխնոլոգիայի մասնագետ՝ դոցենտ Վ. Քյուրբջյանը:

## Գ. ԵՄՄԵՆԹԱԼ (ԵՎԵՅՅԱՐԱՎԱՆ) ՊԱՆՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՅԽԱՅԱՆՔՆԵՐԸ ՃԻՅՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԱՆՎՐԱԺԵՑ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կաթնարդյունաբերութեան վոչ մի ճյուղում կաթը կանոնա-  
վոր ստանալու, պահելու և փոխադրելու գործում գործարանի  
ղեկավարը դերը հումքի բազայի նկատմամբ այնքան պայծառ  
կերպով հանդես չի գալիս, վորքան պանրագործութեան մեջ,  
տաանձնապես եմմենթալ պանիր պատրաստելիս:

Այս գլխում շարադրվում են այն բոլոր հիմնական պայման-  
ներն ու միջոցառումները, վորոնք պետք և կիրառեն ու պահպա-  
նեն կաթ մատակարարողները (խորհրտեսուութեանները, ԿԱԹ-ե-  
րը, կոլտնտեսութեանները, կոլտնտեսականները, մենատնտես-  
ները) բարձրորակ, այսպես կոչված «պանրապիտանի» հումք  
ստանալու համար, այսինքն՝ այնպիսին, վորն իր բոլոր հատկու-  
թեաններով համապատասխանի եմմենթալ պանրագործութեան  
զահանջներին: Այդ գործում գործարանները պետք և լինեն վոչ  
միայն նախաձեռնողներ՝ կաթը կանոնավոր ստանալու և փոխա-  
դրելու տեսակետից, այլև նրանք պետք և լինեն առաջատար  
ողակը հումքի բազայի նկատմամբ:

Այդպիսի բարձրորակ կաթ կարելի յե ստանալ միայն հե-  
տևյալ պայմաններում.

1) Կտրք պեճ և սոսցված լինի միտնգամայն առողջ կովերից:  
Հիվանդ կովերի, առանձնապես կրծից հիվանդների կաթը քի-  
միական կազմով շատ և փոփոխված, վարակված և ֆոսֆատա-  
քակտերիաներով, զատ և մակարդվում, ունի ցածր թթվութեան  
և չունի այն հատկութեանները, վորոնք անհրաժեշտ են կանո-  
նավոր խմորման համար:

2) Կռվերը պեճ և կերտիրվեն լավօրակ կերերով: Խմորման  
կամ նեխման ստադիայում գտնվող կերերը, ինչպիսիք են՝ բոր-

բոսնած և կծված քուսպը, թթված բարդոն, տաքացած խոճորճած մանրացրած արմատապտուղները, տաքացած քաղած կանաչն ամառվա լրացուցիչ կերակրման ժամանակ, փչացած ալյուրային և հատիկային կերերը և ալյուրի շփոթը, ամեն տեսակի թթվեցրած կերերը, հում կամ յեփած և թթված կարտոֆիլը, բորբոսնած, փոշոտ այրված խոտը, ճահճային և անտառային արոտները և ուրիշ կերեր, վորոնք վատ են ազդում անասուններին մարտդուլթյան վրա, վատ են անդրադառնում նաև կաթի վորակի վրա, այն դարձնում են քիչ սխտանի կամ բոլորովին անպետք եմմենթալ պանրագործուլթյան համար:

Լավ պանրապիտանի կաթ ստանալու համար կովերիէ պետք և կերակրել մարգագետնի կամ ցանովի կանաչով մինչև ծաղկելը կամ ծաղկելու ժամանակ, լավ պատրաստած խոտով (նույն կանաչից), այլև թարմ ուժեղ կերերով, ինչպիսիք են՝ ցորենի թեփքը, հատիկային կերերը (գարի, վարսակ, ցորեն, յեզիպտացորեն), լավ դործարանային կտավհատի քուսպը, այլև թարմ արմատապտուղներով (ճակնդեղ, գազար, շաղգամ). սակայն վերջիններից շատ չպետք և տալ, վորովհետև նրանք կենդանիների մեջ կարող են փոքրուծ առաջացնել: Պետք և խուսափել նաև մեծ բանակով ուժեղ կերեր կերցնելուց, վորովհետև դրանք կարող են ազդել կաթի հատկությունների վրա:

Փչացած կերերի ազդեցությունը կաթի վորակի վրա պայմանավորվում և նրանով, վոր նրանք վոր միայն հենց իրենք են պարունակում պանրագործության համար փաստապար անաղին քանակությամբ բակտերիաներ, այլև կովերի մարտդուլթյան խանգարում են առաջացնում: Այդ բոլորի հետևանքը լինում և այն, վոր սպասարկող պերսոնալի ձեռքերի միջոցով, կենդանու կաշուց և ողից կաթի մեջ են ընկնում մեծ քանակությամբ փաստապար միկրոբզանիզմներ, վորի հետևանքով կաթը գառնում և միանգամայն անպետք՝ պանրագործության համար:

3) Եռփրիմ լավ մախուր խմելու ջրով տալանովելու գառժի կազմակերպումն եմմենթալ պանրի պատրաստման հաջողության կարևոր նախադրյալներից մեկն և:

Ամենալավ ջուրը, իհարկե, համարվում և աղբյուրի ջուրը, ապա արաղ հոսանք և ալագե հուն ունեցող ջուրը, իսկ բաց ջրամբարներն իրենց կանգնած ջրով (ճակնեղ, առուներ և ճահիճներ) խմելու համար անպետք են:

4) Եմմենթալ պանրագործության մեջ շատ լուրջ հարց են:

համալսարանում տարածանքները յեղ ամառը կօվերին լրացուցիչ կամաչ կեր կերցնելու հայաստանի քաղաքի սեզերն առհեստական հյուրերով պատարագները:

Արհեստական պարարտանյութը պետք է շաղ տալ մարգագետիններում վաղ գարնանը, հենց վոր ձյունը կվերանա (մինչև կանաչի յերևալը), վորովհետև ուշ շաղ տալու դեպքում կանաչի վրա մնացած արհեստական պարարտանյութի մասնիկները հետագայում միանգամայն բացասական են աղղում պանրի վորակի վրա:

5) Այլմեծն յեղա ընդհանրապես պակաս նշանակություն չունի եմմենթալ պանրագործություն մեջ:

Շվեյցարական պանրագործություն համար ամենալավն են համարվում չափավոր կլիմա, միջակ ջերմաստիճան և խոնավություն (տարեկան ամենաքիչը 1000 մմ տեղումներով) ունեցող շրջանները, վորտեղ չի լինում պարբերաբար յերկարատև յերաշտ և շատ շոգ, վորտեղ այդպիսի ֆակտորների առկայություն շորհիմ կանաչն աճում է հավասարաչափ և անընդհատ, վորտեղ կովերը բազմաբար չափով ապահովված են լինում մատղաշ, թարմ, հյութալի կանաչով:

Այդպիսի շրջաններ են հանդիսանում լեռնային և նախալեռնային վայրերը:

Նորմալ եմմենթալ պանրագործությունը չի կարող լայն կերպով ծավալվել ցածրադիր հարթավայրերում ու տափաստաններում, վորտեղ աճում են այնպիսի բույսեր, ինչպիսին են կանճրակը, յավշանը, սխտորը, սորուկը և այլն, վորոնք կաթին վատ համ են տալիս, իսկ կաթի միջոցով ել պանրին: Յերկարատև յերաշտի դեպքում, յեք բույսերի աճը կանգ է առնում, կենդանիները անդի համար ստեղծվում են անբարենպաստ պայմաններ, դրա հետևանքով ել կենդանիներն ստիպված են լինում իբրև կեր ոգտագործել հողում յերկար մնացած, ծաղկաթափ յեղած և շատ չորացած բույսեր, վորը, իհարկե, վատ է անդրադասնում կաթի վրա:

Արդևս բացառություն, տափաստաններում կարող են լինել միայն տուանձին կետեր, վորոնք պիտանի յեն պանրագործություն համար, որինակ. գետերի մոտ տեղերն իրենց վողողվող մաքրագետիններով, վորտեղ ողի ու հողի խոնավությունը լավ են:

6) Հողի հատկությունը նույնպես մեծ ազդեցություն է գործում կաթի վորակի վրա. նրա մեջ պարունակվող կալցիումի և

Ֆոսֆորի ազերը կերի միջոցով անդրազանում են գլխավորապես կաթի հանքային նյութերի վրա:

Ավելի լաֆն և համարվում լինային սևահող, կավային, բավականի խոնավ, բայց մանրախճոտ յենթահող ունեցող հողը: Ընդ որ մնացած տեսակի հողերը կաթի վորակի համար պակաս բավարար են: Եմմենթալ պտնրագործության համար առանձնապես վատ և համարվում կրային ջրաթափանց հողը:

## 2. ԿԱԹԻ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ

Բակտերալոգիական պրոցեսը պանրագործության մեջ համարվում և շատ բարդ պրոցես: Այդ բարդությունը պայմանավորվում և վոչ միայն նրանով, վոր ինքը՝ պանրացու զանգվածը հանդիսանում և շատ նպաստավոր միջավայր բակտերիաների զարգացման համար, այլև նրանով, վոր պանրագործության մեջ մենք գործ ունենք միկրոորգանիզմների մի ամբողջ կոմպլեկսի հետ, վորոնք յերբեմն միասին, յերբեմն հաջորդաբար մեկը մյուսին փոխարինելով, պանրի մեջ առաջացնում են այս կամ այն փոփոխությունները, ի վերջո հասունացնելով պանիրը:

Նկարագրենք ոգտակար միկրոորգանիզմների մի քանի խումբ, վորոնք պանրի առաջացման պրոցեսում էյական գեր են խաղում:

1. Կարնոսոպրվային բակտերիաների խումբը.— ա) Յերկար պանրային ցուպիկը (*Bact. casei*) լավ և դարգանում կաթի, շիճկի և թարմ պանրի մեջ. ուլտիմալ ջերմաստիճանը 40—50° Ց., վորը մյուս բակտերիաների համար կարող և դառնալ կրիտիկական, իսկ եմմենթալ պանրի խմորման մեջ դրավում և առաջակարգ գրվում և գլխավորապես *Bact. casei* E.]

բ) կարճ շիթայածե կոկկեր (*Streptococcus lactis*), զարգանում և 10-ից մինչև 40° Ց. ջերմաստիճանում. ուլտիմալ ջերմաստիճանն և 30—35°, համապատասխան պայմաններում լավ և զարգանում կաթի և շիճկամակարդի մեջ՝ պանրի ցուպիկի հետ միասին:

2) Պրոպիոնոսոպրվային բակտերիաներ (*Bact. acidi propionici*) — Այս բակտերիաները մեծ դեր են կատարում եմմենթալ պանրի նկարի առաջացման գործում: Թույլ նկար առաջանալու գեպըում խորհուրդ և տրվում գործադրել պրոպիոնոսոպրվային

բակտերիաների կուլտուրան, այն մտցնելով ինքնարուր շիճկա-  
մակարդի մեջ:

Վերևում հիշված յերեք տեսակի բակտերիաները հանդիսա-  
նում են հիմնական յիվ ամենակարեւոր բակտերիաներն եմմենթայ  
պանրագործութեան մեջ:

Պանրագործութեան համար վնասակար միկրոօրգանիզմներ են  
համարվում հետևյալները՝

1) Ադիբային ցուպիկների խումբը (*Bact. coli-aërogenes*—  
*Bact. coli commune* և *Bact. aërogenes*).—Բակտերիաների այդ  
յերկու տիպը պատկանում են մի խումբ—վոչ տիպիկ կաթնա-  
թթվային բակտերիաների և պանրի մեջ գործում են միատեսակ:

Նրանք կաթի մեջ են ընկնում գոմում՝ կամ անմիջականո-  
քեն գոմադրի մասնիկների հետ կամ կրծի միջոցով, հանդիսանա-  
լով կենդանիների աղիքների միկրոֆլորայի շատ տարածված  
էրեմնանտները: Այդ միկրոօրները պանրն ուղղնում են դեռևս մա-  
մուլի տակ կամ այն աղիլու ժամանակ: Այդ միկրոօրների դեմ  
լավ ազդող միջոց է համարվում բորակը (սելիտարան): Այդ խմբի  
համար ոպտիմալ շերմաստիճանը 37—38° Ց է: Այդ միկրոօրները  
վատ են դիմանում թթու միջավայրում:

2) Յուգարթիկների բակտերիաների խումբը (*Bacil. amylobac-*  
*ter*).— Այս բացիլը կաթի մեջ է ընկնում գոմում և կաթնա-  
մթերքների մեջ առաջացնում է յուղաթթու՝ մի շարք ուրիշ ցնդող  
նյութերի հետ՝ խիստ, սովորաբար անուր հոտով: Խմորման փու-  
լանմուշի մեջ յուղաթթվային բակտերիաները հանդես չեն գալիս,  
բայց ինտենսիվ կերպով զարգանում են պանրախմորի մեջ, առա-  
ջացնելով առատ դադ, վորի հետևանքով և պանրը խիստ ուռ-  
չում է: Նրանք ընդունակ են դիմանալու բարձր շերմաստիճանի,  
տակայն շատ զգալուն են ազատ թթվի նկատմամբ, վորով և սահ-  
մանափակվում է յուղաթթվային բացիլների գործունեյությունը  
կաթի ու կաթնամթերքների մեջ: Տաք նկուղում պանրի ուռ-  
չելը գլխավորապես այս բակտերիաների գործունեյության հե-  
տևանքն է:

3) Շաբառանկները (գրոժ), վորոնք խմորում են կաթնա-  
շաքարը, միաստակար միկրոօրգանիզմներ են հանդիսանում ինքնա-  
բուր շիճկամակարդ պատրաստելու համար. պանրի մեջ ընկնելիս  
ուղցնում են այն և նրան վատ համ են տալիս:

4) Նեխման բակտերիաներ (*Bac. putrificus*).— Այս միկրո-  
օրգանիզմները շատ միաստակար են պանրագործութեան համար:

Ներանք գտնվում են համարյա բոլոր պանիրների մեջ, բայց սովորաբար հանդես չեն գալիս, չեն ազդում պանրի հասունացման վրա և միայն բացառիկ պայմաններում, վորոնք դեռևս լրիվ չեն ուսումնասիրված, սկսում են իրենց գործունեությունը՝ նեխում առաջացնելով առանձին տեղերում: Այդ տեղերն աստիճանաբար ընդարձակվում են և հետագայում միանում իրար, կարճ ժամանակամիջոցում պանիրը դարձնելով ուտելու համար անպետք, զիտ հոտ ունեցող մի գանգված:

### 3. ԿԱԹ ՍՏԱՆԱԼԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԱՄԲԸ ՄԻՆՉԵՎ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԱՆՁՆԵԼԸ

Կաթն սառնալը և նրա խնամքը հենց արտադրման վայրում քաղկացած և հետևյալ գործողություններից—կթեկը, քամելը, պաղեցնելը և գործարան փոխադրելը:

Կովերի կիրք պետք և կատարել խնամքով, մաքրություն պահպանելով. պետք և կթել որակյալ առնվազն յերկու անգամ հավասար ժամանակամիջոցներում, վորովհետև այսպես կաթի յուղայնությունը խիստ կտատանվի: Չի կարելի մի անգամ կթել ժողամեր կովերին, յեթե նրանց կաթը գործարան պետք և հանձնվի: Յուրաքանչյուր անգամ պետք և կթել լրիվ:

Կթելուց հետո կաթն անմիջապես գոմից պետք և տեղափոխել մեկ ուրիշ մաքուր, լավ ողափոխվող շենք, վորովհետև նա շատ շուտ և կլանում կողմնակի հոտերը:

Կթելու ամանները պետք և պահվեն բացարձակ մաքուր վիճակում, դրա համար անհրաժեշտ և խնամքով լվանալ սկզբում գոլ ջրով, ապա խոզանակով՝ տաք սոդաջրով և նորից վողողել տաք ջրով: Յուրաքանչյուր 3—4 որը (խսկ ավելի լավ և ամեն որ) կթելու ամանեղենը պետք և ստերիլիզ կամ գուրըշիով, կամ քիմիական ստերիլող նյութերով (քլորակիր): Լվանալուց հետո ամանեղենը պետք և լավ հովահարվի և վոչ մի դեպքում չպետք և պահվի գոմում կամ նրան մոտիկ տեղ և վոչ ել պետք և ոգտագործվի ուրիշ նպատակով:

Կարի բամելը.— Շվեյցարիայում և Գերմանիայում (Ալգաույում), վորպես կանոն կաթը քամում են միայն գործարանում և վարպետ պանրագործի անմիջական մասնակցությամբ, վորովհետև կաթի մի քանի արատները, վորոնք կապված են, որինակ՝ կրծի հիվանդությունների (քամիչի վրա շոտանման լերթ, արյուն,

Թարախ յերևալը) և մեխանիկական կեղտերի (գոմաղը, ծղոտ, աղը) հետ, հայտնի յեն դառնում արդեն քամելու ժամանակ: Սահայն այս կանոնը պետք է պահպանել միայն այն վայրերում, վորոնք գործարանից՝ շատ հեռու չեն և կաթն անմիջապես փոխադրվում և գործարան:

Կտրի պաղնցումը.— Եմմենիթալ սլանիլը պատրաստելու համար ուղարկված կաթը հավաքման կետերում պահեցնելը սահմանում և ժամանակտը՝ նայած գործարան մտած կաթի վորակին ու վիճակին:

Կտրի փոխադրումը (տրանսպորտ).— Կաթի փոխադրության համար օտարոզությամբ ամենից ավելի հարմար և 40 լորանոց Ֆլյագը. մեծ անոթների մեջ փոխադրելիս կաթը կարող է փչանալ և ճշնչահեղձ լինել:

Փոխադրման ժամանակ Ֆլյագները կաթի հետ միասին պետք է պաշտպանված լինեն տաքանալուց և հնարավորության չափ նաև թափահարելուց:

Ֆլյագները լվանում, չորացնում և հովահարում են գործարանում և միայն այդ դրությամբ վերադարձնում կաթ հանձնողներին:

Տներմա (կոլտնտեսություն, խորհանտեսություն) հասնելուն պես պետք է Ֆլյագներն անմիջապես քայ անել և նորից հովահարել: Չի կարելի այդ Ֆլյագներում գործարանից շինուկ փոխադրել կաթի հազարժեան կետերը. առանձնապես վտանգավոր և հում շինուկը, վորովհետև կաթի միկրոֆլորան այդպիսի Ֆլյագներում խիստ փոփոխվում է, նույնիսկ ամենախնամքոտ լվանալու պեպքում:

#### 4. ԿԱԹՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Վարպետ-պանրագործը կաթն ընդունելուն պետք է մեծ ուշադրություն դարձնի: Նա պետք է կարողանա ճիշտ գնահատել կաթի վորակը, հետևաբար և ճիշտ տեսակավորի այն: Վարպետ-աղանրագործը պետք է ուսումնասիրի յուրաքանչյուր կաթ հանձնողին՝ նրա հանձնած կաթի վորակի տեսակետից, Ֆերմայում կաթի հետ վարվելու և նրա նկատմամբ հոգ տանելու տեսակետից, վորովհետև միայն այդ իմանալը կարող է ոգնել վարպետին այն գնալը երում, յերբ կարիք կլինի գտնել կաթի վորակի վատանալու պատճառները:

Գործարանը կաթը պետք է ստանա համաչափ, կարճ ժամանակահատիժոցում, առանց ընդհատումների, վորովհետև տարբեր

հանձնողներից ստացված, տարբեր հասակի (թարմ և հասուն) մեծ քանակութեամբ հաճաքածո կաթը կաթսայի մեջ յերկար ժամանակ մնալու դեպքում նրա վորակը կվատանա: Այդ պատճառով զործարանում ստացվող կաթի քանակի դժազիբը (զրաֆիկ) պետք է խիստ պահպանվի, հսկողակ դեպքում դրա հետեանքով պանրի վորակը կվատանա: Բացի այդ, վարպետք պետք է հետևի հանձնվող կաթի կշռելուն ու զրանցմանը, այլև ֆլյազների լվանալուն և լվացած, չորացրած և հովահարված դրութեամբ հանձնելուն:

## 5. ԿԱԹԻ ԿՈՆՏՐՈՆ ՈՒ ԿԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Պանրագործութեան ճիշտ կազմակերպումը պահանջում է ամենալայն վերահսկողութեան կազմակերպել կաթի վորակի նկատմամբ:

Ներկայումս կաթի հետազոտման մեթոդներն արդեն այնքան մշակված են, վոր յուրաքանչյուր գործարանում միանգամայն հնարավոր է կատարել անհրաժեշտ անալիզները և զրանց հիման վրա բավարար ճշտութեամբ պարզել կաթի պիտանիութեունը պանիր պատրաստելու համար:

Կաթի հետազոտութեունը կատարվում է յերկու ուղղութեամբ՝ ա) կատարում են քիմիական կազմի անալիզ և բ) գործում են նրա պիտանիութեունը պանիր պատրաստելու համար:

Քիմիական հետազոտութեան մեթոդները (յուղի  $\frac{1}{10}$ -ի, տեսակարար կշռի, չոր նութերի վորոշումը և այլն) շարադրված են գործարանի լաբորանտին արված հրահանգի մեջ և կաթի քիմիայի և անալիզի վերաբերյալ ձեռնարկներում, այդ պատճառով ևլ այս աշխատանքի մեջ այդ մասին խոսել անապատակահարժաք ենք համարում: Այս գրքույկում մենք կշռաքինք հետազոտութեան այն մեթոդները, վորոնք վերաբերում են կաթի պանրապիտանի լինելը վորոշելուն:

Ձրգանդիպիկ փռծը, այսինքն՝ կաթի համն ու հոտը փորձելու մեթոդը, չնայած կաթի պանրապիտանիութեունը վորոշելու համար կիրառվող հետազոտման մի շարք որեկտիվ մեթոդներին, պանրագործութեան մեջ ունի շատ մեծ նշանակութեուն: Համով և հոտով կաթը ճիշտ դնահատելու համար վարպետք պետք է ունենա մեծ փորձ:

Որգանդիպիկ փորձը կատարվում է հետևյալ կարգով:

Կաթ պարունակող Ֆլյագները բաց անելու ժամանակ վարձա-  
շատ են, չի՞ գալիս արդյոք նրանից գոմի, կովի, գոմազբի, կեղ-  
տատ ամանի, հիվանդ կովերի զեղի հոտ և այլն: Ապա կաթի  
համն են տեսնում, վորոշելով՝ չունի՞ արդյոք նա կծու, թթու,  
սապոնի, կերի, մետաղի և այլ կողմնակի համ:

Դիտողություններ են կատարում նաև այն կաթի նկատմամբ,  
վորը թողնված է հասունանալու նպատակով. այդ դեպքում գնահա-  
տում են արդեն յերեսին կանգնած սերը, վորի մեջ կաթի թերու-  
թյուններն ավելի պարզ են արտահայտվում: Մերը պետք է լինի  
փափուկ, կապակցված (բայց վոչ ռետինանման): Այնպիսի յերե-  
վոյթներ, ինչպիսին են սերի շոտանմանությունը, մածականու-  
թյունը, թթվությունը և դառնությունը, ցույց են տալիս կաթի  
վատորակ լինելը: Կաթը լավորակ լինելու դեպքում սերը պետք  
է ունենա մաքուր համ ու հոտ: Կաթը սերակալման ամանից  
դատարկելու ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել  
ամանի տակ մնացած հնարավոր նստվածքներին—լորձ, ժածկա-  
նման լերթ, արյուն, թարախ, կեղտ (գոմազբ) և այլն:

Կարի մեջ չեղած կեղտ վորոշելու համար ամենից ավելի  
հարմար է բամբակի կլորակի միջոցով քամելը: Դրա համար ծա-  
ռայում է մի գործիք, վորը բաղկացած է հատակ չունեցող մի  
շից, վորի վիզը փակվում է մետաղյա ցանցով: Այդ ցանցի վրա  
զրվում է բամբակի կլորակ և վականակը ցանցի հետ փակ-  
վում է: Շշի մեջ լցնում են 0,5 լիտր կաթ, վորը քամվում է  
բամբակի կլորակի միջոցով և Ֆիլտրի վրա չեղած նստվածքով  
դատում են կաթի կեղտոտության մասին:

Ավելի ճիշտ մեթոդի դեպքում բամբակի կլորակը կշռում են  
չոք վիճակում՝ քամելուց առաջ և հետո, և կեղտոտության մասին  
դատում են քաշերի տարբերությամբ: Գոմազբի կտորներ, կեղտի  
խոշոր մասնիկներ, ժածկանման լերթ, թարախ, արյուն լինելիս  
այդ կաթը պանիր պատրաստելու համար անպետք է: Յեթե բամ-  
բակի կլորակը մաքուր է մնում, նշանակում է կաթը քիչ է կեղ-  
տոտ և պիտանի յե պանիր պատրաստելու համար: Կաթը պանիր  
պատրաստելու համար պիտանի յե համարվում նաև այն դեպքում,  
յեթե կեղտից կլորակի վրա մնում է հազիվ նկատելի մախրա-  
ղույն փառ:

Կարի քրվորյունը վարձում են վորոշ քանակությամբ և  
սանաթեմար կաթը հիմքով չեղոքացնելով՝ ֆենոլֆտալինյին ինդի-  
կատորի ներկայությամբ: Սովորաբար կաթի թթվությունն ար-

տասնացում են աստիճաններով: ԹԹՎուԹյան աստիճան են ան-  
 վանում հիմքի իս սանտիմետրների այն քանակը, վոր գնացել  
 է 100 իս ամ կաթի չեղոքացման համար՝ Ֆենոլֆտալեյին ինդի-  
 կատորի ներկայութեամբ: Նայած թե ինչ ԹՆդուԹյան հիմք է  
 վերցվում N 10 կամ N. 4, ԹԹՎուԹյունը կարտահայտի Թյորնե-  
 բի կամ Սոկլիստ-Նենկելի աստիճաններով: Ըստ Թյորնեբի ԹԹՎու-  
 Թյունը վորոշում են այսպես. վերցնում են 10 իս ամ կաթ, նոս-  
 քացնում են 20 իս ամ Թորած ջրով, ավելացնում են 5 կաթիլ  
 Ֆենոլֆտալեյինի 2<sup>0</sup>/<sub>10</sub>-անի ալկոհոլային լուծույթ և տխրում են  
 կծու նառելումի N:10 ջրային լուծույթով, մինչև կստացվի 2 բո-  
 պեյի ընթացքում չանհետացող նկատելի վարդագույն գունավո-  
 բում: Հիմքի այն քանակը, վոր գնում է 10 իս ամ կաթի չեղոքաց-  
 ման համար, բաղմամբատկում են 10-ով, վորովհետև ԹԹՎուԹյան  
 աստիճաններն ըստ Թյորնեբի ցույց կտան N:10 հիմքի այն քա-  
 նակը, վոր գնացել է 100 իս ամ կաթի չեղոքացման համար: Նայած  
 ԹԹՎուԹյան աստիճանին, կաթը կարելի չե բաշխել նետեյալ  
 թմբերի.

ԹԹՎուԹյան աստի-  
 ճանն ըստ Թյորնեբի

Ա Ր ա տ ի ծ ա գ ու մ Ը

Կաթի դանրա-  
 տիաստիճանը

-ից	մինչև		
5	8	Կովի կրծի ուժեղ բորբոքում, խիստ աղի կաթ, գույնը սապանջրի նման	անպետք է
8	10	Նույնը	նույնը
10	13	Կրծի հիվանդութեան սկիզբը, վոչ մա- բուր կիսելը	»
13	16	Կրծի հիվանդութեան սկիզբը, կաթը ըրդանամակարգից Թույլ կերպով և մա- կարդվում կամ բոլորովին չի մակարդ- վում	»
16	17	Լակտացիայի վերջի կաթը, Թույլ է մակարդվում	»
17	20	Նորմալ կաթ	ընչ պիտանի չե
20	23	Կաթը մեծ մասամբ նորածին կովերից և ստացված կամ կեղտոտված է	պիտանի չե
23-ից	բարձր	Դալ, խիստ կեղտոտված	կասեղածիկի չե անպետք է

Այսպիսի գնահատականն իրական և չմիայն Թարմ կթած  
 կաթի համար:

Կարի դիմացկաւնութիւնն հետազոտութեամբ. — Նորմալ գիմնացկուն կաթի հատկութիւնները մի վորոշ ժամանակ չպետք է փոխվեն: Կաթի գիմնացկունութիւնը վորոշելու լազ յեզանակ է հանդիսանում հետեւյալ մեթոդը:

Թարմ կթած կաթը լցնում են փորձանոթի մեջ և պահում են 20—25° Ց. ջերմաստիճանում մինչև 24 ժամ: 12 ժամ անցնելուց հետո վորոշում են թթվութիւնը, և յետեւ նա չի բարձրացել, կաթը համարվում է գիմնացկուն. կաթը համարվում է շատ լազ, յետեւ 24 ժամ հետո նա չի թթվել:

Բազմաթիւ դիտողութիւններէ և հետազոտութիւններէ հիման վրա կաթի թթվութիւնը տատանվում է միջին հաշվով հետեւյալ սահմաններում.

Կ ա թ ի վ ո Ր ա կ Ը	Թթվութիւնը թյորների աստիճաններով		
	Թարմ կաթ	12 ժամ հետո	24 ժամ հետո
Միանգամայն նորմալ կաթ . . . . .	17—20	17—20	17—25
Լազ կաթ—ձմեռը . . . . .	15—20	17—20	17—50
» » —ամառը . . . . .	17—20	17—20	50—85
Կաթը կաթսայում, նախապատրաստված է վերամշակման համար—ձմեռը . . . . .	17—20	20—23	20—75
Կաթը կաթսայում, նախապատրաստված է վերամշակման համար—ամառը . . . . .	17—20	18—38	60—85

Նմանեթալ պանրի համար կաթի նորմալ թթվութիւնը աստիճանով է 17—20° ըստ թյորների:

Մաքուր կաթնաթթվային խմորման հետեւանքով բազականի կանոնավոր կերպով ինքնամակարդում տեղի յե ունենում, որին հակ, 24° Ց. ջերմաստիճանի դեպքում՝ յերբ կաթի թթվութիւնը 72—75° է ըստ թյորների:

Պեղուկեազի նմուշափորձը հիմնված է կաթի մեջ գտնվող ռեզուկտազա ֆերմենտի մի քանի որգանական ներկեզ նյութեր վերականգնելու ընդունակութիւն վրա, վորոնք այդ ժամանակ գունաթափվում են: Այդ մեթոդը կիրառելիս սովորաբար զործողըում են մետիլնըլաու, վորոշելով նրա լրիւ անգունացման ժամանակը: Վորքան կաթը հարուստ է բազակերիաներով, այնքան շատ կա նրա մեջ ռեզուկտազա և այնքան ազիլի շատ է գունաթափվում մետիլնըլաուն:

Այս մեթոդի կիրառման համար անհրաժեշտ գործիքներն են՝ ջրավազան իր ներդիրի հետ, սպիրտալամպ, փորձանոթներ, 20 և 0,5 խ սմ-անոց պիպետներ:

Ռեակտիվ—մետիլենբլաուի լուծույթ \*): Յեթե գործադրում են ասարելատիկներ, այդ դեպքում մեկ տարվատիկ լուծում են 200 խ սմ ջրի մեջ և վերցնում են 0,5 խ սմ լուծույթ 20 խ սմ կաթի համար:

Կատարումը. մաքուր յեռացրած փորձանոթի մեջ լցնում են 20 խ սմ կաթ և ավելացնում են 1,0 խ սմ մետիլենբլաուի լուծույթ, փորձանոթը դնում են 38—40° ջերմություն ունեցող ջրի մեջ և մշտապես հետևում են դուռնաթափվելուն: Ըստ դուռնաթափման արագության կաթը բաժանում են հետևյալ խմբերի. 1) յեթե կաթը դուռնաթափվել է մինչև 20 րոպե, այդ դեպքում կաթը պատկեր պատրաստելու համար պիտանի չէ, 2) 20 րոպեից մինչև 2 ժամում դուռնաթափվելու դեպքում՝ քիչ պիտանի չէ, 3) 2-ից մինչև 5 ժամում՝ պիտանի չէ, 4) 5 ժամից ավելի—միանգամայն նորմալ կաթ է:

Կաթի ռեդուկտագային փորձն սուսնաձևապես նստատեղանք-ժար և կատարել նրա յերկարատև տեղափոխության ժամանակ: Խմորման յեզ օրդանալումս փորձը. — Խմորման փորձը գաղափար է տալիս կաթի միկրոֆլորայի մասին, շրգանա-խմորման փորձը, բացի դրանից, ցույց է տալիս կաթի վերաբերմունքը շրգանա-ֆերմենտի նկատմամբ:

Այդ փորձերը կատարելու համար անհրաժեշտ են՝ շտատիլ փորձանոթների հետ միասին, ջերմաչափ, սպիրտի լամպ և ջրավազան:

Խմորման փորձը կատարվում է հետևյալ ձևով. կաթը լցնում են բարակ ապակյա ստերիլած փորձանոթի մեջ, ծածկում են կափարիչով կամ բամբակե խցանով և դնում են ջրավազանի մեջ խմորման համար՝ 38-ից վոչ ցածր և 40-ից վոչ բարձր ջերմա-տեժանում, վորը պահպանվում է սպիրտի լամպի միջոցով:

Ծանոթություն.— Խմորման փորձ կատարելիս սուսնաձևապես խնամ-քով պետք է հետևել փորձանոթներին մաքրությանն ու ստերիլությանը:

12 ժամ հետո փորձանոթները զննում են, ըստ վորում նորմալ կաթի մեջ տեսանելի փոփոխություններ չպետք է լինեն. 24 ժամ

\*) Մետիլենբլաուի լուծույթը պատրաստում են այսպես. մոտ 180 մգ մետիլենբլաու լուծում են 100 խ սմ 96°-ի էտիլալկոհոլի մեջ, ստացված խա-պեզը թողնում են մոտ 1—2 օր, ժամանակ առժամանակ թափահարելով, վոր-ձ 3 խ սմ խառնում են 195 խ սմ թորած ջրի հետ և ստանում են անհրաժեշտ լուծույթը, վորը կոչվում է Շարտինգերի լուծույթ:

հետո յերկրորդ անգամ զննելիս կատարում են թանձրուկի գնահատում ըստ նրա գրուած թյան և գնահատման վերաբերյալ գրանցումները կատարում են հետևյալ սխեմայով (Պետերի և Վիսամանի)՝

- Ա. Երկրայ  $\left\{ \begin{array}{l} Ա_1 - \text{Կաթիլ բոլորովին ջրիկ է, համը նորմալ.} \\ Ա_2 - \text{Սերի շերտի տակ մի քիչ շիճուկ կա.} \\ Ա_3 - \text{Կարվելու սկիզբը:} \end{array} \right.$
- Բ. Երկրայ  $\left\{ \begin{array}{l} Բ_1 - \text{Թանձրուկը համաշափ է, առանց շիճուկ արտադրելու.} \\ Բ_2 - \text{Թանձրուկում մի քանի շերտի՛ններ և դատարկ տեղեր շիճուկով լցված.} \\ Բ_3 - \text{Թանձրուկում դոլեր, դատարկ տեղեր, ճաքեր, թույլ կերպով արտադրվում են շիճուկ:} \end{array} \right.$
- Գ. Երկրայ  $\left\{ \begin{array}{l} Գ_1 - \text{Թանձրուկի կծկվելու սկիզբը, շիճուկը թույլ է անշատօճաճ.} \\ Գ_2 - \text{Թանձրուկը կծկվել է, շիճուկը կանաչավուն, թույլ թթվային.} \\ Գ_3 - \text{Թանձրուկը խիստ կծկվել է, թելանման է, շիճուկն սպիտակավուն:} \end{array} \right.$
- Դ. Երկրայ  $\left\{ \begin{array}{l} Դ_1 - \text{Թանձրուկը մանրահատիկ է, համարյա համաշափ.} \\ Դ_2 - \text{Թանձրուկը խոշորահատիկ է, արտադրվում է շիճուկ.} \\ Դ_3 - \text{Թանձրուկը բաղկացած է խոշոր փաթիլներից, շիճուկն անսորմալ է:} \end{array} \right.$
- ԱԵ. Երկրայ  $\left\{ \begin{array}{l} ԱԵ_1 - \text{Գաղի բշտիկներ սերի շերտում կամ թանձրուկի մեջ:} \\ ԱԵ_2 - \text{Թանձրուկն ամբողջապես բռնված է գաղի բշտիկներով.} \\ ԱԵ_3 - \text{Թանձրուկն ուռել է սպունգի նման:} \end{array} \right.$

Փորձանմուշի տիպը վորոշելուց բացի, առանձին յերեւոյթները նշվում են հետևյալ կերպ.

Կզ.—Կեղտոտ սեր կամ կեղտոտ նստվածք հատակում.

Բորբ.—Հատակի նստվածքը կովերի կրծի բորբոքումից է.

Մած. սեր.—Սերը մածական է.

Մած. շիճ.—Շիճուկը » »

Քաշն.—Ջրիկ նմուշն ունի դառն համ.

Հոտ.—Խիստ վատ հոտ, առանձնապես կեղտ պարունակող նմուշից կամ հիպոսֆոս ալեկոզ կովերի նմուշից:

Ա. տիպ—հեղուկ մմուշ—ցույց է տալիս, վոր կաթը լավ է, յեթե նա առի լավ համ ու հոտ

Բ. տիպ—ժելատինամման մմուշ—ստացվում է կաթը կաթնաթթվային բակտերիաների միջոցով կտրվելու ժամանակ:

Գ. տիպ—պահրամման մմուշ—ցույց է տալիս, վոր կաթը պարունակում է բազիլանին քանակությամբ շրջանափերմենտ արտադրող բակտերիաներ:

Կ. տիպ—փոքրիկման նմուշ—տառչանում են մանր փաթիլներ՝ կաթի վրա կաթնաթթվային բաղադրիչներն ազդելու հետևանքով, խոշոր փաթիլներ՝ շաքարասկերթի և շրջանաբաղադրիչների ազդեցութեան շնորհիվ:

Յե. տիպ—խմորվող նմուշ—ցույց է տալիս, վոր կաթի մեջ կան մեծ քանակութեամբ գազ առաջացնող բաղադրիչներ:

Մանորարքյուն.— Մեկ գծով նշվում են կաթի կապիտելի նմուշները, յերկու գծով՝ պանրագործութեան համար վտանգալիքները:

Շրգանա-խմորման փորձի ժամանակ նույնպիսի փորձանոթի մեջ, ինչպես վոր խմորման փորձի ժամանակ էր, կաթնային լցնում են կաթ՝ նրա մեջ շրգանային և բակտերիալ միջան լցնելուց և խառնելուց հետո անմիջապես, այնուհետև վարվում են այնպես, ինչպես խմորման փորձի ժամանակ:

Սրդյունքների դնահատման գրանցումները կատարում են հետևյալ (հինգ թվանշանային) սխեմայով (ըստ Հասամանի)

Շխ. 1— նորմալ պանրիկ, այսինքն՝ հարթ մակերեսով, շոշափելիս առած-բաղան է, յերկայնակի կտրվածքում աչքեր չունի, լոգում է թափանցիկ շիճուկի մեջ, վորը թևեր չի տալիս և գուն չէ:

Շխ. 2— պանրիկն սպունգանման է, շոշափելիս փափուկ է, ունի բազմաթիվ աչքեր:

Շխ. 3— պանրիկը կտոր-կտոր է յեղած:

Շխ. 4— խեղագես բորբոսի պանրիկ չկա. կաթը մակաբույսերու շատ թույլ ընդունակութեան ունի, փորձանոթում փաթիլմանման մասսա չէ, շիճուկը հաճախ պղտոր է:

Շխ. 5— պանրիկն ուռած է, շիճիկ յերես է բարձրացել, կտրված անգում խիստ սպունգանման է:

Մանորարքյուն.— Ինչպես և նախորդ տախտակում, մեկ գծով նշված են կապիտելի կաթի նմուշները, յերկու գծով՝ պանր պատրաստելու համար կապիտելի կաթի նմուշները:

Շրգանա-մեկադային փորձը.— Պանրագործութեան մեջ մեծ նշանակութեուն ունի կաթի վերաբերմունքը շրգանաֆերմենտին, վորովհետև շրգանամակարդային փորձը հնարավորութեուն է առջին հայտարարել շրգանամակարդի նկատմամբ վոշ նորմալ (սալաք-կորոս) կաթը:

Նորմալ կաթը, նրա մեջ վորոշ քանակութեամբ շրգանամակարդ մոցնելու դեպքում, ընդունակութեուն ունի վորոշ ժամանակամիջոցում 35° ջերմութեան տակ տառչացնել կապիտելից մեծ սերտ թանձրուկ, վորը կտրելու ժամանակ արտադրում է բաց կանաչ-դեղնավուն շիճուկ:

կատարումը. 50 ի սմ կաթ տաքացնում են ջրային ավազանի

վրա մինչև 35°. դրան տվելացնում են 1 խ սմ մակարդ՝ 10 բուպեյում մակարդվելու հաշվով, ինչպես նորմալ կաթը: Մակարդվելու տե-  
վողությունը վորոշվում է ճիշտ՝ բուպեներով ու վայրկյաններով՝  
մակարդը լցնելու մոմենտից մինչև առաջին փաթիլների առա-  
ջանալը:

Մակարդվելու տեղությունը ցույց է տալիս կաթի վերա-  
բերմունքը մակարդին: Բացի այդ՝ առաջին փաթիլները յերևա-  
յու մոմենտից 10 բուպե հետո գնահատում են թանձրուկի և շի-  
ճուկի վորակը՝ ըստ հետևյալ ցուցանիշների.

Կաթի պիտանիության աստիճանը	Թանձրուկի վորակը՝ փաթիլների առա- ջանալու մոմենտից 10 բուպե հետո
1-ին Շատ լավ . . . . .	Պինդ, իր ձևը չփոխող և բաց կա- նաչա-դեղնավուն շիճուկ արտադրող թանձրուկ:
2-րդ Կալ . . . . .	Թանձրուկը քիչ թույլ է, թույլ է պա- հում իր ձևը և թույլ է արտադրում շիճուկ:
3-րդ Բավարար . . . . .	Թանձրուկը թույլ է, վոչ կապակցված, իր ձևը փոխում է, արտադրվում է սպի- տակ դույնի շիճուկ:
4-րդ Անբավարար . . . . .	Թանձրուկը կապակցված չէ, սպիտակ շիճուկի մեջ լողում են փաթիլներ:
5-րդ Վատ . . . . .	Նկատվում են թանձրուկի առաջացման միայն թույլ նշաններ՝ ջրիկ փաթիլնե- րի ձևով:

Հավաքածո կաթի ղեպըում 4-րդ խումբը պետք է համարել  
պանրագործության համար կասկածելի:

### 6. ԿԱԹԻ ԱՐԱՏՆԵՐԸ

Տեխնոլոգիայի տեսակետից կաթի արատներ ստելով հաս-  
կանում ենք նորմալ հատկություններից կատարվող այնպիսի  
շեղումներ, վորոնք նրան դարձնում են քիչ պիտանի կամ ըլո-  
րովին անպետք ավյալ արտադրության համար: Այդ արատները  
բաժանվում են յերկու խմբի՝ 1) ըստ ծագման—վորոնք հատուկ  
են կաթին արդեն կրծից դուրս գալու մոմենտից և 2) վորոնք  
հիմնականում ծագում են միկրոբիոլոգիական պրոցեսներից:  
Առաջինները ծագում են կովի և կրծի հիվանդություններից,  
յերկրորդները՝ կաթը արտադրվող մթերքի համար վտանգավոր  
միկրոօրգանիզմներով վարակվելու հետևանքով:

7102583  
A II  
35956



Արատի անունը	Արատը ճանաչելը	Արատի ծագումը	Կտփի պահ- րողներու հիսկյան ասփոսնք
--------------	----------------	---------------	---

Ա. Կ տ ք ի ա ր ա տ ն ե ր ճ « ը ս ս ծ ա գ մ ան »

1. Դալ (խիժ)	Կաթը դեղին է, կաշուն, տեսակարար կշիռը 1,034-ից բարձր, տաքացնելիս կտրվում է.	Կովերի ծնից հետո	Անպետք է՝ կովի ծնելուց հետո մինչև 8—10 օր
2. Կաթը շո- ռանման փաթիլնե- րով	Քամիչի վրա մնում են շոռանման կտորներ. սե- րակալման ժամանակ դե- ղին շոռանման նստվածք.	Կրծի բորբոքումից, կա- տարից, պալարախտից.	Անպետք է
3. Աղի կաթ	Աղի համ, ցածր թթվու- թյուն, մակարդի հան- դեսպ ալարկոտ է.	Կրծի հիվանդություն, կովը ԼԵԻՎ չի կթվում.	Անպետք է
4. Կաթն ա- լարկոտ է շրդանա- մակարդի հանդեսպ	Թույլ թանձրուկ, հատի- կի չորացումը դանդա- ղում է, պանիլը մամ- լելիս շիճուկը վատ է անջատվում.	Սնկերցլալի անոմալիա, սակաջն կաթնազեղվելը չեն ցալում.	Վտանգա- վոր է
5. Արյունոտ կաթ	Կաթը կարմիր է կամ կարմիր յերակիկներով, սերակալման ժամանակ կարմիր նստվածք անո- թի հատակին.	Կրծի մլասավածքներից, կովերին ճահճային բույ- սերով կերակրելուց.	Վտանգա- վոր է
6. Դաբաղի կաթ	Լորձային, արյունոտ, դեղին. բամիչի վրա մնում է փառ.	Դաբաղով հիվանդանալը.	Անպետք է

Բ. Կ տ ք ի բ ա կ տ ե ր ի ա լ ծ ա գ ու մ ու ն ե ն ց ո գ ա ր ա տ ն ե ր ճ.

7. Արագ թթվող կաթ	Նոր կթած կաթը 12 ժամ հետո 20° ջերմության տակ սկսում է թթվել.	Կաթի մեջ կան չափա- դանց մեծ քանակությամբ կաթնաթթվային միկրոբ- ների՝ կեղտոտ ամաննե- րից, կովերը կեղտոտ կթելուց, չպղեցրած կա- թը յերկար տաքածու- թյուն փոխադրելուց.	Անպետք է
-------------------------	--	--	----------

Արտատի անունը	Արտադր հանաչելը	Արտադր ծագումը	Կարի պահ- րապիսանիու- րյան ասի- նանք
8. Երկու- վածք կաթ	Խմորման նմուշի մեջ արագ կերպով յերևում են գազադոյացումներ, փաթիլանման լերթ.	Կովերին փչացած և թթվեցրած կերեր կերց- նելը, վորի հետևանքով կովերի մարսողութունն անկանոն և դառնում.	Անպետք է
9. Մածական կաթ	Յերեսին կանգնած սերը ձգվում և յերկար թելերի նման.	Կաթը վարակված և սերի մեջ լորձնացում առաջաց- նող բակտերիաներով.	Վտանգա- վոր է
10. Գառը կաթ	ա) Նոր կթած կաթը քիչ ժամանակ անց ստանում է դառը համ բ) կովը կթելուց անմի- ջապես հետո կաթն ունի դառը համ.	Կաթին դառը համ տվող միկրոօրգանիզմներից.  Կերերից	Վտանգա- վոր է  Անպետք է
11. Խմորման նմուշի մեջ կաթն ունի մա- ծական շիճուկ	Խմորման նմուշի մեջ փոր- ձանոթից թափելիս շիճու- կի մեջ նկատվում է մա- ծականութուն. պանիրը մամլելու ժամանակ ան- ջատվում և լորձային մա- ծական շիճուկ.	Անորմալ կաթնաթթվա- յին խմորում՝ լորձ առա- ջացնող բակտերիաների մասնակցութեամբ.	Վտանգա- վոր է
12. Կաթն ա- ռաանձ- նապես արամա- դիր և յու- ղաթթվա- յին խմոր- ման	Գանիրներն աղելու ժա- մանակ և հետագայում ուռչում են, ունեն ճար- պահամ.	Կաթը վարակվում է կաթ- նաշարարից կամ կաթ- նաթթվի աղերից յուղա- թթու և գաղեր առաջաց- նող միկրոօրգանիզմով.	Անպետք է
13. Կծված կաթ	Նոր կթած կաթն արագ կերպով ստանում է կծված թուղի համ ու հոտ.	Հաճախ լինում է մողա- մեր կովերի և հիվանդ սեռական օրգաններ ունե- ցող կովերի կաթը: Ճիշտ ծագումը դեռևս չի պարզ- ված.	Վտանգա- վոր է
14. Կաթն ու- նի կողմ- նակի համ ու հոտ	Նոր կթած կաթը 35° Ց. ջերմութեան ժամանակ ունի աննորմալ կողմնակի համ և հոտ.	Մեծ մասամբ կերերից կամ գոմից.	Կասկածե- լի չէ

Վերոհիշյալ արատներն ունեցող կաթը բողբոջվին չի կարելի, կամ դժվարությամբ կարելի չեն ուղղել, գլխավորապես պատճառը զայնքա՛յն միջոցով, սակայն վերջինն իր հերթին կաթի մեջ մտցնում և մի քանի փոփոխություններ, վորոնք վոչ բողբոջվին բարենպաստ կարող են աղբել եմմենթալ պանրի համի, խմորի ու նկարի վրա: Ամենամիշտը և ամենակենդանավորը կլինի վերացնել այն պատճառները, վորոնք առաջացնում են կաթի ախտները: Իսկ կաթը գործարան ընդունելիս անհրաժեշտ և այն խիստ կերպով տեսակավորել և պանիր պատրաստելու համար վոչ պիտանի կաթից պատրաստել կարգը:

## 7. ԿԱԹԻ ՀԱՍՈՒՆԱՆԱԼԸ

Ընդհանրապես պանրի, առանձնապես եմմենթալ պանրի կաթը պետք և ունենա այն բոլոր հատկությունները, վորոնցով պայծանավորված և բարձրորակ մթերքի ստացումը: Կաթի այդ հատկությունների շարքում առանձնապես կարևոր նշանակություն ունի նրա մեջ հիմնապատասխան միկրոֆլորա լինելը:

Թարմ կաթը, վորի մեջ դեռևս բավարար չափով չեն դառնալ կաթնաթթվային բակտերիաները, չի կարելի անմիջապես ոգտագործել պանիր պատրաստելու համար: Թարմ կաթի այդ պակասությունը կարելի չեն ուղղել կաթի մեջ համապատասխան դոզայով մաքուր կուլտուրաներից պատրաստված բակտերիալ մակարդ մտցնելով, սակայն այս միջոցը միշտ էլ բավարար չի լինում, վորովհետև ըստ յերևույթին կաթի մեջ պետք և տեղի ունենան վորոշ ֆիզիկոքիմիական փոփոխություններ, վորոնք հնարավոր են այն բավական յերկար ժամանակ պահելիս:

Արտագրություն անհրաժեշտ միկրոֆլորայով (գլխավորապես կաթնաթթվային բակտերիաներով) հարուստ և վորոշ ֆիզիկոքիմիական փոփոխությունների յենթարկված կաթով ապահովելու համար եմմենթալ պանրագործության մեջ կիրառվում և հետևյալ մեթոդը.

Թարմ կաթի մի մասը՝ վերամշակման համար վերցրածի 15—25<sup>0</sup>/<sub>10</sub>-ի չափով, պահվում և մի վերամշակումից մինչև ժրուար մինչև 12 ժամ՝ հատուկ կահավորված կաթնապահեստում, 10—12<sup>0</sup> Ց. Ղերմաստիճանում: Այդպես պահելիս նորմալ կաթի սովորական թթվությունը թյորների 17—18<sup>0</sup>-ից բարձրանում և մինչև 18—19<sup>0</sup>: Կաթնապահեստը պետք և ապահովված լինի լավ

վենտրիլիտացայով մաքուր թարմ ողի ներկայությունը պարտադիր պայման է, վոր հասունացումը ճիշտ ընթանա, ընդլորում կաթը պետք է վերցնել ամենամոտ կետերից և վոչ թե հեռու տեղից բերածից:

Ամառը գործարան բերվող բարձր ջերմաստիճան տևեցող կաթից հասունանալու համար վերցրածը պետք է պահեցնել մինչև 15—16°. կաթնապահեստում նրա ջերմաստիճանը կիջնի մինչև 10—12°. Այդպիսի պայմաններում պահված կաթը կոչվում է «հասուն» կաթ:

Պահելու ժամանակ կաթի յերեսին կանգնած սերը կարելի է կամ ամբողջովին ոգտագործել պանիր կամ յուղ պատրաստելու համար, կամ նրա մի մասը միայն ոգտագործվում է պանրի համար այն քանակով, վորքան անհրաժեշտ է 3,2—3,3% յուղալիություն ունեցող խառնուրդ պատրաստելու համար: Հասուն կաթն այդպես մասնակիորեն յուղազուրկ անելը փոխարինում է սերզատումը սեղարատորով, վոր անցանկալի չէ եմմենիալ պանրագործության մեջ:

### Ց. ՊԱՆՐԻ ՅՈՒՂԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽԱՌՆՈՒՐԴ ԿԱԹԻ ՅՈՒՂԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼԸ

Պանրի յուղալիությունը. — Պանիրների յուղալիությունը նշելիս ցույց է տրվում յուղի պարունակությունը վոչ թե նրա ամբողջ մասայի մեջ, այլ միայն չոր նյութի, իսկ ջրի պարունակությունը՝ պանրի ամբողջ մասայի մեջ:

Եմմենիալ պանրի մեջ ըստ ստանդանտի պետք է լինի՝

Յուղ՝ պանրի չոր նյութի մեջ 50% -ից վոչ պակաս, ջուր՝ 40% -ից վոչ ավելի:

Առանձին գեպքերում, յերբ կարիք է լինում պանիր պատրաստել մասամբ յուղազուրկ յեղած կաթից, խառնուրդ կաթի յուղի % -ը կարելի չէ սահմանել հետևյալ կերպ. 1) Հերցի ֆորմուլայի միջոցով\*).

Որիմակ՝

$$M = \frac{100 \times \varphi}{a}$$

Վորանդ  $M$  — անարատ կաթի քանակը տոկոսներով՝ ամբողջ խառնուրդից.  $\varphi$  — յուղի պարունակությունը խառնուրդի մեջ,  $a$  — յուղի քանակն անարատ կաթի մեջ.

\* ) Այս ֆորմուլայի մեջ նկատի չի առնված քաշած կաթի միջի յուղի քանակը:

$$M = \frac{100 \times 3,2}{4,0} = 80\% \text{ անարատ կաթ, } 20\% \text{ քաշած կաթ.}$$

Յեթե ընդունենք քաշած կաթի մեջ յեղած յուղը  $0,1\%$  այդ դեպքում կստանանք՝ անարատ կաթ  $79,5\%$ , քաշած կաթ՝  $20,5\%$  տարբերությունը չնչին է:

Հերցի ֆորմուլայով պատրաստված խառնուրդը կպարունակի յուղի վորոշ ավելցուկ, բայց այդ ավելցուկը յերաշխիք կտա այն մասին, վոր նույնիսկ շիճուկի մեջ յուղի քանակը մեծանալու դեպքում, վորը հնարավոր է պանրի պատրաստման տեխնիկայում պատահող սխալների դեպքում, պանրը կունենա անհրաժեշտ յունդակիությունը:


Յեթե նկատի ունենանք նաև քաշած կաթի մեջ յեղած յուղը, այդ դեպքում ավելի հարմար է ոգտագործել «Պիրսոնի քառակուսին»: Չախ կողմում՝ քառակուսու վերևում գրվում է յուղապուրկ յեղած կաթի յուղի տոկոսը տաս անգամ մեծացրած  $0,1 \times 10 = 1$ , ներքևում՝ անարատ կաթինը՝  $3,3 \times 10 = 33$ , մեջտեղում ցանկալի յուղի տոկոսը կաթի խառնուրդի մեջ՝  $2,5 \times 10 = 25$ : Ապա դիագոնալով հաշվում են կաթի խառնուրդի (25) և քաշած կաթի (1) և անարատ կաթի (33) յուղի տոկոսների տարբերությունը և ստացվում է աջ կողմում՝ վերևում՝  $33 - 25 = 8$  և  $25 - 1 = 24$ , վորը նշանակում է 8 մաս քաշած կաթ և 24 մաս անարատ կաթ: Յեթե ընդունենք, վոր ամբողջ խառնուրդը պետք լինի 800 կգ, ապա կստանանք՝

$$\frac{800 \times 24}{32} = 600 \text{ կգ անարատ կաթ,}$$

$$\frac{800 \times 8}{32} = 200 \text{ կգ քաշած կաթ}$$

Ընդամենը 800 կգ խառնուրդ:

«Պիրսոնի քառակուսիով» ոգտվելիս հնարավոր է կազմել նաև բարդ խառնուրդներ, որինակ՝ ունենք միառժամանակ մնացած մասամբ յուղահան յեղած յերեկոյան կաթ  $1,7\%$  յուղով, առավուտյան կաթ՝  $3,45\%$  յուղով և քաշած կաթ՝  $0,1\%$  յուղով: Խառնուրդը պետք է ունենա





0,9%/0, Յերեկոյան կաթ կա 160 կգ, խառնուրդ կաթ պետք է լինի 1000 կգ:

Սկզբում կազմվում է խառնուրդ յերեկոյան կաթից և քաշած կաթից (I քառակուսի), իսկ հետո առավոտյան անարատ կաթից և քաշած կաթից (II քառակուսի)

I քառակուսի

II քառակուսի



Հետևաբար յերեկոյան կաթը պետք է խառնվի հաժաար քանակությամբ քաշած կաթի հետ, այսինքն՝

$$\frac{160 \times 8}{8} = 160.$$

այսպիսով առաջին խառնուրդից կտացվի 320 կգ: Յերկրորդ խառնուրդը մնացած 680 կգ-ից պետք է կազմված լինի (ըստ II քառակուսու) հետևյալ կերպ՝

$$\frac{680 \times 8}{33,5} = 163 \text{ կգ անարատ կաթ,}$$

$$\frac{680 \times 25,5}{33,5} = 517 \text{ կգ քաշած կաթ,}$$

իսկ ընդամենը ըստ I քառակուսու՝  
 յերեկոյան կաթ . . . . . 160 կգ  $\times 1,7 = 272,0$  միավոր յուղ  
 քաշած . . . . . 160 »  $\times 0,1 = 16,0$  » »


Ըստ II քառակուսու՝

անարատ կաթ . . . . . 163 կգ  $\times 3,45 = 561$  միավոր յուղ  
 քաշած . . . . . 517 »  $\times 0,1 = 51$  » »


Ընդամենը . . . . . 1000 կգ  $\times 0,9 = 900$  միավոր յուղ:

Իսկ յեթե խառնուրդի յուղի տոկոսը կլինի մոտավորապես 2,5, իսկ յերեկոյան կաթի յուղի տոկոսը՝ 1,7, այսինքն՝ խառնուրդի յուղի տոկոսից պակաս, այդ դեպքում ոգտվում են հետևյալ սխեմայով.

I քառակուսի



II քառակուսի



Սկզբում կազմվում է խառնուրդ յերեկոյան կաթից, վորից կա 160 կգ և առաժոտոյան կաթից (I քառակուսի), ապա առաժոտոյան կաթից և քաշած կաթից (II քառակուսի): Ամբողջ խառնուրդը պետք է լինի 1000 կգ:

Առաջին քառակուսու մեջ ձախ անկյունում քաշած կաթի փոխարեն տրվում է յերեկոյան կաթի յուզի տոկոսը, հետևաբար ստանում ենք՝

$$\frac{160 \times 8}{9,5} = 135 \text{ կգ առաժոտոյան կաթ, վորը } 160 \text{ կգ}$$

յերեկոյան կաթի հետ ընդամենը կկազմի 295 կգ:

1000 կգ խառնուրդից հանվում է 295 կգ, մնում է 705 կգ:

Այսպիսով II քառակուսու համաձայն ստանում ենք՝

$$\frac{705 \times 2,1}{33,5} = 505 \text{ կգ առաժոտոյան կաթ և } 200 \text{ կգ } (705 - 505 = 200)$$

քաշած կաթ, իսկ ընդամենն ըստ յերկու քառակուսու՝

Յերեկոյան կաթ . . . . .  $160 \times 1,7 = 272$  միավ. յուզ


Առաժոտոյան »  $135 + 505 = 640 \times 3,45 = 2208$  » »

Քաշած կաթ . . . . .  $200 \times 0,1 = 20$  » »

Ընդամենը  $1000 \times 2,5 = 2500$  միավ. յուզ

Յեթե կազմված խառնուրդի մեջ յուզի տոկոսը պահանջվածից ցածր կլինի, այդ դեպքում պահասորդը լրացվում է սեր ավելաբար:

Որինակ՝ կազմված է 1000 կգ խառնուրդ 2,4%-ով, պահանջվող 2,5-ի փոխարեն. սերի յուզաբաժնի յուզը 28,0% է: Սխեման հետևյալն է՝



Վերևում՝ ձախ անկյունում սերլի յուզի տակոսը, ներքևում խառնուրդի յուզի տակոսը՝ 2,4, մեջտեղում—խառնուրդի անհրաժեշտ յուզի<sup>0</sup>/օ-ը 2,5, մեծացրած 10 անգամ,  
ստանում ենք՝

$$\frac{1000 \times 1}{255} = 3,92 \text{ կգ սերլ}$$

Վերջը կազմում է՝

սեր . . . . .	3,92 × 28 = 109,7 միավ. յուզ
խառնուրդ . . . . .	1000 × 2,4 = 2400 » »
Ընդամենը	1003,9 × 2,5 = 2509,7 միավ. յուզ:

Սույուզորդուչաը բաց և թողել հատուկ շարժական հաշվետախտակ № 2112 ստանդարտ պանիրներ արտադրելիս խառնուրդներ կազմելու համար: Այդ տախտակից հեշտույթյամբ կարող և ոգտվել վոչ միայն վարպետը, այլ և քրեժարանի վարակափորժած բանվորը և գրանից պետք և ունենա յուրաքանչյուր վարպետ և վարպետի ոգնական:

## 9. ԿԱԹՍԱՆ ԼՅՆԵԸ ՅԵՎ ԿԱԹԸ ՏԱԲԱՅՆԵԸ՝ ՄԱԿԱՐԴԵ-ԼՈՒ ԶԱՄԱՐ՝

Կաթը պետք է տաքացնել շրդանամակարդով մակարդելուց անմիջապես առաջ: Կաթսայի մեջ կաթ լցնելիս և այն տաքացնելիս կարող են լինել հետևյալ դեպքերը:

1. յեթե պանիր պատրաստելու համար ոգտագործում են թարմ կաթ (հենց նոր կթած), առանց ավելացնելու հասած կաթ, այդ դեպքում կաթսան լցնելու մոմենտից իսկույն սկսում են այն տաքացնել:

2. յեթե պանիր պատրաստելու համար ոգտագործում են հասած կաթ, իսկ նրանից վերցրած սերլից պատրաստում են յուզ, այդ դեպքում սկզբում կաթսայի մեջ լցնում են թարմ կաթ, ապա լրացնում են անհրաժեշտ քանակությամբ հասուն յուզազուրկ յեզած կաթով, վորից հետո տաքացնում են:

3. յեթե պանիր պատրաստելու համար ոգտագործվում է հասած կաթ, իսկ նրանից վերցրած սերը նույնպես ամբողջովին կամ մասամբ ոգտագործվում և պանրի համար, այդ դեպքում վարվում են այսպես. սկզբում կաթսայի մեջ լցնում են սեր, ապա ավելացնում են նրանից 6—7 անգամ շատ թարմ կաթ և խառնուրդը տաքացնում են մինչև 46°: Տաքացնելուց հետո լցնում են յուզազուրկ կաթ և կաթսան լրացնում են թարմ կաթով, սահմանելով մակարդման համար անհրաժեշտ քերմաստիճանը:

Այդ տաքացման նպատակն է քայքայել սերի մեջ առաջա-  
ցած յուղի զնդիկների կույտիկները, այլապես մակարդման ժա-  
մանակ այդ զնդիկները հեշտությամբ բարձրանում են կաթի յե-  
րեսին և մակարդածուի յերեսին կազմում յուղի շերտ, իսկ այդպիսի  
շերտ առաջանալու դեպքում շիճուկն ավելի յուղալի յե լինում,  
վորի հետևանքով էլ պանրի յելքը սլակասում է:

Վերոհիշյալ ջերմաստիճանում սերը պետք է հեշտությամբ  
և լրիվ կերպով հալվի: Յնթե սերը կամ նրա մի մասը չի հալ-  
վում, այդ նշանակում է, վոր կաթը գերհասունացել է կամ սե-  
րը փչացել է և և այդ դեպքում պետք է միջոցներ ձեռք առնել  
ապագայում այդ պակասությունը վերացնելու համար: Ջերմաս-  
տիճանը Յ-ի 46°-ից ավելի բարձրացնելն անողուտ է, միևնույն  
է, սերը չի հալվում, իսկ ջերմաստիճանը 46°-ից վեր բարձրաց-  
նելը վատ կազդի կաթի մակարդվելու և թանձրուկի վրա:

Նմանեքալ սրանի պատճառման ժամանակ մտիարդվելի՛ կտրի  
ջերմաստիճանը սառանվում է Յ-ի 31—33°-ի սահմաններում:

## 10. ԵՐԴԱՆԱՄԱԿԱՐԴԸ ՅԵՎ ԿԱԹԻ ՄԱԿԱՐԴՎԵԼԸ

Երդանամակարդի ազդեցության էյությունն այն է, վոր  
կաթին ավելացրած շրդանաֆերմենտն ազդում է կազեյինի մաս-  
նիկներին վրա և տրոհում է նրանց ավելի մանր մասնիկների՝  
չխախտելով նրա մոլեկուլները: Ենորհիվ կաթի մեջ գտնվող կալ-  
ցիումի աղերի և թթուների, կազեյինի տրոհված մասնիկների մի  
մասը կալցիումի հետ միասին նստվածք է տալիս թանձրուկի  
ձևով: Կալցիումի հետ նստած կազեյինը կազմում է պանրի զանգ-  
վածը—կալսին և կոչվում է «պարակազեյին», ըստ էյության  
չտարբերվելով կազեյինից: Այսպիսով շրդանաֆերմենտի ազդե-  
ցությունը կաթի վրա ավելի շուտ ունի ֆիզիկական բնույթ,  
այսինքն՝ ինչպես վերևում հիշեցինք, նա սպիտակուցի մասնիկ-  
ները տրոհում է ավելի մանր մասերի:

*Երդանամակարդային պանրներն արտադրության ժամա-  
նակ ռզաագործվող շրդանամակարդը լինում է ինքնարուր—հե-  
զուկ գրությամբ և գործարանային արտադրության՝ թե հեղուկ  
և թե փոշի գրությամբ:*

Երդանաֆերմենտը գտնվում է վորոճողների ստամոքսի մեջ,  
հատկապես շրդանի մեջ: Առանձնապես ֆերմենտով հարուստ են  
յերիտասարդ, անարատ կաթով սնված անասունների ստամոքս-  
ները:

ՇրՂանը վորոճող կենդանիներէ ստամոքսի չորրորդ բաժանմունքն եւ Ոգտագործում են գլխավորապես հորթի շրՂանը, բայց կարելի յե ոգտագործել նաև ուլերի և գառների շրՂանը: Ամենալավ շրՂանն ստացվում է 3—4 շաբաթական հասակի հորթերէց, վորոճը կերակրված են բացառապես անարատ կաթով:

Մորթելու համար նշանակված հորթերին պետք է մորթել քաղցած ժամանակ, վորովհետև այդ դրութեան ժամանակ շրՂանում աղելի շատ ֆերմենտ է լինում: Ստամոքսից կտրում—հանում են չորրորդ բաժանմունքը—շրՂանը, նրա պարունակութունը, վոր նման է կտրված կաթի, հեռացնում են, բայց շրՂանը չեն լվանում: Կտրված տեղերից մեկի ծայրը կապում են բարակ թուղով, մյուս ծայրից խողովակի միջոցով շրՂանի ներսը փչում են ոդ, ծայրը կապում են և շրՂանն այդ դրութեամբ չորացնում են արևի ուղղակի ճառագայթներից պաշտպանված տեղում:

Լավ շրՂանը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

1. շրՂանը պետք է լինի համաչափ բաց-դեղնավուն: ՇրՂանի մութ գույնը ցույց է տալիս, վոր հորթը մեծ հասակի յե յեղել և բացի կաթից ստացել է կոպիտ կեր. շրՂանը չպետք է լինի թափանցիկ, այդ ցույց է տալիս, վոր նա լվացված է ջրով.

2. շրՂանի վրա չպետք է լինեն կարմրավուն և կապտադուն բծեր և շերտիկներ. այդ վերջինները ցույց են տալիս հորթի հիվանդ լինելը (փորլուծ և այլն).

3. շրՂանը պետք է ունենա նորմալ հոտ. նեխածութեան, խոնավութեան և այլ հոտեր չպետք է ունենա. վերջին հոտերից լինելու դեպքում նշանակում է, վոր շրՂանը բավարար չափով չի չորացել և պահվել է վատ պայմաններում.

4. շրՂանը չպետք է լինի չափազանց մեծ և ճարդոտ. շրՂանի մեծութունը և ճարպի ներկայութունը ցույց են տալիս, վոր շրՂանը վերցված է ուժեղ կերակրված հորթերից, ըստ վորում **վոչ մենակ կաթով, այլև ուրիշ կերերով: Եման քրճանները քիչ ֆերմենտ են պարունակում և նրանց ճարպից մաքրելը դժվար է:**

ՇրՂանները պետք է պահել մաքուր արկղներում կամ փոքր տակառներում՝ չոր գով տեղում:

Ինքնարուր հեղուկ մակարդ պատրաստելիս չպետք է շատ թարմ շրՂան գործադրել. ամենից լավն է այն գործածել պատրաստման մոմենտից 5—6 ամիս հետո, վորովհետև թարմ շրՂան-

ներից ստացվում և անդադրեցան հոտ ունեցող, լորձնոտ մակարդ, շրդանը՝ թրջոց գնելու ժամանակ, հեղուկի յերեսն և դուրս գալիս, մակարդը հեշտությամբ և խմորվում:

Գործադրելուց առաջ շրդանները յինժարկվում են վորոշ վերամշակման, այն է՝ ծայրերը կտրում և բոլորովին հեռացնում են, վորովհետև այդ մասը պարունակում և քիչ ֆերմենտ, բայց շատ ֆրասակար միկրոորգանիզմներ—գազեր առաջացնողներ և այլն: Շրդանի արտաքին մակերեսից քերվում—հանվում և ճարպի շերտը, արյան անոթները, կեղտը և այլն:

Քանի վոր տարբեր հորթերի շրդանները միատեսակ ուժի և հաժաժար քանակությամբ ֆերմենտ չեն պարունակում, ուստի աճելիք կամ պակաս միատեսակ ուժ ունեցող մակարդ ստանալու համար հատուկ յեզանակ են դործադրում. մի քանի շրդանից պատրաստում են խառնուրդ՝ յերշիկի, գնդիկների կամ արիշտայի ձևով: Ամենից աճելի հաճախ շրդանները պատրաստվում են յերշիկի ձևով:

Յեօթիկ համար ընտրում են աճելի խոշոր շրդաններ և դրոփց մաքրելուց և ծայրերը կարելուց հետո յերկարությամբ կտրատում են, փոթերը բաց անում—ուղղում են և և շերտ-շերտ սեղանի վրա դարձում են այնպես, վոր իրար վրա զրգած շրդանների նեղ և լայն ծայրերը հերթով իրար վրա ընկնեն: Ծայրերի այսպիսի հերթագայության մեջն և յերշիկի պատրաստման ամբողջ իմաստը—շրդանի նեղ մասում ֆերմենտ քիչ կա՝ լայնում աճելի շատ, իսկ շրդանների կտրված առանձին բաժիններն այդպես հերթով իրար վրա գնելով մակարդի ուժը հաժաժարվում և:

Շրդանները պետք և լինեն չոր, այլապես յերշիկի մեջ կարող և առաջանալ բորբոս: Յեցից պաշտպանելու համար շրդանների շերտերի վրա պղպեղ են դանում: Շերտը վորտում են վորքան կարելի յե ամուր և ստանում յերշիկ, պինդ կապում են շոգազատով և պահում են չոր հով մութ սեղ: Մոտ 4 սմ հաստությամբ, մոտ  $\frac{1}{2}$  մետր յերկարությամբ յերշիկ սովորաբար պատրաստում են 20—30 շրդանից (վորքան շատ, այնքան լավ) և հարկ յեզած չափով կտրտում են: 100 կգ կաթի համար պահանջվում և միջին հաշվով 2 գր լավ շրդան:

Գնդիկների համար շրդանները կտրտում են զոլ-զոլ՝ մոտավորապես  $\frac{3}{4}$ —1 սմ լայնությամբ: Մեկ դյուսիս կտրտած շրդանների չափացնում են 30 գր ազ և լավ խառնում են, ապա լցնում են  $\frac{1}{2}$  լիտր շոտտե և նորից բոլորը միասին լավ խառնում են, ապա

այդ կարտվածքը կշռում են փոքր բաժիններով՝ ավելի գործարանի կաթի քանակին համապատասխան՝ 10, 15 և 20-ական գրամ: Կշռված բաժիններից գնդիկներ են պատրաստում և չորացնում (վատ չորացված գնդիկները կարող են բորբոսանել և հոտել):

Մաքեռայի համար շրդանները կտրտում են նեղ (արիշտացի նման) շերտերի, վորոնք լավ խառնում են և պահում սառչոտ արկղի մեջ կամ մաքուր պինդ տոպրակի մեջ, չոր անդում: Չեաք յեղած ժամանակ կշռում են և գործածում:

Շրդանն իբրև միկրոֆլորայի աղբյուր՝ մակառոֆի կամառ. — Շրդանի ազդեցութեւնը միկրոֆլորայի վրա շատ ուժեղ կերպով կախված է նրա թրջոց դնելու յեղանակից՝ մակառոֆի պատրաստման ժամանակ:

Շրդանները կարճ ժամանակ ջրում կամ շինուկի մեջ թրջոց դնելիս կամ յերկար ժամանակ սառը տեղ պահելիս միկրոֆլորայի այդ ազդուրը համարյա նշանակութեւն չունի:

Ջրի մեջ թրջոց դնելու դեպքում ստեղծվում են այնպիսի պայմաններ, վորոնք կաթնաթթվային բակտերիաների (*Streptococcus lactis* և *Bact. casei*) զարգացման հնարավորութեւնը համարյա զերույի յեն հավասարեցնում՝ շաքարի բացահայտութեւն պատճառով: Մինչդեռ միկրոֆլորանի մյուս խմբերը և այդ թվում *Coli aërogenes*-ի (ընդհանրապես վոչ պահանջկոտ) խումբն առաջացած թրջոնքի մեջ գտնում են իրենց զարգացման համար բարենպաստ պայմաններ: Դրա հետեանքով ստացվում է շատ անբարենպաստ, ֆսասակար միկրոֆլորա ունեցող մակարդ:

Հենց այդ և մակարդը ջրով պատրաստելու վտանգը և գրանից պետք է ամեն կերպ խուսափել:

Յերկար ժամանակ բարձր ջերմաստիճանում (30—32°) շինուկի մեջ թրջոց դնելու դեպքում շրդանի նախնական միկրոֆլորան մեծ չափով ավելանում է և խիստ կերպով քախվում է նրա կազմը՝ հոգուտ կաթնաթթվային բակտերիաների շատանալուն: Նման մակարդ գործադրելիս (2—3 լիտր՝ 1000 և կաթի համար) կաթն գզալի չափով հարստանում է միկրոֆլորով:

Սորհուրդ է տրվում եմմենթալ պանիր պատրաստելիս գործադրել 1,5—2 օրական (վոչ պակաս), 28—30° պահած մակարդը:

ԻՆՔՆՍՐՈՒՐ ՄԱԿԱՐԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵՂԱՆԱԿԸ

Ինքնարուր մակարդի պատրաստման համար պահանջվում է հետևյալը.

1. լավ վորակի շրդաններ, վորոնք պահված են վոչ պակաս քան 5—6 ամիս՝ նրանց պատրաստման մոմենտից և դրսից մաքրված են.

2. շոտոն—թափանցիկ կանաչ-դեղնագույն շինուկ, վորից պուքա և հանված արուսիներ.

3. կազով շոտոնն թթվեցնելու համար: Կազովը մի պրեպարատ է, վորը բաղկացած է մի քանի թթուներից. այն կարելի չէ փոխարինել 50% անի քացախաթթվով:

4. պանրի ցուպիկի (Bact. casei) մաքուր կուլտուրա ստացվում է բակտերիոլոգիական լաբորատորիաներից.

5. աղ և յեռացրած, ապա պղղեցրած ջուր:

**Շոտեյով պատրաստվող մակարոններ.** — 1. Շրդանի թրջոց դնելը շոտոնյի մեջ՝ առանց ուրիշ նյութեր ավելացնելու: Շոտոնն վարակվում է բակտերիաներով շրդանից և մակարդման անոթից, վորի մեջ պատրաստվում է մակարդը: Չի բացասվում շրդանից աղիքային ցուպիկի բակտերիաներով վարակվելու հնարավորությունը:

2. Շրդանների թրջոց դնելը շոտոնյի մեջ՝ ավելացնելով կազով կամ 50% քացախաթթու (1 լիտր շոտոնյին 0,5—0,7 թ սմ) շոտոնն թթվեցնելու համար: Շոտոնն թթվեցնելու դեպքում կանգ է առնում աղիքային ցուպիկների զարգացումը:

3. Շրդանների թրջոց դնելը շոտոնյի մեջ՝ ավելացնելով լաբորատորիայում պատրաստած պանրի ցուպիկի մաքուր կուլտուրա: Պանրի ցուպիկի կուլտուրան ուժեղ կերպով խանգարում է նում մակարդի մեջ:

Մակարդի պատրաստման մեթոդները՝ այն հաշվով, վոր 1000 ր կաթը մակարդի 30 րոպեյում (1,5—2 ր մակարդ) հետեյուլներն են.

**Մակարդ № 1.**—Վերցնում են 20—25 գր շրդան, կտրտում են մանր կտորների, լցնում են մակարդման ամանի մեջ և թրջում են 30 գր աղ պարունակող 0,3 լիտր յեռացրած և պղղեցրած ջրով, թողնում են վոր աջդպես մնա 4—5 ժամ, ապա ավելացնում են 1,5—2 լիտր շոտոն 30° ջերմությամբ և պահում են տերմոստատում 36—40 ժամ 28—30° ջերմաստիճանում:

**Մակարդ № 2.**—Նույն յեղանակն է, ինչ № 1 մակարդի դեպքում. միայն ավելացվում է կազով կամ 50% քացախաթթու՝ շոտոնն լցնելուց անմիջապես հետո:

Մակարդ № 3.—Շրդանը թրջում են մաքուր կուլտուրայի մեջ, 3—4 ժամ մնալուց հետո վրան ավելացնում են շոտտե և ադր

Մակարդ օսվորական օրձուկից՝ ավելացնելով մաֆուր կուլտուրա.— 1. Պանիրը կաթսայից հանելուց առաջ վերցնում են շիճուկ և առանց պոմպի, խողովակաշարքի և շիճկավազանի միջով անցկացնելու (վորպեսզի մնասակար բակտերիաներով չլիեղատովի) անմիջականորեն մաքուր սերզատով յուղազուրկ են անում: Նըրդանը թրջում են մաքուր կուլտուրայի մեջ՝ յուղազուրկ շիճուկը լցնելուց 3—4 ժամ առաջ: Սերզատելուց հետո շիճուկը 30° տաքությամբ իսկույն ևևթ լցնում են շրդանի վրա և ավելացնում են 30 գր ադր: Սերզատելուց հետո շիճուկը չպետք է մնա, այդ պատճառով շրդանը պատրաստվում է 3—4 ժամ առաջ:

2. Նույն յեղանակն է, միայն շիճուկի մեջ լցնում են կաղոլ կամ 0,8—1,0 ի օմ 50%—անի քացախաթթվու՝ շիճուկը թթվեցնելու համար: Թթվեցման հետևանքով շիճուկի մեջ առաջանում է ֆոքր սուզակ և նա դառնում է կիսաթափանցիկ, վորի վրա առանձին ուշադրություն չպետք է դարձնել:

Այդ յերկու տեսակի մակարդների պատրաստման առավելությունն այն է, վոր ստրեպտոկոկիկը նրանց մեջ զարգանում է քիչ քանակությամբ. յերկու մակարդներն էլ պահվում են տերմոստատում 36—40 ժամ՝ 28—30°Ց ջերմաստիճանում:

Այդ յերկու տեսակի մակարդներն էլ կարելի յե կիրառել ժիպն այն տեղերում, վորտեղ շիճուկը հետ չի տարվում այն ամանների մեջ, վորոնցով կաթը բերվում է գործարան: Իսկ յեթե շիճուկը հետ է տարվում կաթի ամանների մեջ, այդ դեպքում մակարդն անհրաժեշտ է պատրաստել շոտտեյով կամ պատերիզած շիճուկով, հակառակ դեպքում կաթը կարող է շիճուկից ազատված Ֆլյագներից վարակվել մնասակար բակտերիաներով, վորոնք հետագայում մակարդի միջոցով կանցնեն պանրի մեջ:

Պանրի ցուպիկի մաֆուր կուլտուրան պատրաստվում է հեղուկ վիճակում՝ բակտերիոլոգիական լաբորատորիաներում, վորտեղից և պետք է այն դուրս գրել: Այդ մաքուր կուլտուրայի կենսազործունեյությունը շատ մեծ չէ, մաքսիմում 12—14 օր, հետագայում նա թուլանում է: Հեղուկ կուլտուրան աչքի յե ընկնում թույլ դիմացկունությամբ՝ պահելիս և այդ պատճառով վատ է դիմանում 2—3 օրից ավելի փոխադրության, դրա հետևանքով էլ տեղափոխությունը պետք է շատ լավ կազմակերպված լինի: Պետք է դուրս գրել 6—7 օրվա համար անհրաժեշտ

քանակից վոչ ավելի: Նա ուղարկվում է 200 խ սմ-նոց օբլադաների մեջ՝ կցելով հրահանդ՝ գործածման յեղանակի մասին:

Մակարդ պատրաստելու համար 1 լիտր շիճուկին պետք է վերցնել 15—20 խ սմ մաքուր կուլտուրա:

Վերջին ժամանակներս Շվեյցարիայում պանրագործարաններում սկսել են արտադրել այսպես կոչված «գործարանային պանրային կուլտուրա», վորը ճիշտ պատրաստելիս կարող է փոխարինել լաբորատորիայում պատրաստվածին:

Խորժառանցյալն պանրակուլտուրան պատրաստվում է հետևյալ յեղանակով.— Պանրի ցուպիկի (Bact. casei) առաջին գործարանային կուլտուրան պատրաստում են մաքուր լաբորատորիայան կուլտուրայի միջոցով: Պաստերիզած շիճուկի մեջ (սակայն ավելի քաղ է շոտտելի մեջ) մտցնում են մաքուր կուլտուրա և աղ (1 լիտր շիճուկին 30 գր աղ) և պահում են տերմոստատում 36—40 ժամ 28—30°Ց ջերմության տակ: Հենց այդ պատրաստի գործարանային կուլտուրայից 1 լիտր շիճուկի վրա լցնում են 20—25 խ սմ հեռեյալ գործարանային կուլտուրան պատրաստելու համար: Հետագայում վարվում են նույն կերպ, միշտ ոգտվելով նախորդ գործարանային կուլտուրայից, միաժամանակ պահպանելով ամենախնամքոտ մաքրություն և ճշտապահություն: Անհրաժեշտ է յուրաքանչյուր 12—15 օրը մեկ անգամ գործարանային կուլտուրան նորոգել լաբորատորիանով և նրանից շիճուկով կամ շոտտելով պատրաստել նոր մակարդ, իսկ հինը թափել:

Երգանամակարդի հասունացումը.— Երգանամակարդի հասունացումն ընթանում է յերկու ուղղությամբ. ա) թրջոց դնելու ժամանակ շրդանաֆերմենտն աստիճանաբար շրդանից անցնում է շիճուկի մեջ, այդ պրոցեսը վերջանում է մոտավորապես 30 ժամում, բ) շրդանի վրա շիճուկ լցնելու մոմենտից սկսում է բակտերիաների զարգացումը, վորը շարունակվում է մինչև մակարդի գործածման մոմենտը:

Երգանամակարդի հասունացումը նորմալ ընթանալու համար (առանձնապես բակտերիալ տեսակետից) անհրաժեշտ է ջերմաստիճանը հասունանալու ժամանակ պահպանել միևնույն մակարդակի վրա, վորի համար պետք է ունենալ տերմոստատ: Տերմոստատը մի պահարան է, վորի պատերը մեկուսացված են. ասքությունը պահպանվում է նավթի կամ ելեկտրական լամպով: Երգանամակարդի հասունացումը կա մշտական ելեկտրոններգիա:

Կաթնաթթվային բակտերիաների զարգացմանն ամենափց

ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու համար պետք է լինի համապատասխան ջերմաստիճան, այն է՝ 30° ց: 30° ց-ից բարձր ջերմութեան դեպքում մակարդի մեջ սկսում է արագ խմորում— շրջանը յերես է բարձրանում, առաջանում է վատ հոտ, մակարդը դառնում է խմորված (այն ուղղել չի կարելի): Յածր ջերմաստիճանի (28°-ից ցածր) դեպքում մակարդի հասունացումը դանդաղում է, նա հեշտութեամբ դառնում է մածական. այդ տեսակ մակարդը խանգարում է թարմ պանրից շիճուկի դուրս գալուն և նպաստում է նրա մեջ շիճկային բների, փոսերի և այն առաջանալուն:

Հասուն լավ վորակի մակարդի մակերեսին պետք է լինի միկոդերմա սուենկի (*Mycoderma casei*) մոխրագույն կնճռոտ փառք: Մակարդի հասունութեան աստիճանը կարելի չէ վորոշել ըստ թթվութեան:

Ըստ թյունների 50°-ից պակասը—	լրիվ չհասած—	անպետք է
50-ից մինչև 70°-ի դեպքում—	թույլ հասունություն—	պակաս պիտանի չէ
70-ից » 100°-ի »	—նորմալ հասունություն—	պիտանի չէ
100-ից » 125°-ի »	—չստ հասուն—	վտանգավոր է
125-ից բարձրի »	—գերհասուն—	անպետք է:

Հասուն մակարդը յերկար ժամանակ (40 ժամից ավելի) տերմոստատի մեջ մնալու դեպքում հեշտութեամբ նրա մեջ առաջանում են աննորմալություններ (տես «Մակարդի արատները» բաժինը):

Հասուն մակարդի գործադրման ժամանակ հեղուկն յերեսից թափում են մինչև նստվածքը, առանց նրան ձեռք տալու և քամելու, իսկ յեթե հեղուկը թափվում է նստվածքի հետ միասին, այդ դեպքում այն քամում են մաղով:

Յերեսի ջրից ազատված մակարդը սովորաբար իսկույն ևեթ գործադրվում է կաթի մակարդման համար. անհրաժեշտութեան դեպքում մի մասը կարելի չէ թողնել և պահել հով տեղում մինչև հետևյալ անգամ պանիր պատրաստելը, սակայն 12—14 ժամից վոչ ավելի, վերջին դեպքում մակարդը չպետք է քամիլ, այլ յերեսի հեղուկը հեռացնել մինչև նստվածքը: Քամելու ժամանակ նա կարող է կեղտոտվել:

#### ՍԱԿԱՐԴԻ ԱՐԱՏՆԵՐԸ

1. Ձափագունց քրու մակարդ.— 150°-ից բարձր թթվութուն անցող մակարդը չպետք է ոգտագործել, վորովհետև նա նպաստում է

պանրի մեջ շիճուկ մնալուն, արագ խմորում տեղի ունենալուն, խոշոր փայլուն աչք և փոկանման խմոր ստեղծվելուն:

2. Թույլ քրվարյուն ունեցող մակարդ. — Չհասած մակարդ-թխվությունը 60°-ից ցածր, շրդանափոշուն հավասար ուժ ունի, Ստացվում է քիչ նկարով կամ բոլորովին նկար չունեցող և թույլ խմոր ունեցող պանիր:

3. Խմորձած մակարդ. — Նշանները — շրդանը յերես և բարձրանում հասունանալու ժամանակ, ունի պղտոր գույն, աննորմալ հոտ: Պանիրն ունեցնում է, պանրի կեղևը և պանիրը ճաքճրքում են, առաջանում են շիճկային բներ:

4. Մածական մակարդը վտանգավոր է այն ժամանակ, յերբ առաջացնում է մամլելու ժամանակ պանրից դուրս յեկած շիճուկի մածականություն, վորի հետևանքով պանիրը նորմալ չի խմորվում, կեղևը ճաքում է, ստացվում է, ինչպես ասում են, աշխարհազրահան քարտեղով պանիր: Մակարդի մածականությունը կարելի չէ վերացնել շրդանները թրջոց գնելու ժամանակ ջերմաստիճանը բարձրացնելով: Ավելի արժատական լավացումը հանդիսանում է ամբողջ մակարդման ամանների ամենախնամքոտ ախտահանությունը և նոր մակարդ պատրաստելը:

#### ՇՐԴԱՆԱՄԱԿԱՐԴԻ ՎՈՐԱԿԻ ԱՏՈՒԳՈՒՄԸ

Շրդանամակարդի վորակն ստուգվում է մակարդա-խմորման փորձի ոգնությամբ:

Մակարդի ստուգման համար մի փորձանոթի մեջ կաթ են վերցնում մակարդելուց առաջ, մյուսի մեջ՝ մակարդը լցնելուց հետո, և յերկու փորձանոթներն ել դնում են ավազանի մեջ: Յերկու նմուշների գնահատումը միաժամանակ կատարվում է 12 և 24 թը)՝ կաթը խմորման նմուշի միջոցով գնահատելու սխեմայի ձևով, շրդանամակարդ պարունակող կաթը (յերկրորդ փորձանոթ) — մակարդախմորման գնահատման սխեմայի ձևով:

Այս դեպքում կարող են լինել հետևյալ 4 դեպքերը.

1. Յերկու նմուշներն ել նորմալ են և պանրի պատրաստության համար պիտանի յեն համարվում. այդ ցույց է տալիս, վոր կաթի վորակը լավ է և մակարդը նորմալ:

2. Մակարդ չպարունակող կաթի նմոշը պիտանի չէ պանիր պատրաստելու համար, իսկ մակարդ պարունակողը կասկա-

ձելի յե և նույնիսկ անպետք և, այդ նշանակում և, վոր կաթը լավ է; իսկ մակարդը վատ, հետևաբար և մակարդը պետք է ուղղել:

3. Առանց մակարդի կաթի նմուշը դասված է կասկածելիներին շարքը, իսկ մակարդովը՝ լավ է և պիտանի պանիր պատրաստելու համար: Այդ ցույց է տալիս, վոր կաթը նորմալ չէ և պետք է այն ուղղել, չնայած վոր մակարդը մի քիչ ուղղել է կաթի վորակը և կարելի յե հույս ունենալ, վոր կատացվի միջակ վորակի պանիր:

4. Յերկու նմուշներն ել համարվում են կասկածելի կամ վատ. այդ նշանակում և, վոր կաթն ու մակարդն աննորմալ են, ընդվորում կամ մակարդն այնքան թույլ է, վոր ի վիճակի չեղավ ուղղել կաթը, կամ թե կաթն այնքան վատ եր, վոր լավ մակարդն ել այն չի կարող ուղղել:

Վերջնականապես հաստատելու համար, թե ինչն է իսկապես արատավորը — կաթը թե մակարդը, պետք է կատարել կրկնակի նմուշի ստուգում և ձեռք առնել համապատասխան միջոցներ՝ թերությունը վերացնելու համար:

Բակտերիալ մակարդ գործադրելիս անհրաժեշտ է կատարել մշտական անընդհատ դիտողություն կաթի և մակարդի վորակի վերաբերյալ՝ մակարդախմորման նմուշի միջոցով, այսպես գործը կուրաբար առաջ կդնա: Դրա համար անհրաժեշտ է ունենալ փոքր տերմոստատ՝ պատի փոքր պահարանի նման 4 շտախիլի չափով՝ ամեն մեկում 6 — 8 փորձանոթ և նավթի կամ ելեկտրական լամպ՝ ջերմաստիճանը պահպանելու և կանոնավորելու համար: Փորձանոթները հնարավոր է նախապես պատրաստել այսպես. սողաջրով լվացած, յեռացրած ջրով լավ վողողած և չորացրած փորձանոթների բերանները փակում են բամբակե խցանով և ստերիլում չոր տաքությամբ: Յեթե բամբակե խցանը չի խոնավանում, այդ դեպքում այդ ձևով պատրաստած փորձանոթնեբով կարելի յե ոգավել նաև մի քանի որ հետո, առանց վախենալու, վոր վորեւ միկրոֆլորա կընկնի փորձանոթի մեջ:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր շվեյցարական պանրագործարանի խորհուրդ տալ, վոր կատարի այսպիսի մշտական վերահսկողություն:

Գործարանում պատրաստված օրգանամակարդն արտաքրվում է թե հեղուկ վիճակում և թե իբրև փոշի: Մեզ մոտ պատրաստվում

և միայն փոշու ձևով: Փոշի մակարդը պետք է բավարարի ստանդարտ պահանջներին:

Փոշի մակարդի ոգտագործման ժամանակ տուփի մեջ գտնվող փոքր գդալով վերցնում են անհրաժեշտ քանակություներ (օրինակ գդալի յեղերքները ցված փոշին կշռում և 2,5 գր) և կախի մակարդերուց 15 բոպե առաջ լուծում են ջրի մեջ (250—300 խ սմ ջուր յուրաքանչյուր 100 կգ կախին): Յերկար ժամանակ մնալու պեպքում փոշի մակարդի լուծույթը թուլանում է:

Եմմենթալ պանրագործության ժամանակ փոշի շրջանաձև կարգը հնարավոր է գործադրել պանրի ցուպիկի լաբորատորիան կամ գործարանային կուլտուրաների գործադրման դեպքում միայն: Մաքուր կուլտուրայից պատրաստված բակտերիալ մակարդը մտցնում են կախայի մեջ յեղած կախի 0,15—0,20% -ի չափով փոշիով մակարդելուց առաջ: Այս մեթոդը կիրառվում է Շվեյցարիայում և մասնազետներին կարծիքով նպաստում է լավորակ պանրի պատրաստմանը:

Ալթայում (Սիբիր) և Հայաստանում այս մեթոդն արգենշատ տարիներ է, վոր մտցված է պանրագործության պրակտիկայում:

Գործարանային շրջանաձև կարգ ոգտագործելիս մաքուր կուլտուրա աղելայնեին անհրաժեշտ է նրա համար, վոր առաջինը համարյա թե չի պարունակում պանրագործության համար անհրաժեշտ բակտերիաներ:

Մեք կեմենթալ պանրագործության մեջ ինչպիսի օրդամասակարդ պեթ է գործադրել. — վերևում նկարագրված բոլոր տեսակի ինքնարուր մակարդներից մեր պայմանների համար ամենից աղելի հարմար է այն մակարդը, վորը պատրաստված է պանրացուպիկի մաքուր կուլտուրայից (տես շոտտեյով պատրաստած մակարդը № 3):

Յեթե վորեք պատճառով հնարավոր չե կանոնավոր կերպով ստանալ պանրի ցուպիկի մաքուր կուլտուրա բակտերիոլոգիական լաբորատորիայից, այդ դեպքում պետք է գործադրել շոտտեյով պատրաստած շրջանաձև կարգ՝ թթվեցնելով կաղոլով կամ 50% - առտեյին (տես շոտտեյով պատրաստելը № 2):

Իմենտուր օրդամասակարդի ուժը վարժելը. — Ինքնարուր շրջանաձև կարգի ուժը վորոշելիս պետք է պահպանել հետևյալ պայմանները.

1. Նրդանամակարդի ուժը վորոշելու համար վերցրած կաթի սժուշի ջերմաստիճանը պետք է ճիշտ հավասար լինի ամբողջ մակարդվելիք կաթի ջերմաստիճանին:

2. Նրդանամակարդի ջերմաստիճանը պետք է լինի մակարդվելիք կաթի ջերմաստիճանից վոշ ցածր. յեթե մակարդի ջերմաստիճանն ավելի ցածր է, այդ դեպքում պետք է այն տաքացնել:

3. Մակարդի ուժը վորոշելու համար պետք է վերցնել 6 մաս կաթ և 1 մի մաս մակարդ:

4. Մակարդի ուժը վորոշվում է կաթի մակարդվելու համար անհրաժեշտ վայրկյանների թվով, հաշված կաթի մեջ մակարդ լցնելու մոմենտից մինչև առաջին փաթիլները առաջանալը: Վորքան շատ է վայրկյանների թիվը, այնքան ավելի թույլ է մակարդը և ընդհակառակը:

5. Յեթե խառնուրդի (կաթ + մակարդ) ջերմաստիճանը կաթի ջերմաստիճանից ցածր է, այդ դեպքում մակարդման վայրկյանների թիվը կմեծանա, մակարդի ուժն իրականից ցածր կլինի, մակարդի քանակը կլինի ավելի շատ, քան պահանջվում է, և հետևաբար կաթը սահմանված ժամկետից ավելի արագ կմակարդվի: Իսկ յեթե խառնուրդի ջերմաստիճանը կաթի ջերմաստիճանից բարձր կլինի, այդ դեպքում տեղի կունենան շարադրվածին հակառակ յերևույթներ:

6. Ինքնարուր մակարդը պետք է ունենա այնպիսի ուժ, վոր նրա քանակի հարաբերությունը կաթի քանակին լինի 1:600—1000, այսինքն՝ մեկ մաս մակարդը պետք է մակարդի 600—1000 մաս կաթ: Մակարդի սահմանված ուժը պետք է միշտ միատեսակ լինի, չպետք է լինեն թռիչքներ, յերբ մի օր մակարդի ուժը 30 է, մյուս օրը՝ 20, վորովհետև տարբեր ուժի մակարդ ունենալիս մենք կաթի մեջ մտցնում ենք տարբեր քանակի մակարդ, իսկ դրա հետ միասին տարբեր քանակի բակտերիաներ, վորի հետևանքով պանրի խմորման պրոցեսները կարող են զանազան լինել, իսկ այդ դեպքում պանիրների նկատմամբ կպահանջվի տարբեր խնամք և կգժվարանա աշխատանքը նկուզներում:

7. Ինքնարուր մակարդի քանակը հաշվելու համար գործադրվող ֆորմուլան հետևյալն է՝

$$x = \frac{M \times a}{6 - c}$$

Վորտեղ  $x$  ցույց է տալիս շրդանամակարդի քանակը լիտրերով,  $M$  — կաթի քանակը լիտրերով,  $a$  — մակարդի ուժը վայրկյաններ

րով, 6—կաթի մասերի թիվը՝ մակարդի ուժը վորոշելիս, Ե—ըս-  
պենների թիվը, արտահայտած վայրկյաններով, վորում պետք է  
կաթը մակարդվի:

Պրիմակ

$$\frac{1000 \times 15}{6 \times 1800} = 1,39 \text{ Ե}$$

վորը նշանակում է՝ 1000—կաթի քանակը լիտրներով, 15—մակար-  
դի ուժը վայրկյաններով, 6—կաթի մասերը, 1800—կաթի մակարդ-  
վելու ժամանակը վայրկյաններով (30 րոպե):

1000 լիտր կաթի համար անհրաժեշտ մակարդի քանակը  
լիտրներով վորոշելու համար կարելի չի ոգտադործել նաև հետև-  
վյալ տախտակը.

Մակարդի ուժը վայր- կյաններով	Կաթի մակարդվելու տեղում թյունը (րոպեներով)				
	20	25	30	35	40
20	2,75	2,20	1,85	1,60	1,40
19	2,66	2,10	1,75	1,50	1,32
18	2,50	2,00	1,66	1,43	1,25
17	2,33	1,90	1,60	1,35	1,18
16	2,20	1,80	1,50	1,25	1,10
15	2,08	1,66	1,40	1,20	1,00
14	1,95	1,50	1,30	1,10	0,97
13	1,80	1,40	1,20	1,00	0,90
12	1,66	1,33	1,10	0,95	0,83
11	1,50	1,20	1,00	0,87	0,76
10	1,33	1,10	0,90	0,80	0,70
9	1,25	1,00	0,80	0,70	0,62

Այս տախտակով կարելի չի վորոշել մակարդի անհրաժեշտ  
քանակը. յենթադրենք մենք ունենք վոչ թե 1000 և կաթ, այլ  
որինակ՝ 758 Ե մակարդի ուժը 18 Ե, մակարդման տեղում թյունը  
30 րոպե. այդ դեպքում 758-ը բաղմապատկում ենք 1,66-ով և բա-  
ժանում ենք 1000-ի վրա.

$$\frac{758 \times 1,66}{1000} = 1,26 \text{ Ե մակարդ:}$$

Փողի մակարդի ուժը վորոշելու համար վերցնում են 10 մաս

(100 խ սմ) կաթ և մեկ մաս (10 խ սմ) շրդանամակարդի փոշու 1% լուծույթ:

Մակարդի քանակը հաշվելու համար կարելի չե ոգտագործել պարզեցրած ֆորմուլա. յեթե կաթը պետք է մակարդվի 30 բուպեյում, այդ դեպքում կաթի կելոգրամների թիվը (600) բազմապատկում են մակարդի ուժով (40) և բաժանում 18-ի վրա. 25 բուպեյում մակարդվելու դեպքում բաժանում են 15-ի վրա, 20 բուպեյում մակարդվելու դեպքում՝ 12-ի վրա, ստացված թիվը ցույց է տալիս մակարդի քանակությունը խ սանտիմետրներով: Որինակ՝  $600 \times 40 : 18 = 1333$  խ սմ կամ 1,333 չ 30 բուպեյում (1800 վայրկյան).  $600 \times 40 : 15 = 1,600$  լիտր 25 բուպեյում և  $600 \times 40 : 12 = 2,000$  լիտր մակարդ՝ 20 բուպեյում մակարդվելու դեպքում:

ԿՍԹԻ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ ՄԱԿԱՐԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ՄԱԿԱՐԴՍԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մակարդման համար կաթի ջերմաստիճանը պատանվում է 31—33°-ի սահմաններում, մակարդման տևողությունը՝ 25—35 բուպե:

Թե ջերմաստիճանը և թե մակարդման տևողությունը սահմանվում են ըստ կաթի վորակի և տարվա ժամանակի, այլև նախած թե կալցեյի մշակումն ինչպես և ընթացել նախորդ մշակման ժամանակ, հատկիկ վորքան ժամանակում է չորացել, կծկվել և նրանից շիճուկ դուրս չեկել, այլև կախված է ստացված հատիկի տերտությունից և կապակցությունից:

Նույնպիսի հիմունքներով սահմանվում է նաև ինքնարուր մակարդի ուժը, կամ նրա քանակական հարաբերությունը կաթին, այսինքն՝ 1 : 1200, 1 : 1000, 1 : 600 և այլն. այդ ֆակտորները կաթի ջերմաստիճանը, մակարդման տևողությունը և մակարդի ուժը—նայած պահանջին, կարելի չե փոխել յուրաքանչյուրն առանձին կամ միասին, որինակ՝ մակարդման տևողության կրճատում կարելի չե կատարել վոչ թե մակարդի քանակն ավելացնելով, այլ այն ուժեղացնելով, կամ ջերմաստիճանը բարձրացնելով:

«ՇՈՏՏԵ» ԾԻՃՈՒԿ ՊԱՐՄԱՍՏԵԼԸ

Շոտտե կարելի չե պատրաստել յուզաղուրկ յեղած կամ շեղած շիճուկից, վորը վերցված է կալցեյի մշակման կամ կաթնայից

պանիրը հանելու ժամանակ, շիճուկը տաքացնում են մինչև 90—91° և արուամիրը դուրս հանելու համար նրան ավելացնում են 5—6% „ թթու շիճուկ մոտ 120° թթվությամբ, վորի հետեւանքով արուամիրն իսկույն ևեթ անջատվում և խոշոր փաթիլներով և շիճիկ յերեսին լողում և վորպես խոշորահատիկ լոռ (ցիգեր): 3—4 ժամ մնալու դեպքում արուամիրն իջնում և ամանի հատակը, իսկ վերեւից մնում և և միանգամայն թափանցիկ կանաչա-դեղնավուն շիճուկ—շոտտե 15—17° թթվությամբ: Նա գործադրվում և շրդանամակարդ, գործարանային կուլտուրա և թթու շիճուկ պատրաստելիս՝ արուամիրն անջատելու համար:

#### ԱԼՔՈՒՄԻՆ ԱՆՋԱՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՅՈՒ ԵՆՃՈՒԿ ՊԱՏՐԱՍԵԼԸ

Թթու շիճուկը նախապես պատրաստում են հում յուղադուրեկ շիճուկից: 70—80 և տարողությամբ փայտե տակառի մեջ աստիճանաբար 3—4 որվա ընթացքում լցնում են 40—45° տաքություն ունեցող հում շիճուկ, վորի ջերմաստիճանը պահելու ընթացքում իջնում և մինչև 30° և հետագայում հենց այդ ջերմաստիճանը (30°) պահպանում են: 4—5 որ հետո շիճուկը պետք և ունենա մոտ 60—70° թթվություն: Կողքի անցքից այն դատարկում են մեկ ուրիշ, լավ լվացված և շոգեհարած կիսատակառի մեջ (հատակի նստվածքը և շիճուկի վերին շերտը թափում են): Յերբ այդպիսի թթու շիճուկ կա, վորն արդեն ունի համապատասխան բակտերիալ ֆլորա, սկսում են պատրաստել պարզ շիճուկ—շոտտե:

Վոչ հաճախ, քան յուրաքանչյուր յերկու որը, իսկ յերբեմն նույնիսկ ամեն որ, թթու շիճուկին ավելացնում են շոտտե 55—58° ջերմությամբ, վորն աստիճանաբար ինքնիրեն իջնում և մինչև 30°. հենց այդ ջերմաստիճանում ել հասունանում և թթու շիճուկը: Արուամիրն անջատելու համար թթու շիճուկի թթվությունը պետք և լինի մոտ 120°:

Պանրի յուղիկի բակտերիաների դարգացումը նորմալ և լացնելու և ջերմաստիճանը պահպանելու դեպքում, վորովհետև շոտտեն հանդիսանում անհրաժեշտ անդանյութ կաթնաթթվային ջերմաստիճանների զարգացման համար, իսկ սկզբնական բարձր ջերմաստիճանն սպանում և շաքարասնկերին:

Ավելացվող թարմ շոտտեյի քանակը հավասար և ծախսվող թթու շիճուկի քանակին: Յեթև շիճուկի թթվությունը 120—125°-ից

բարձր և լինում, այդ դեպքում ավելի շատ թարմ շոտան յեն ավել-  
 յացնում, իսկ յեթև թթվությունը պակասում է, այդ դեպքում ավել-  
 ևի քիչ շոտան յեն ավելացնում: Յուրաքանչյուր 8—9 որ թթու  
 շինուկը տակառից դատարկվում է մաքուր, լավ շոգեհարած ուն-  
 կանի մեջ, բացի ներքևի և վերևի շերտերից, վորը թափում են:  
 Տակառը լավ լվանում են, շոգեհարում, չորացնում և ապա ուն-  
 կանից թթու շինուկը տեղափոխում են նրա մեջ: Նպատակա-  
 հարմար է թթու շինուկին ամեն անգամ այսպես նորոգելիս տա-  
 քացնել  $57^{\circ}$ , այնտեղ պատահող շաքարանկերից ազատվե-  
 լու համար: Տաքացրած թթու շինուկը, դեռ չպողած, լցնում են  
 լվացված տակառի մեջ: Որինակ՝ 2000—3000 չ կաթ վերամշակե-  
 լու զեպքում թթու շինուկի նորմալ հասունացման համար պետք  
 է ունենալ 2 տակառ, 5000—6000 չ վերամշակելու դեպքում՝ 3  
 տակառ, 8000—10000 չ վերամշակելու դեպքում՝ 4 տակառ և այլն:

Լավ նորմալ թթու շինուկը պետք է լինի թափանցիկ կա-  
 նաչա-գեղնավուն,  $120^{\circ}$ -ից վոչ պակաս և  $130^{\circ}$ -ից վոչ բարձր  
 թթվությամբ:

Այսպիսի թթվության դեպքում շինուկի մակերեսը պետք է  
 ծածկված լինի մոխրագույն կնճոռոտ փառով, վորի տակ վոչ մի  
 գաղազոցացում չպետք է լինի (բշտիկների առաջանալը):

$140^{\circ}$  և ավելի բարձր թթվություն լինելիս փառն անհետա-  
 նում է, սակայն մինչ այդ աստիճան չպետք է թողնել Շինուկը  
 չպետք է ունենա սուր քացախի համ և նեխածի հոտ, առաջա-  
 ցած փրփուրը դատարկելիս պետք է անսխալապես անհետանա և  
 չպետք է լինի սապնաման, լյարձուն, հակառակ դեպքում այդ  
 նշան է, վոր շինուկի մեջ կան շաքարանկեր, վորը շատ վտան-  
 գավոր է պանիր պատրաստելու համար: Նման շինուկը պետք է  
 տաքացնել մինչև  $57^{\circ}$ : Կանաչ գույնը ցույց է առլիս, վոր նա  
 հասունացել է ցածր շերմաստիճանում և թույլ են զարգացել  
 կաթնաթթվային բակտերիաները (պանրի ցուպիկները): Ինչպես  
 նորմալ թթվություն ունեցող շրդանամակարդը, այնպես և թթու  
 շինուկը, նույնպես նորմալ թթվությամբ, միատեսակ են ազդում  
 նիլարի առաջացման վրա: Թթու շինուկի հասունության աստի-  
 ճանը վորոշում են թթվությամբ:

Մինչև $75^{\circ}$	—	վոչ հասուն
75 մինչև $100^{\circ}$	—	թույլ հասունություն
100 » $126^{\circ}$	—	միջին
125 » $156^{\circ}$	—	ուժեղ
$156^{\circ}$ -ից բարձր	—	գերնստած

## II. ԿԱՅԻ ՄԱԿԱՐԴՎԵԼ

Կայ թի մակարդովելը կախված է 1) կաթի վորակից, 2) շրջանում մակարդի տեսակից և քանակից և 3) կաթի ջերմաստիճանից: Նայած կաթի վորակին, կարող են տեղի ունենալ հետևյալ շեղումները:

### ԿԱՅԻ ՎՈՐԱԿԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ազի կար, վորն ստացվում է կրծի հիվանդութեան (բորբոքում, պալարախտ և այլն) հետևանքով և ցամաքելու մտախի կովերից. այդ կաթի մշակման ղեպքում մակարդման պրոցեսը, նորմալի հետ համեմատած, ավելի յերկար և տևում, ստացվում է թույլ թանձրուի, վորը վատ և մշակվում և չորանում, իսկ թարմ պանրից, մամլիկիս, շիճուկը դժվար է դուրս գալիս, վորի հետևանքով պանրի յերևաին հեշտութեամբ կարող են առանալ շիճկային բներ և ճաքեր:

Թանձրուի չկազմող կար կարող է ստացվել առողջ կովերից և ունենալ նորմալ քիմիական կազմ: Յեթե մակարդելու ժամանակ նրանից քիչ քանակութեամբ խառնենք ուրիշ նորմալ կաթի հետ, այդ ղեպքում նրա այդ անհատական առանձնահատկութեանը կարող է և չազդել խառը կաթի մեջ կատարվող հետագա պրոցեսների վրա և կստացվի նորմալ թանձրուի:

Թույլ բանձրուի ազի կար. — Պատահում են կովեր, վորոնք ուսլիս են այնպիսի հատկութեան ունեցող կաթ, վորն ուրիշ կաթի հետ խառնելու ղեպքում ևս առաջացնում է թանձրուի վորը նորմալ մշակման չի յենթարկվում նույնիսկ յերկրորդ տաքացման բարձր ջերմաստիճանին և յերկարատե խառնելիս: Այս յերևույթը հազվագեպ չի և պանրի համար բավականին վտանգավոր է: Նման կաթը հայտարերել և ընդհանուր կաթից կաթի մակարդափորձ կատարելու ղեպքում:

Պերհասած կարը մեծ նշանակութեան ունի իր մակարդման ժամանակ, վորովհետե արագացնում է այդ պրոցեսը, ընդվորում ստացվում է փուխր թանձրուի և պանրի մեջ առաջանում է բեռնուի, նույնիսկ փշրվող խմոր՝ թթվաշ համով և մանր նկարով:

### ՇՐԴԱՆԱՄԱԿԱՐԴԻ ՔԱՆԱԿԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Կանոնավոր թանձրուի ստանալու համար մեծ նշանակութեան ունի մակարդելու տևողութեանը, վորը վորոշվում է դիտավորապես շրդանամակարդի քանակով:

Կաթն արագ մակարդվելիս (մինչև 25 րոպե) թանձրուկն արագ և պնդանում, հատիկն արագ և չորանում և ստացվում է կոպլտ փոկանման հատիկ: Ընդհակառակը, յերկարատև մակարդվելիս (35 րոպե և ավելի) ստացվում է քնքռու, հեշտությամբ մշակվող թանձրուկ. նորմալ կաթի ղեպքում այդպիսի յերկարատև մակարդվելը յերբեմն կարելի չե նորմալ համարել: Արատավոր կաթի ղեպքում յերկարատև մակարդումը դանդաղեցնում է կալցեյի և հատիկի մշակումը և դրա հետևանքով պանրի մեջ կարող են ավելի շատ արատներ առաջանալ:

Կաթի նորմալ մակարդվելու տևողութունը համարվում է 25—35 րոպե:

### ՉԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Կաթի մակարդման համար վոչ պակաս նշանակութուն ունի նրա ջերմաստիճանը: Բարձր ջերմաստիճանում թանձրուկն արագ կերպով կոպտանում է, պանրացու դանդաղածը դառնում է փոկանման: Բարձր ջերմաստիճանը թույլատրելի չե այն կաթի համար, վորը մշակվում է բոլորովին թարմ (նոր կթած) վիճակում և պարունակում է յուղի բարձր տոկոս:

Յածը ջերմաստիճանում դանդաղում է և կաթի մակարդվելը, դանդաղում և հատիկի կծկվելը, վորը հնարավորութուն է տալիս ավելի հանդիստ կերպով մշակել պանրացու դանդաղածը և ավելի լավ հետևել աշխատանքի ընթացքին: Հատիկը չորանում է դանդաղորեն, պանրացու դանդաղածն ավելի քնքռու և ստացվում: Հատիկն արագ մշակելու ղեպքում պանրի մեջ ավելի շատ շիճուկ է մնում, այդ պատճառով էլ նրա խմորումն ավելի ուժեղ տեմպով է ընթանում: Սակարդման և հատիկի մշակման ժամանակ կաթի ջերմաստիճանի պահպանելը շատ կարևոր ֆակտոր է: Ավելի ցածր ջերմաստիճանում ձգձգվում է հատիկի մշակուձը, ավելի բարձրի ղեպքում՝ արագանում է: Պետք է միջոցներ ձեռք առնել մի կողմից՝ պաղելու դեմ, իսկ մյուս կողմից՝ նաև տաքանալու դեմ: Վերջին ղեպքն առանձնապես հաճախ է պատահում գոլորշով տաքացնելու ղեպքում, ուստի պետք է խիստ հակել կաթ-սառնելի գոլորշու կափույրների վրա: Մակարդելու համար կաթի ջերմաստիճանը պետք է տատանվի 31—33° Ց սահմաններում:

Սակարդման պրոցեսի և թանձրուկի վորակի վրա լավ է ազդում մակարդումից առաջ կաթի մեջ քլոր-կալցիում մտցնելը

1000 հգ կաթին 15—20 գրամի հաշվով, կամ ֆոսֆորաթթվական աղեր՝ 1000 հգ կաթին 40—50 գր:

Դուր-կալցիումը լուծում են ջրի մեջ. 100 խ սմ ջրին վերցնում են 50 գր քլոր-կալցիում, վորը տալիս է մոտ 33<sup>1</sup>/<sub>0</sub> լուծույթ, վորից լցնում են կաթի մեջ՝ 1000 հգ-ին 30—40 խ սմ-ի հաշվով: Ֆոսֆորաթթվական աղերը խառնում են 5—6 հգ կաթի հետ և իսկույն լցնում կաթի վրա:

Թե քլոր-կալցիումը և թե ֆոսֆորաթթվական աղերն արագացնում են կաթի մակարդվելը, թանձրուկին տալիս են ամրություն և առաձգականություն, արագացնում են հատիկի չորացումը. հատիկը դառնում է ավելի չոր, ձգուն, բայց կապակցված:

Հատիկի լավորակության շնորհիվ պանրի նկարը համաչափ է դառնում, իսկ ֆոսֆորաթթվական աղերը, բացի նկարից, լավացնում են նաև պանրի խմորը. խմորն ստացվում է ավելի փափուկ և մաքուր համով:

Կարին ջուր ավելացնելը.— Վորոշ ուղղումներ կատարելու անհրաժեշտության դեպքում կաթի մակարդման ժամանակ ավելացնում են ջուր: Մակաջն մինչև շրդանով մակարդելը կաթին մեծ քանակությամբ ջուր ավելացնելու դեպքում դանդաղում է թանձրուկի խտացումը, նա դանդաղ և պնդանում, հետևաբար և շիճուկի անջատվելը նույնպես դանդաղում է: Պատրաստի պանրի մեջ խմորը կարող է դուրս գալ փոկանման, կոպիտ: Համենայն դեպս ավելացվող ջրի քանակը չպետք է լինի ավելի քան 30 լիտր՝ 1000 հգ կաթին: Յևթե կպահանջվի ավելի շատ ջուր ավելացնել, այդ դեպքում պետք է ավելացնել վոչ միանգամից. նրա մե մասը պետք է ավելացնել պանրը կաթսայից հանելուց առաջ, այսինքն՝ խառնելը վերջացնելուց անմիջապես հետո:

## 12. ՊԱՆՐԱՅՈՒ ԶԱՆԳՎԱԾԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Պանրացու դանդվածի մշակումը պանրի պատրաստման արող տեխնոլոգիական պրոցեսի ամենակարևոր մոմենտն է:

Չարպետը պետք է պանրացու դանդվածի մշակմանը վերաբերվի առանձնապես ուշադիր և զգուշ, վորովհետև այդ աշխատանքից է մեծ մասամբ կախված պանրի պատրաստման հաջողությունը:

Պանրացու դանդվածը ճիշտ և հմուտ կերպով մշակելու միջոցով կարելի չէ վոչ լիովին լավորակ կաթից ստանալ լավորակ պանր և ընդհակառակը, պանրացու դանդվածը վոչ ճիշտ և ան-

հմուտ ձևով մշակելու զեպքում կարող և ստացվել արատավոր պանիր նույնիսկ լավորակ կաթից: Անուշադէր վերաբերմունքի հետևանքով կարող են թույլ արվել կոպիտ, անուղղելի սխալներ: Փորձված, գործն իմացող վարպետը բավականին արագ և ճիշտ կերպով, պանրացու զանգվածը մշակելու հենց սկզբին, հայտարարում է այն կաթի ընույթը, վորի հետ տվյալ մոմենտում հագործ ունի և իսկույն իր աշխատանքին տալիս է համապատասխան ուղղութիւն:

Պանրացու զանգվածի մշակումը բաժանվում է յերկու մասի. 1) կալյին մանր մասնիկների—հատիկների վերածելը և 2) այդ հատիկները մշակելը: Առաջին մասի մեջ մտնում է կալյեյի կտրատումը և անհրաժեշտ մեծութեան հատիկներ ստանալը, յերկրորդ մասի մեջ մտնում է հատիկի մշակումը՝ մինչև յերկրորդ տաքացումը, յերկրորդ տաքացումը և խառնելը:

**Կալյեյի (մակարդածու) ամբուքան վորոշումը.**—Նախքան կալյեյի մանրացումն սկսելը, անհրաժեշտ է վորոշել նրա ամբութիւնը, նրա պատրաստ լինելը մանրացնելու համար:

Կալյեյի ամբութիւնը և պատրաստ լինելը վորոշում են զանազան գործնական յեղանակներով, որինակ՝ ծարած ցուցամատով բարձրացրած կալյեն պետք է ունենա մաքուր, հարթ պատեր ունեցող, սուր յեղերքներով կտրվածք, այսպես կոչված «ճենապակենման կտրվածք», մակարդման ժամանակ կաթի յերևաին լողացող փայտյա շվեյցարական շերտիլ կաթսայից հանելիս պետք է լինի մաքուր, այսինքն՝ նրա հատակին կալյեյի պետք է կպած լինի. կալյեյի մեջ ուղղահայաց դրված շերտիլ պետք է աստիճանաբար և զանդաղ թեքվի կողքի վրա. կալյեն կաթսայի պատերից հեռացնելիս պետք է մաքուր պոկվի պատից: Այդ ցուցանիշներով կարելի յե բավականին ճիշտ կերպով վորոշել կալյեյի պատրաստ լինելը հետևյալ գործողութեան, այսինքն՝ նրա կտրաման համար:

Կալյեն կտրտելուց առաջ սկզբում նրա վերին շերտը օտոնն օտոն, այնպես վոր նրա վերին մակերևան ընկնի ներքև: Այս գործողութեան նպատակն է տաքացնել կալյեյի վերին սառած շերտը և նրան հնարավորութիւն տալ հասնել ներքին շերտերի պնդութեանը: Ամբողջ զանգվածի հավասարաչափ պնդութիւնը շատ կարևոր հանգամանք է հետագա աշխատանքի ճիշտ ընթացքի համար:

**Կալյեյի կտրտումը.**—Կալյեն կտրատում են տավիղով (արֆա)

խաչածն (փոխադարձ ուղղահայաց)՝ վերածելով ուղղածից սյու-  
նիկներին: Կտրատման նպատակն է՝ կալցեն նախապարաստել  
մանրացնելու համար և միաժամանակ շիճուկէն հնարավորություն  
տալ անջատվելու:

Կտրվածքի գծով պետք է դուրս գա գեղնավուն-սպիտա-  
կավուն շիճուկ: Յեթի անջատվող շիճուկն ունի սպիտակ գույն,  
այդ ցույց է տալիս, վոր կալցեն թույլ է, դեռ լրիվ չի մակարդ-  
վել, այդ պատճառով չպետք է շտապել այն մանրացնել, իսկ  
յեթի անջատված շիճուկը գեղնա-կանաչագույն է, այդ ցույց է  
տալիս, վոր մակարդածուն պինդ է, այդ դեպքում մանրացումը  
պետք է սկսել անմիջապես և այն կատարել բավականի արագ  
կերպով: Կալցեն վոչ պետք է թերմակարդված լինի և վոչ էլ  
գերմակարդված, բայց համենայն դեպս պետք է նշել, վոր առա-  
ջինն ավելի շուտ թույլատրելի չե, քան յերկրորդը: Հնարավոր է  
առաջին սխալը հետագա զգուշ աշխատանքով ուղղել, իսկ յերկ-  
րորդ սխալն ավելի դժվար է ուղղել և նա կանդրադառնա պան-  
րի վրա ավելի կամ պակաս չափով անբարենպաստ:

Մակարդածախ Գ:ալուսի օտրիկի միջոցով. — Մակարդածուն  
կտրատելուց հետո սկսում են այն շուտ տալ յերկու շվեյցարա-  
կան շերեփի միջոցով՝ նրանցով կաթսայի դիմացի յեզրից պան-  
րացու զանգվածն զգուշությամբ դեպի իրեն քաշելով: Ինչպի իրեն  
քաշելու ժամանակ ամբողջ մասսան խառնվում է, մակարդածուի  
ջերմատրիճանն ու պնդությունը համահավասար են դառնում, և  
դրա հետ միասին ուղղածից սյունիկները դառնում են խորա-  
նարդներ: Կաթսայի կտր հատակի շտրիկով հնարավոր է խառնե-  
լու ժամանակ ներքևի շերտը հեշտությամբ ամբողջապես բարձ-  
րացնել վերև ներքևի շերտում կարող են լինել կեղտ, կտրված  
շոռանման կապտագույն լերթեր, մասամբ չմակարդված կաթի  
հետեանքով առաջացած սպիտակ շիճուկ և այլն: Այդ բոլորը,  
իհարկն, պետք է զգուշությամբ յերևաից վերցնել ու հեռացնել:

Կեղտը կամ պղտոր մոխրագույն շիճուկը ցույց է տալիս,  
վոր կիթը մաքուր չի կատարված, կապտավուն փաթիլանման  
թանձրուկները ցույց են տալիս, վոր կաթը նորմալ չէ՝ կրծի հի-  
վանդության պատճառով, իսկ սպիտակ շիճուկը ցույց է տալիս,  
վոր կաթն անդի չե և արարկոտ և մակարդի հանդեպ: Ամբողջ  
զանգվածն այդ ձևով խառնելը կատարվում է վոչ միայն շերտու-  
թյունը հավասարելու և մակարդածուն պնդացնելու, այլև կաթի  
վորակի կրկնակի ստուգման համար:

Այդ աշխատանքի ժամանակ պետք է հետևել անջատվող շիճուկի գույնին, մակարդածուի ամրանալուն: Մակարդածուի ամբուլթյունն այնպես պիտի լինի, վոր հետագա աշխատանքը կատարվի առանց լարման:

Եւս տարուց հետո սկսում են մակարդածուն մտնուցնել: Այդ աշխատանքը կատարվում է տավիղով. կաթը լավ լինելու դեպքում մակարդածուն անհրաժեշտ մեծության հատիկները վերածելը կատարվում է 15—20 բուպեյի ընթացքում:

Կալցեյի մանրացումը հանդիսանում է պանրացու մասացի մշակման ամբողջ պրոցեսի հիմնական գործողությունը և նրա կատարման վրա պետք է դարձնել ամենալուրջ ուշադրությունը: Երճուկի անջատման, հատիկի կծկվելու և մանրացման արագության վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել, հակառակ դեպքում տավիղի միջոցով մի քանի անհաջող և ավելորդ հարվածներ անելով կարելի չէ պանրին շատ լուրջ վնասներ հասցնել:

Թույլ մակարդածուի մշակման ժամանակ շիճուկն ավելի ուժեղ կերպով է անջատվում և շնորհիվ նրա առատ անջատվելուն պանրի մեջ խմորումը թույլ է ընթանում, պանրի խմորը փափուկ է լինում և կարող է առաջանալ ինքնաձևողում. պանրին ունենում է փոքր նկար և նույնիսկ կարող է լինել բոլորովին առանց նկարի—կույր. թույլ մակարդածուի անդուշ մշակման դեպքում կարող են առաջանալ շատ մանր հատիկներ—փոշի, վորի հետևանքով կալիսի պանրի յեւքը և կասեղծի վոշ ճիշտ նկար:

Չափադանց պինդ մակարդածու մշակելիս շիճուկը դանդաղ է անջատվում, վորը հետագայում պանրի մեջ ավելորդ չափով լինելու շնորհիվ նրա աննորմալ խմորման պատճառ է դառնում: Ամուր մակարդածուն ուժեղ կերպով մանրացնելու հետևանքով ստացվում է անհամաչափ հատիկ, ալդպես և լինում է նկարը նույնիսկ կարող են լինել շիճկային բներ և ճաքեր պանրի մակերեսին:

Հատիկի մեծությունը կախված է մի շարք պայմաններից, ուստի նա չի կարող լինել մշտապես խիստ միատեսակ:

Յեթե պանրի քաշը մեծ չէ (դրուլը 50—60 կգ), կաթը լավորակ է, պանրի նկուղների ջերմաստիճանը միապաղաղ է և հեշտությամբ կանոնավորվում է, հատիկներն ավելի խոշոր են նախատեսվում և և յերկրորդ տաք սցումից առաջ կարող են ունենալ հնդկացորենի հատիկի մեծություն, այսինքն՝ մոտ 4 մմ

տրամագծով: Յերկարատե փոխադրման ղեպքում, կասկածելի և բարձր յուղալիություն ունեցող գերհասած կաթ ունենալու դեպքում, մեծ քաշի պանիր պատրաստելու ղեպքում հատիկի մեծությունը սահմանվում է կանեփի հատիկի մեծության չափ, այսինքն՝ տրամագիծը մոտ 3 մմ: Ամենակարեւորն է ունենալ համաչափ հատիկ:

**Հատիկի ձեւը.**— Պանրի հատիկի ամենալավ ձևը կարելի չէ համարել խորանարդաձևը, այդ գնդաձևը. յերկարավունը ցանկալի չէ: Խորանարդի ձևն ունի համեմատաբար ավելի մեծ մակերես, հետևաբար և շիճուկի անջատումն ու հատիկի չորացումն ավելի ուժեղ է կատարվում, քան գնդաձևի ղեպքում. յերկարավուն ձևի ղեպքում թե շիճուկի անջատումը և թե հատիկի չորացումը կատարվում է վատ և վոչ համաչափ:

**Դադար.**— Մակարդածուն ցանկալի մեծության հատիկների վերածելուց հետո դադար են անում, ընդվորում այդ ժամանակ հատիկը պետք է ունենա վոչ միայն պահանջվող մեծությունը, այլ բավականին լավ առաձգականություն: Դադարի ժամանակ տեղի չէ ունենում հատիկի նստեցումը կաթնաջի հատակին: Դադարի ժամանակ շիճուկի անջատվելը վոչ միայն կանգ չի առնում, այլ ուժեղանում է՝ հատիկի ներսում կաթնաթթվի կոնցենտրացիան մեծանալու հետևանքով. այդ ղեպքում հատիկները կծկվում են և նրանց առաձգականությունը մեծանում է:

Դադարը կարող է տևել 10—15 բուպե: Այդ ժամանակամիջոցում թափում են կաթի 30<sup>0</sup>/<sub>0</sub>-ի չափ և ավելի շիճուկ: Դադարից հետո նստած զանգվածն արՓայով լավ խառնում են և առաջ սկսում են նրա մշակումը խառնիչով (մուստովկա) կամ մեքենայական խառնիչով մինչև պահանջվող չորությունն ու առաձգականությունը, վորից հետո սկսում են յերկրորդ տաքացումը:

Պանրացու զանգվածի մշակման ամբողջ պրոցեսը՝ կալցիեյի մանրացման մոմենտից մինչև յերկրորդ տաքացումը տևում է 45—60 բուպե լեռնային և նախալեռնային շրջաններում, և մինչև 90 բուպե՝ տափաստանային շրջաններում:

**Սեւերոդ ճախցում.**— Եմմենթալ պանրի պատրաստման ժամանակ այս տաքացումը, բացի հիմնական նպատակից (շիճուկի անջատում, հատիկի չորացում), ունի նաև ուրիշ նշանակութուն. այն է՝ խմորման հենց սկզբից պանրի ցուպիկի համար ստեղծել ավելի բարենպաստ պայմաններ:

Յերկրորդ տաքացումը պետք է կատարվի նայած հատիկի

գրութեան և համաձայն այն դիտողութեաններէ, վոր կատարել է վարպետը պանրացու մասսայի մշակման ժամանակ:

Յերկրորդ տաքացման համար լավ նախապատրաստված հատիկը 40—45°-ին դառնում է մի քիչ ավելի փափուկ, սակայն ջերմութեան բարձրացման հետ հատիկը նորից կծկվում ու պնդանում է: Յեթե հատիկի փափկումը տեղի չե ունենում տաքացման վերջում, այդ ցույց է տալիս, վոր նրա մեջ շինուկ շատ կա, իսկ այդ ևլ ցույց է տալիս, վոր մակարդածուն սխալ է մշակված, որինակ՝ հատիկի վրա թաղանթ է գոյացել նրա տաքացման ժամանակ: Այդպիսի անփութութեան շնորհիվ լավ վորակի մթերք ստանալը կասկածելի չե դառնում:

Յերկրորդ տաքացումը կատարելիս պետք է հաշվի առնել յերկու գործոն— ջերմաստիճանը և տեղութեանը: Այս կամ այն վերջնական ջերմաստիճանը սահմանելը կախում ունի գլխավորապես կաթի վորակից, պանրի գլխի մեծութեանից և աշխատանքի ընթացքից՝ սկսած կաթի մակարդման մոմենտից մինչև յերկրորդ տաքացումը:

Տաքացման աստիճանը բարձրացնում է՝ կաթը յերկարատև մակարդելու (35 րոպեից ավելի), կաթը բարձր ջերմաստիճանում մակարդելու (33°-ից բարձր), հատիկները խոշոր և խոնավ լինելու դեպքում, փոշի շրդանամակարդն առանց մաքուր կուլտուրաների գործադրելու, թարմ (նոր կթած) և խիստ սառած կաթից պանիր պատրաստելիս պանրացու մասսան արագ մշակելու, կաթը քիչ հասած լինելու, կաթը շատ յուղալի լինելու, կովերին ամառն արոտներում ժամանակն անցած— կուպտացած կանաչ կերցնելու, ճահճոտ և անտառային արոտներում արածեցնելու և մեծ քաշ ունեցող գլուխներով պանիր պատրաստելու դեպքում:

Տաքացման աստիճանն իջնում է՝ յերբ կաթն արագ և մակարդվում (մինչև 25 րոպե), մինչև յերկրորդ տաքացումը հատիկը յերկար ժամանակ և ուժեղ կերպով և չորացվում, յերբ կաթը խիստ հասած է՝ մինչև 19—20° թթվութեամբ, յերբ ինքնաբուր շրդանամակարդը շատ թունդ է, յերբ պանրի գլուխը փոքր քաշ ունի, յերբ կովերին կերցնում են լավ, առողջ և թարմ կերեր:

Տաքացման տեղութեանը կախում ունի հատիկի գրութեանից: Նորմալ և ճիշտ նախապատրաստված հատիկի համար բավական է 30 րոպե. խոնավ, խոշոր, անհամաչափ հատիկի համար տաքացումը յերկարում է մինչև 40 րոպե և ավելի:

Թույլ խոշոր հատիկն արագ տաքացնելիս նրա վրա հեշտությամբ և առաջանում թաղանթ, վորը խանդարում և շիճուկի անջատմանը՝ չորացնելու ժամանակ: Յեթե հատիկները մինչև յերկրորդ տաքացումը խոշոր են, գերհասած մակարդ գործադրելիս և կաթի բարձր թթվության դեպքում տաքացման տևողությունը կրճատվում և՛ պանրացու զանգվածին ավելի մեծ կապակցություն տալու նպատակով:

Յերկրորդ տաքացման ջերմաստիճանը կախված և նաև յերկրորդ տաքացումից հետո կատարվող խառնելու գործողության տևողությունից: Նորմալ տևողությամբ խառնելու դեպքում (40-ից 60 րոպե) յերկրորդ տաքացման ջերմաստիճանը կարելի չե սահմանել նորմալի սահմաններում, իսկ յերկարատև խառնելու դեպքում (60 րոպեյից ավելի)՝ յերկրորդ տաքացման ջերմաստիճանը բարձրացվում և այն հաշվով, վոր կրճատվի խառնելու տևողությունը հետագա պանիրների պատրաստման ժամանակ, իսկ կարճի դեպքում (40 րոպեյից պակաս)՝ իջեցվում և Բոլոր բարեհաջող պայմաններում լեռնային և նախալեռնային շրջաններում յերկրորդ տաքացման ջերմաստիճանը տատանվում և 54—57° Ց սահմաններում, տափաստանային շրջաններում՝ մինչև 60°, տաքացման տևողությունը 30—40 րոպե:

Խառնելը.— Յերկրորդ տաքացումից հետո, ըստ հնարավորության նրա ջերմաստիճանը պահպանելով, շարունակում են հատիկը խառնել՝ հետագա չորացման նպատակով:

Խառնելու տևողությունը կախված և զանազան հանգամանքներից, այն և՛ կաթի վորակից, կաթի մակարդման տևողությունից, մակարդման ժամանակ կաթի ջերմաստիճանից, պանրացումը, հատիկի մեծությունից, յերկրորդ տաքացման ջերմաստիճանից և տևողությունից, վորն իր հերթին պետք և այնպե՛ս կատարվի, վոր խառնելը տևի 50—60 րոպե:

Խառնելու սկզբին հատիկը չորանում և բավականին դանդաղ սկզբում զգալիորեն ավելի արագ և այդ պատճառով խառնելու պետք և վորոշել հատիկի չորությունն ու առաձգականությունը՝ խառնելու վերջը վորոշելու նպատակով: Բավականին չորացած հատիկը բո՛ւ մեջ սեղմելիս—գնդիկ դարձնելիս պետք և լավ կոչլի, մատի վրա դբած գնդիկը պետք և դանդաղորեն կոտրվի, իսկ ձևաքի վրա տրորելիս պետք և լավ փշրվի:

Պանրացու մասսայի լավորակութեան ամենալավ ցուցանիշը հատիկի դուրափխրութեանն է, վորը տեղի յե ունենում խառնելու միջոցով: Յեթե հատիկը լավ փխրուն չէ, այդ ցույց է տալիս, վոր մինչև յերկրորդ տաքացումը հատիկը բավարար չափով չի չորացել, վորի հետևանքով կարող է ստացվել տրատներ ունեցող պանիր:

Յերբ հատիկը բավականաչափ չորացած է, դադարից առաջ կարելի յե լցնել սառը մաքուր ջուր կամ սառը շինուկ: Ջուրը պետք է լինի մաքուր, աղբյուրի, հակառակ դեպքում պետք է պատերիդել և պաղեցնել: Հատիկը ջրով պաղեցնելը պետք է գերադասել շինուկով պաղեցնելուն, վորովհետև վերջինը կարող է ստացված լինել վոչ միանգամայն նորմալ, ուրիշ բակտերիալ կազմ ունեցող կաթից, իսկ վորովհետև այդ շինուկն արդեն չի կարելի լրիվ կերպով հանել պանրի միջից, այդ պատճառով այն ոգտագործելու հետևանքով կարող է ստացվել թթվաչ համ, կտորվող խմոր ունեցող պանիր և նույնիսկ նա տրամադիր է վինում յերկրորդ անգամ խմորվելու: Թեև լավ ջուր ավելացնելու դեպքում այդ վտանգը բացասվում է, այնուամենայնիվ՝ այն պետք է լցնել զգուշութեամբ, այլապես պանիրը կունենա կոպիտ չոր խմոր և փոքր նկար: Ջրի քանակը պետք է լինի կաթի քանակի 3-ից մինչև 5% -ի չափ, ընդվորում պետք է ջուրը լցնել դանդաղ և ուժեղ կերպով խառնելով: Այդ ժամանակ պանրացու մասսան 45-ից ցածր չպետք է պաղեցնել, վորովհետև այդ կարող է բացասաբար ազդել թարմ պանրի խմորման ընթացքի վրա:

Յերբ հատիկը կտանա անհրաժեշտ չորութեանը, խառնելը դադարեցնում են: Դադարից անմիջապես առաջ խառնում են վոչ յերկ սրտե, բայց ուժեղ կերպով, վորպեսզի հատիկը կենտրոնանա կաթսայի մեջտեղում կոնաձև գնդի նման: Սակայն ուժեղ խառնելուց առաջանում է ուրիշ վտանգ — խոշոր հատիկները կհեխառնելուց առաջանում է փխրեցում, իսկ մանրերը կմնան մեջտեղում և դրա հետևանքով ստացված պանիրը յեղերքներին կունենա առատ նկար, իսկ մեջտեղում՝ քիչ նկար կամ նույնիսկ բոլորովին «կուլը» կլինի: Լավ արդյունքներ են ստանում այսպես վարվելիս. ուժեղ խառնելը վերջացնելուց հետո քիչ ժամանակով (1/2—1 բոպեյով) խառնիչն ողորհայաց դրութեամբ դնում են հաթսայի մեջտեղը՝ պանրացու դանդաժի մեջ ձագարտձև փոսացման առաջանալը խանգարելու նպատակով:

Բոլոր բարենաչող պայմաններում լեռնային և հախալեռ-

նային շրջաններում խառնելու համար նորմալ ժամանակը համարվում է 40—60 րոպեն, տափաստանային շրջաններում խառնելու ակտուալությունը կարող է հասնել 2 ժամի և ավելի:

Պանրացու զանգվածի մշակման վրա հսկելու համար կայրելու պրակտիկ մեթոդ. ա) հատիկը մատները արանքում սեղմելը և բ) հատիկը բուսն մեջ սեղմելով գունդ դարձնելը:

Առաջին մեթոդով վորոշվում է գլխավորապես հատիկի ներքին դրուսթյունը և դա կիրառվում է աշխատանքի սկզբում, խսկյերկրորդը ցույց է տալիս հատիկի ընդհանուր դրուսթյունը՝ խառնելու ժամանակ:

Մատների արանքում սեղմելիս հատիկը պետք է տափակվի և գառնա պինդ մասսա՝ առանց տրաքվելու և առանց սպիտակ գույնի շիճուկ արտադրելու:

Սեղմելով գնդիկ դարձնելիս հատիկները պետք է իրավ լավ կպչեն, գնդիկը մատների վրա պետք է տա կոտրվածք, խսկ գնդիկի միջի հատիկները պետք է իրարից դանդաղ բաժանվեն, բայց վոշ փշրվեն. հատիկները պետք է լավ փշրվեն գնդիկը ձեռներին արանքում տրորելիս և հենց այդպես տրորելով գլխավորապես և վորոշվում է պանրի չորուսթյունը, ամրուսթյունը և կապակցությունը խառնելու ժամանակ:

### 13. ՊԱՆԻՐԸ ՀԱՆՆԵԸ

Սառնելը վերջացնելուց հետո դադարից 2—3 րոպե անց պանիրը հանում են  $1,5 \times 1,7$  և ք մեծութուն ունեցող ցանցակտավի (սերպյանիկա) միջոցով: Ցանցակտավի մի ծայրը փաթակտավի հետ անցկացնում են ամբողջ պանրի զանգվածի տակ, զգուշությամբ թիթեղիկն անցկացնելով կաթսայի հատակի և պանրի զանգվածի միջև:

Այդ ժամանակ պետք է ձգտել վոր պանրի գնդիկը ցանցակտավի մեջ ընկնի ամբողջապես՝ առանց կոտրովելու կամ շուտ գալու: Ապա զանգվածը ցանցակտավի մեջտեղը տանելով, վերջինի ծայրերը կապում են խաչածե, պանրի զանգվածը կախում են ճախարակից և 1 րոպեից վոշ ավելի պահում են կաթսայի վրա, վոր շիճուկը հոսի: Ապա առաստաղին հարմարեցրած սեղանով պանրացու զանգվածը փոխադրում են մամլելու սեղանի վրա և իջեցնում են նախապես պատրաստված շրջանակի և խմբի (կադապար) մեջ:

այդ կատարում են դանդաղ և դժուշ, վորպեսզի դանդախան ըստ հնարաւորութեան մնա հոծ (կոմպակտ), առանց ճաքերի: Ճախարակից հանելիս և զանգվածը խեմի մեջ դնելիս անհրաժեշտ է մեկ ձեռքով սեղմել ցանցակտաւը հանգուցից ներքև, իսկ մյուսով պանրի զանգվածը քշել խեմից դեպի մեջտեղը, վորպեսզի խոր ճաքեր չառաջանան: Յեթե հետագայում մամլելուց հետո պանրի գլխի հարթ մակերեսներից մեկի վրա կմնան սպիտակ շերտեր կամ տաք նկուղում կառաջանան ճաքեր, այդ ցուցց կտա, վոր պանրի հանելը և առաջին մամլումը կատարված է վոչ ճիշտ, անդգուշ և անշնորք ձևով:

Կարեւորագոյն մնացած պանրազանգվածը հանում են նույնպես ցանցակտաւի ողնութեամբ: Այդ մնացորդը հանելիս չպետք է ուժեղ սեղմել, վորպեսզի դրանով չվերանա ընդհանուր զանգվածի հետ կաշիւու հնարաւորութեանը: Այդ մնացորդը՝ գնդիկ դարձրած՝ խոշոր կարտոֆիլից մեծ չպետք է լինի. յեթե նա դրանից մեծ է, այդ ցուցց է տալիս, վոր պանիրը սխալ է հանված: Մնացորդ զանգվածը, վոր կազմված է մանր և խոշոր հատիկներից, դնում են վոչ թե ընդհանուր զանգվածի մեջտեղը, այլ յեզերքին—խեմի մոտ: Այդ արվում է նրա համար, վոր չփչանա պանրի ընդհանուր նկարը, վորովհետև այդպիսի միացումների տեղերում ստացվում է վատ նկար և պանիրն ունենում է նույնիսկ ճարպի համ: Սակայն և այնպես պանրի եկապերտիղէ ժամանակ այդպիսի արատի համար ընդհանուր գնահատականից զեղչ չէ կարելի կատարել, յեթե գնդիկը կպցրած է կողքին:

## 14. ՊԱՆՐԻ ՄԱՍԼՈՒՄԸ

Եմմ չնթալ պանրի մամլման համար գործադրվում են լծակային տիպի հատուկ մամուլներ:

Մամլելու միջոցով հեռացվում են հատիկների արանքում դանդաղ ավելորդ շիճուկը և ուրիշ նյութեր (կաթնաշաքար, վորը հանդիսանում է հիմնական նյութ պանրի խմորման ժամանակ տեղի ունեցող միկրոբիոլոգիական պրոցեսների համար):

Իսցի այդ, մամլումը պանրին տալիս է սահմանված ձևը, նրա զանգվածին՝ միատեսակութուն և նպաստում է կեղևի առաջացմանը:

Մամլելու ժամանակ անհրաժեշտ է կատարել հետևյալը.

1. Պանիրը շուտ տալ մեծ դժուշութեամբ և ուշադրութեամբ՝

պանրի յերեսին ճաքեր առաջանալուց խուսափելու համար, չխախտել նրա ձևը, խմորը մեկ կողմի վրա չշարժել, խնմը ձգելիս հետևել, վոր դանդվածը համաչափ բաշխվի, խուսափելով թծրեկներէց և այլն: Այդ պրոցեսի ժամանակ յուրաքանչյուր թերացում բացասաբար և ազդում նկարի վրա (նրա անհամաչափ բաշխվելը):

2. Առաջին անգամ շուռ տալու ժամանակ, շուռ աված հարթ մակերեսին թև թև կերպով ձևաքով շփելիս պանրի զանգվածից պետք և բաժանվին առանձին հատիկներ, վորոնք շոշափվում են ձևաքի տակ՝ ստեղծելով ավազոտութեան տալափորութեան: Այս յերևուցթը ուսերին արտահայտվում և «ВАТЯР» տերմինով: Յեթև պանիրը նորմալ և պատրաստված, այդ յերևուցթը տեղի յե ունենում, իսկ նրա բացակայութեանը ցուցց և տալիս, վոր պանիրն ունի աննորմալ հատկութեաններ: Ձևաքով թեթև կերպով պանրի տափակ մակերեսին ճնշելիս մատներէ ծայրերի տակ փոքրիկ փոսիկներ առաջանալիս պետք և սրացվին Պանր ճաքեր:

3. Պանրի մամլելու ամբողջ ժամանակ, մինչև այն ազարան փոխադրելը, ձևաքով կամ մատներով նրա վրա ճնշելիս առաջացած փոսիկները պետք և վայրկենաբար ուղղվին:

Այդ յերեք ցուցանիշների չլինելը վկայում և պանրացու դանդվածի վոչ նորմալ կազմվածքի մասին, վորն առաջ և դալիս վատորակ կաթից, կամ հատիկի վատ չորանալուց, կամ խոշոր հատիկները վոչ բավարար չափով մշակելուց և այլն: Այդ դեպքում պանրի խմորը կլինի վոխր, սպունգաձև, իսկ զրա հետևանքով պանիրն ունենում և համի և նկարի արատներ:

Առաջին յերկու ցուցանիշների տեսակետից (НАТЯР և մանր ճաքեր սաանալը) պանիրը փորձարկել հնարավոր և միայն պանրացու զանգվածի ներքեի կողմի վրա՝ առաջին անգամ շուռ տալուց հետո և առաջին մամլումը 8 րոպեից ավելի յերկարատե չլինելու դեպքում:

4. Մամլելու սկզբին մամուլի ճնշումը պետք և թույլ լինի: Ճնշումը պետք և ուժեղացնել աստիճանաբար: Մամլելու սկզբին թույլ ճնշելու դեպքում պանիրը կպաշտպանվի նրա վրա արագ կերպով հաստ կեղև առաջանալուց, վորը կխանգարի շիճուկի կանոնավոր անջատվելուն:

Շուռ տալը կամ վերամամլումը պետք և կատարվի վորոշ ժամանակամիջոցներում, այն և՛ առաջին մամլման սկզբից մինչև առաջին շուռ տալը պետք և անցնի 5—8 րոպե և՛ մամուլի:

1:4—6 ճնշման դեպքում. յերկրորդ շուռ տալը՝ առաջինից 15 բույկ հետո՝ 1:7—8 ճնշման տակ. յերրորդ վերամամլումը՝ յերկրորդից 30 բույկ հետո՝ 1:9—10 ճնշման դեպքում. չորրորդը՝ մեկ ժամ հետո՝ 1:11—12 ճնշման դեպքում, հինգերորդը՝ յերկու ժամ հետո՝ 1:13—14 ճնշման դեպքում, վեցերորդը՝ 2 ժամ հետո, յոթերորդը՝ 2 ժամ հետո՝ լրիվ ճնշման դեպքում, ութերորդը՝ 3 ժամ հետո, իներորդը՝ 4 ժամ հետո, տասերորդը՝ 4 ժամ հետո և վերջապես մամլումն առանց ցանցակտավի՝ 1 ժամ: Մամլելու ամբողջ պրոցեսը տևում է մոտ 20 ժամ:

Մամուլի լրիվ ճնշումը պետք է լինի հետևյալը. 55—65 կգ քաշ ունեցող պանրի համար՝ 1 կգ պանրին 15—16 կգ ճնշում (1 : 15—16). 70—80 կգ-ի համար՝ 1 : 17—18, 80 կգ-ից ավելի՝ 1 : 19—20:

5. Ամեն անգամ պանիրը շուռ տալիս գործադրում են թարմ մաքուր ցանցակտավ, իսկ հինգերորդ կամ վեցերորդ անգամ շուռ տալուց սկսած ցանցակտավը յերկու տակ են դնում. նախապես շուռ տալու ժամանակ պանրի կողերը մամլում են առանց ցանցակտավի. վերջին՝ մամլումը, վորը տևում է մեկ ժամից վոչ ավելի, կատարվում է առանց ցանցակտավի, վորպեսզի հարթվեն այն խորդուրդությունները, վորոնք առաջանում են պանրի մակերեսին վորոքած կտավից:

6. Հինգերորդ շուռ տալուց սկսած ցանցակտավի անկյունները պանրի վրա չեն հավաքում, ցանցակտավները պետք է հավասար ձգված լինեն պանիրների մակերեսներին առանց վորևե ծալքերի, վորովհետև հետագայում հասունացման ժամանակ նրա մակերեսին ձաքեր են առաջանում:

7. Վորպեսզի պանրացու դանգվածը դուրս չմղվի մամլելու շրջանակի և խեմի միջև, վերին ցանցակտավը պետք է ուղղել պանրի և խեմի միջև այնքան ձիգ, վոր մամուլի ճնշումից այդ մաստան դուրս չմղվի, վորը հետո պետք է լինի կարելի:

Խեմը պետք է ձգել այնքան, վոր մամլելու շրջանակի և խեմի մեջ յեղած տարածությունը լինի մինիմալ, վորպեսզի պանրախմորը մեծ չափով դուրս չմղվի:

Դուրս մղված պանրախմորը պետք է անսպասման կարելի վոչ մի դեպքում չպետք է այն թողնել և մամլել, վորովհետև ծալված շերտը նկուղում հետ կքաշվի և կստացվի ձաք: Պետք է նշել վոր Ընդհանրապես ցանկալի չեն վոչ շրջանակի և խեմի արանքում խմորի դուրս մղվելը, վոչ էլ կարվածքները:

8. Առաջին յերեք անգամ պանիրը շուռ տալու ընթացքում ցանցակտավին կաշելու նրա վորոշ հակումը թույլատրելի յերե-  
վույթ է, նույնիսկ ցանկալի, վորովհետև այդ ցույց է տալիս,  
վոր նրա պատրաստումը նորմալ է ընթանում: Յեթե կաշում է  
և ուժեղ կերպով և յերկարատև, այդ դեպքում անհրա-  
ժեշտ է պանիրն ավելի հաճախ շրջել, խսկ ծայրահեղ դեպքում  
նրա վրա դնել թաց սառը ցանցակտավ: Ցանցակտավը պանրի  
վրայից հեռացնելիս չպետք է նրա հետ միասին հեռացնել կաթ-  
կեղեր. պետք է ձևուք առնել բոլոր միջոցները, վոր կեղեր մնա,  
որինակ՝ ցանցակտավը սառը ջրով թրջելով կամ մետաղյա գդա-  
լով քերելով—սովելով ցանցակտավից անցած պանրազանգվածը:  
Ցանցակտավը հանելիս զգուշություն գործադրելն անհրաժեշտ է  
այն պատճառով, վոր կեղևի վերավորված տեղում հետագայում  
հեշտությամբ արաջանում են նեխման բնույթի ձաքեր:

Կեղեր ցանցակտավին կարող է պինդ կաշել բարձր աստի-  
ճանի թթվություն ունեցող կաթից, գերթթված կուլտուրական  
մակարդից, կաթի արագ մակարդվելուց, գերչորացած հատիկից,  
յերկրորդ անգամ բարձր ջերմաստիճանում տաքացնելուց և այլն:  
Այդպիսի պանրի մեջ սովորաբար նկատվում է վոշ ճիշտ նկար,  
կոտրվող, նույնիսկ վերջվող խմոր՝ թթու համով:

9. Յուրտ ժամանակ այն շինքում, վորտեղ կատարվում է  
մամլումը, ջերմաստիճանը պետք է լինի վոշ պակաս 20-ից և  
պետք է պանիրը պաշտպանել հողմահարվելուց, հակառակ դեպ-  
քում պանրի կեղեր կոպտանում են, կեղևի տակ մնում է շիճուկ և  
պանրի մեջ սառցվում է տարբեր նկար—կեղևի տակ առատ, մեջ-  
տեղում՝ նորմալ:

10. Մամլելու ժամանակ արտադրվող շիճուկը պետք է լինի  
թափանցիկ, վոշ մածական, կանաչ-դեղինավուն (վոշ յերբեք սպի-  
տակ): Հինգերորդ անգամ շուռ տալուց հետո շիճուկը մամլելու  
ըջանակից դուրս չպետք է հոսի. նա պետք է այնքան արտադրվի,  
վոր ցանցակտավը կարողանա այն իր մեջ ազատ կերպով ձծել:  
Մածական կամ սպիտակ գույնի շիճուկի դուրս գալը նշան է, վոր  
պանրի մեջ խմորումը ճիշտ չի ընթանում՝ կաթը քլասակար բախ-  
տերիաներով վարակված լինելու հետևանքով, զլխավորապես կեղ-  
տոտ ամաններից:

11. Մամլելու վերջում պանիրը պետք է ունենա դեղնավուն  
գույն: Լույզպիս հարթ մակերեսներին, այնպես և կողերին պանի-  
րը պետք է ունենա մանր սպիտակ բծեր: Պանիրը չպետք է

11  
լինի կարմրավուն և ուժեղ դեղնավուն գույնի, վոչ ել սպիտակ գույնի, կամ մակերեսին չպետք է ունենա սպիտակ խալեր և շերտեր: Պանրի կարմիր կամ ուժեղ դեղին գույն ունենալը նշան է, վոր նա մշակվել է բարձր թթվուլթյուն ունեցող կաթից կամ գերչորացած հատիկից, յերկրորդ անգամ բարձր աստիճանում է տաքացվել և այլն: Նման պանիրն ունենում կոտորվող, փուխր և թթվաչ համ ունեցող խմոր: Պանրի մակերեսին յեղած սպիտակ գույնի շերտերը կամ սպիտակ խալերը ցույց են տալիս, վոր հատիկը թույլ է, բավականին մշակված չէ. այդպիսի դեպքերում պանիրը հակում կունենա ուռչելու և նեխած ճաքեր առաջացնելու:

12. Չեռքով պանրի մակերեսին խփելիս պետք է լավի մաքուր, վոչ դատարկ և վոչ ել խուլ հնչյուն: Աննորմալ հնչյունը ցույց է տալիս, վոր պանրի խմորումը ճիշտ չի ընթանում, և վոր նա նույնիսկ մամուլի տակ ուռչում է:

13. Մամուլը վերջացնելուց հետո պանրի սուր յեղերքները կտրատում են, պանիրը կշռում են և տանում աղաբան:

14. Պանրի դրոշմանշումը (մարկիրովկա) կատարվում է շերտերդ կամ հինգերորդ մամլման ժամանակ, կամ արդեն պանիրը մամուլի տակից դուրս հանելու ժամանակ և աղաբան տանելուց առաջ:

Առաջին դեպքում դրոշմանիշը լավ է պահպանվում, չի լվացվում, չի ջնջվում, մնում է միշտ պարզ և դյուրընթեռնելի: Դրոշմանիշը (մարկան) կայցնում են հետևյալ ձևով.

Նշաններն անում են հեղուկ մանիշակագույն ներկով կամ ջրի, կամ շիճուկի մեջ լուծված մրով: Պանրի վրա դրած մարկան անմիջապես ծածկում են հատկապես դրա համար առանձնացրած ցանցակտավով (վորպեսզի բոլոր ցանցակտավները և մամուլու շրջանակները չկեղտոտվեն) և պանիրը մամուլում են: Ներկը լավ է ներծծվում, ցանցակտավները փոփոխելուց և վերամամուլուց մաքրեցնելուց հետո պանրախմորի մեջ և ընդմիջտ մնում է պարզ և ընթեռնելի:

Պանիրը մամուլի տակից հանելիս մարկան զրվում է նաև հեղուկ ներկով, սակայն վորովհետև այս դեպքում մարկան պանրի մեջ խոր չի թափանցում, այդ պատճառով ել շուտով լվացվում— գնում է:

Մարկան կայցվում է պանրի մի հարթ կողմի վրա:

Մարկայի մեջ պետք է անպայման ցույց տրված լինի՝

Պանրի համարը—տարվա կամ սեզոնի սկզբից, պանրի պատ-  
րաստման ամիսը և թիվը:

Պանրի զրոշմանշման ժամանակ կատարվող այլ նշումներ  
մասին տես եջ 75՝ (զրոշմանշում ըստ ՈՍՏ-ի):

## 15. ՊԱՆԻՐՆ ԱՂԵԼԸ

Պանիրն աղելու նպատակն է նրան համ տալ, համապա-  
տասխան ազդեցութուն գործել նրա հասունացման ընթացքի  
վրա և ուժեղացնել նրա դիմացկունութունը պահելիս:

Եմմենիթալ պանիրն աղում են յերկու յեղանակով՝ չոր քա-  
անելով և աղաջրով:

Չոր աղ անելը կատարվում է հետևյալ կարգով: Պանրի վրա-  
յից հանում են խեմը, մաքուր աղաջրի մեջ թրջած շորով կամ  
ճիւղպով թրջում են պանրի կողերը և խեմը, վորի ներքին կողմի  
վրա շաղ են տալիս մանր աղ և նորից հագցնում են պանրի  
վրա: Այս թրջում են փայտե շրջանակը, շաղ են տալիս նրա  
վրա աղ և այդ շրջանակի վրա դնում են պանիրը. դրանից հետո  
ուժեղ կերպով թրջում և աղում են նրա վերին յերեսն այն հաշ-  
վով, վոր աղաջուրը մի քիչ հոսի կողքի կողմերի վրա՝ պանրի և  
խեմի միջև:

Չոր աղ անելը (առանց աղաջրի) կատարվում է չորս որվա  
ընթացքում, ընդ վորում պանիրն աղարան բերելու առաջին որն  
աղում են յերկու անգամ, իսկ հետևյալ 3 որը—որական մեկ ան-  
գամ: Գործածում են մանր աղ և այն շաղ են տալիս համաչափ  
կերպով, վերպետի կեղևի վրա փոսեր և ուրիշ անհարթութուն-  
ներ չառաջանան:

Այդպես աղ անելուց հետո խեմը հանում են, պանիրը լվա-  
նում են, շուռ են տալիս մաքուր չոր շրջանակի վրա, չորացնում  
են և մեկ որ հետո աղում են սովորական ձևով:

Պանրի աղելը աղաջրով.—Այս շատ հասարակ և վատանելի  
յեղանակ է, սակայն պահանջում է մեծ ուշադրութուն:

Այս յեղանակով աղելու համար անհրաժեշտ են ցեմենտե  
բաքեր 1 մետր լայնությամբ և 1,3—1,5 մ խորությամբ:

Աղաջուրը պատրաստում են հետևյալ յեղանակով. 100 կգ  
յեռացրած և պահեցրած ջրին վերցնում են 22—24 կգ «պերմյան-  
կա» կամ «սլավոնական» կոչված աղից, կոշտ աղն անպետք է—  
նա պանրին դառնութուն և տալիս: Աղը լրիվ լուծվելու համար

աղաջուրը թողնում են մնա 3 որ, ընդվորում յուրաքանչյուր ար-  
յերկու-յերեք անգամ աղաջուրը խառնում են և միայն չարբարդ  
որը նրա մեջ գցում են պանիր:

Աղաջրի թնդությունը պետք է լինի 22—24° ըստ Բոմեյի:

Աղաջրի թնդությունը գործնականում վորոշում են տյա-  
պես. աղաջրի մեջ լողացող պանրի հարթ մակերեսն աղաջրից  
գուրս պետք է դանվի 1 սմ-ից վոչ ավելի. աղաջրի մեջ «կանդ-  
նած» (կողքի վրա) լողացող պանիրը նրա միջից գուրս պետք է  
դանվի վոչ ավելի, քան 20 սմ և վոչ պակաս քան 15 սմ:

Յեթե պանիրն աղաջրի մեջ ավելի խորն է սուզվում, այդ  
ցույց է տալիս աղաջրի թուլությունը և հետևաբար պետք է  
ավելացնել աղ, իսկ յեթե պանիրն աղաջրի մեջ քիչ է սուզվում,  
քան ցույց է տրված, այդ նշանակում է, վոր աղաջուրը շատ թուլնդ  
է և և այն պետք է թուլացնել շուր ավելացնելով: Աղաջրի մեջ  
պահվող պանիրները պետք է ամեն որ շուտ տալ, ընդ վորում  
աղաջրի մշտական (վորոշ) թնդությունը պահպանելու համար  
պանրի վերին՝ աղաջրից գուրս դանվող մասի վրա որակաւն մեկ  
անգամ աղ են շաղ տալիս:

Թույլ աղաջրից պանիրը դառնում և լորձնոտ, նա ունենում  
և անդուր հոտ. աղաջուրը քայքայվում է: Նման պանիրները հեշ-  
տությամբ ձապաղվում են, կեղևի տակ առաջանում են մեծ աչ-  
քեր, դատարկություններ, ապա այդ տեղերում առաջանում են  
խոտոչներ: Թուլնդ աղաջրից, ընդհակառակը, պանրի կեղևը շատ  
և կոպտանում, նրա տակ կարող է առաջանալ յեղջերային յեն-  
թակեղեային շերտ, վորի միջով աղը վատ է ներծծվում:

Յեթե աղաջուրը պղտորվում է և ունի նեխած հոտ, այդ  
դեպքում նրա փոխարեն պետք է պատրաստել նորը:

Աղաջրի և աղարանի ջերմաստիճանը պետք է լինի 10—12°,  
աղարանի հարաբերական խոնավությունը՝ 90—92 % , աղաջրի  
թթվությունը՝ վոչ բարձր 35°-ից ըստ Թյորների:

Պանիրն աղաջրի մեջ են պահում յերեք որ:

Թե չոր յեղանակով և թե աղաջրով աղելուց հետո պանիրը  
վանում են, դնում են չոր, մաքուր շրջանակի վրա, հետեյալ որն  
այն շուտ են տալիս մի ուրիշ չոր, մաքուր շրջանակի վրա և յեր-  
բորդ որվանից սկսում են սովորական ձևով աղ անել:

Յերկու որվա ընթացքում աղ անելուց և չորացնելուց հետո  
պանիրը պահում են աղարանում ելի 8—9 որ, վորի ընթացքում

ամեն որ այն ազուճ են սովորական ձևով: Այդ ժամանակն անց-  
նելուց հետո պանիրը խմորման նկուղ (տաք նկուղ) են տանում:

«Պափորական ձեզով ազ անկը» կատարվում է հետևյալ կար-  
գով: Պանիրները շուռ են տալիս վերին չոր տափակ կողմի վրա,  
կողերը լվանում են ջրի կամ թուլլ աղաջրի մեջ թրջած լաթով  
կամ ձիլոպով, չորացնում են չոր լաթով (հին ցանցակտափնե-  
րից): Կարգ վերին տափակ կողմը թեթև կերպով թրջում են ջրով  
և հատուկ ճանր մաղի միջոցով վրան աղ են շաղ տալիս այն  
հաշվով, վոր պանիրը մեկ անգամ աղ անելուց մինչև մյուս աղ  
անելը կարողանա ծծել լուծված աղը և չորանա: Սովորական  
ձևով աղ տնել կարելի չէ ամեն որ, որը մեջ, և յերկու որը մեկ  
տնեղած, նայած պանրի հասակին:

Այ անելուց հետո, նորմալ պայմաններում, այսինքն՝ նկու-  
ղի ջերմաստիճանը՝ 10-ից վոչ պակաս լինելիս, պանիրը ճիշտ  
թրջելիս և նկուղի խոնավութունը 80% -ից պակաս չլինելիս,  
աղը պետք է 3—4 ժամ հետո լուծվի: Այդ ժամանակամիջոցում  
չլուծված աղը ցուցց և տալիս, վոր կամ նա շատ խոշոր է, կամ  
պանիրը բավարար չափով չի թրջված, կամ նկուղում խոնավու-  
թյունն անբավարար է, կամ ջերմաստիճանը շատ ցածր է:

Պանրի օփելը.— Վորպեսզի աղը պանրի յերեսին հավասա-  
րաչափ բաշխվի, սովորական ձևով աղ անելիս կատարում են  
այսպես կոչված պանրի «շիումներ»:

Շիումը կատարվում է հատուկ խողանակներով: Պետք է  
ուսենալ յերկու ձեի խողանակ—մեկը՝ առաջին անգամ շիկու-  
համար, վորը պետք է լինի ցանցառ, մյուսը՝ յերկրորդ և յեր-  
րորդ շիումների համար՝ խիտ: Խողանակները պատրաստում են  
ձիու մաղից:

Առաջին շիման ժամանակ սկսում են յեղերքներից և դնում  
գետլի կենտրոն, հետագա շիումների ժամանակ, ընդհակառակը,  
պանրի կենտրոնից դնում են դեպի յեղերքները:

Շիման առաջին յեղանակի նպատակն այն է, վոր առաջա-  
ցած ամբողջ աղի լուծույթը մնա պանրի մակերեսին. դրա հա-  
մար խողանակով այն հավաքում են պանրի մակերեսի մեջտեղը,  
իսկ յերկրորդ մեթոդի նպատակն է աղի լուծույթի մնացորդը  
կենտրոնից խողանակի միջոցով տանել ավելի չորացած յեղերք-  
ները: Այսպիսով լուծված աղի շիման այս յերկու մեթոդների  
կիրառմամբ աղի լուծույթը հավասարաչափ կբաշխվի պանրի  
ամբողջ մակերեսին:

Պանրի յերեսին չշիված անդ չպետք և թողնել, վորովհետև չարորված աղն ուտում և կեղևը և այդպիսի տեղերում առաջանում և չոր փտում. վորն արդին պանրի արաս և հանդիսանում:

Առաջին շիման ժամանակ, ճիշտ աղ արած լինելու դեպքում, լուծված աղը հոսում և պանրի կողքի մակերեսներով, շիթերի նման: Այդ պատճառով շիումից հետո պետք և շատ խնամքով լաթով սրբել պանրի կողքերը. յեթև շիելու ժամանակ շիթեր չհն առաջանում, այդ ցույց և տալիս, վոր թույլ և աղ արած, վորը և դանդաղեցնում և պանիրն աղելու պրոցեսը:

Շիումները պետք և կատարել յերեք անգամ:

Ամենորջա աղումների դեպքում առաջին անգամ շիում են 3—4 ժամ հետո, յերկրորդ անգամ՝ առաջին շիումից 4—5 ժամ չհատ և յերրորդը՝ յերկրորդ շիումից 5—6 ժամ հետո:

2 և 3 որը մեկ անգամ աղ անելու դեպքում առաջին շիումը կատարում են 5—6 ժամ հետո, յերկրորդը՝ առաջինից 8—10 ժամ հետո, յերրորդը՝ յերկրորդից 12 ժամ հետո: Յեթև պանիրը կշարանա առանց յերրորդ շիման, այդ դեպքում թույլ են աղ անում: Յուրաքանչյուր 4—5 որ անհրաժեշտ և խոզանակները լվանալ տաք ջրում և լավ չորացնել:

Ուշադրությամբ շիելիս պանրի աղ ուտելն ավելի արագ և կատարվում:

Պանրի քոջելն աղ անելու ժամանակ.—Սովորական ձևով աղ անելիս պետք և պանիրը լավ թրջել: Առատ թրջելիս աղն ավելի արագ և լուծվում և ներծծվում պանրի մեջ, թույլ թրջելիս՝ խոնավության պակասության պատճառով աղը դանդաղ և լուծվում և նույնիսկ իր լուծման համար պակասող խոնավությունը ծծում և պանրից. լավ թրջելիս պանրախմորի աղ ուտելը և արցունքների առաջանան ավելի արագ և կատարվում: Յեթև առատ թրջելուց առաջին շիման ժամանակ պանրի կողքի մակերեսին թրջելուց հետո, վորը պետք և անպայման սրբել, և դրա առաջանում են շիթեր, վորը պետք և անպայման սրբել, և դրա հետևանքով կարիք կլինի կատարել ելի մի ավելորդ շիում, ապա հետևանքով կարիք կլինի կատարել կլինի, բայց դրա փոխարեն այդ այդ շատ փոքր աշխատանք կլինի, բայց դրա փոխարեն այդ ձևով աղ անելիս պանիրն ավելի լավորակ կստացվի: Բայց և մակերեսը մինչև հետեյալ աղ անելը միանգամայն չարանա:

Պանիրը թրջելու համար գործածվող ջրի ջերմաստիճանը պետք և հավասար լինի նկուղի ջերմաստիճանին: Սառը ջրով պետք և խմորումը, տաքը՝ արագացնում և, բացի

այդ, յեկե ջրի ջերմաստիճանը 25°-ից բարձր և, այդ դեպքում նա նպաստում և պանրի հարթ մակերեսին «յուղոտ» կեղևի առաջանալուն և նրա ճարպոտվելուն, վորն արդեն պանրի համար արատ և համարվում: Այդպիսի կեղևը հեշտությամբ և ճաքճքում, աղ անելուց հետո դանդաղ և չորանում և արագ և քրտնախառվում (подпаривание): Պանիրը կարելի յե թրջել թույլ՝ 10% -անի ազալումույթով:

Պանրի կողմերի մակերեսին յեթաձ բուսական յուղ (ռլիճ) րոնելը.— Խոնավ նկուղներում, վորտեղ պանիրների կողքերի մակերեսները դժվար և լինում պատշաճ մաքրությամբ պահել, խորհուրդ և տրվում այդ մակերեսներին վերջին իրար հաջորդող յերկու աղումների ժամանակ մեկական անգամ քսել դոլ ոլիֆը պետք և քսել ամբողջ կողքի մակերեսին համաչափ կերպով և առանց վորեն տեղ բաց թողնելու:

Քսելուց վորոշ ժամանակ հետո պանրի կողքերը դառնում են մութ գույնի, ընդ վորում կողքի մակերեսը վոչ լվանում են և վոչ ևլ քերում, վորը հեշտացնում և աշխատանքն աղ անելիս:

Քսելու ժամանակ պետք և աշխատել, վոր ոլիֆը չթափվի պանրի հարթ մակերեսին, այլապես այդպիսի տեղերում կարող են առաջանալ սպիտակ բծեր, իսկ հետո՝ նաև նեխում:

Առանց ոլիֆ քսելու աղ անելիս պանրի կողքերը պետք և յուրաքանչյուր անգամ աղ անելիս լավ լվալ և սրբել—չորացնել չոր լաթով: Կողքերին քսում են պանիրը խմորման նկուղ տանելուց 8—10 որ հետո, յերբ նա արդեն կտաքանա և կհասնի շենքի ջերմաստիճանին: Քսելուց առաջ կողքերն ուժեղ կերպով աղով շփում—քերում են, ապա լվանում են ջրով և չորացնում: Քսելուց հետո պանիրը թողնում են չորանա մինչև հեռեյալ որը. հետև վյալ որը պանիրը շուռ են տալիս և քսում են յերկրորդ անգամ:

Յերբորդ որն սկսում են աղ անել սովորական ձևով: Ոլիֆ քսելու ժամանակ պանիրը չեն աղում:

1<sup>1</sup>/<sub>2</sub>—2 ամիս հետո պետք և դանակով քերել—մաքրել կողքի մակերեսը, լավ լվանալ և նորից քսել ոլիֆ: Պանիրն սպաստակայն այլևս ոլիֆ չեն քսում: Այդպիսի խնամքի դեպքում պանրի կողքերն ունենում են շատ գեղեցիկ, դեղնավուն գույնի տեսք, վորը մնում և նաև պահեստներում պահելիս: Ոլիֆից պանիրը վոչ մի կողմնակի՝ իրեն վոչ հատուկ հոտ ու համ չի ստանում:

Գտելու համար գործածվող ոլիֆը պետք է պատրաստված լինի կոստիկատի ձևովից:

Պանրի հարթ մակերեսների խնամքը: Աղելու ժամանակ պանրի հարթ մակերեսին կուտակվում է կեղտ և լորձ, վորը մաքրում են բսա պահանջի—մոտավորապես յուրաքանչյուր 1½—2 ամիսը և Մաքրում են յերկու յեղանակով—լվանալով և քերելով:

Լվանում են այսպես. պանրի յերեսն ուժեղ կերպով թըրջում են գուլ (20—25°) ջրով, խնամքով շփում են փափուկ բուսական խողանակով, ապա կեղտը լվանում են և պանրի յերեսը սրբում են լաթով. շուռ տալով պանրը հենց այդ շրջանակի վրա, այդ ձևով էլ մաքրում, լվանում և չորացնում են մյուս յերեսը և շուռ են տալիս թարմ չոր շրջանակի վրա, լավ սրբում—չորացնում են յերեսի կողմը, իսկ հետևյալ որն ազում են սովորական ձևով: Կեղտն ու լորձը հատուկ դանակով կամ քերիչով քերում—մաքրում են մեծ զգուշութամբ, ամենեկին չդիպչելով կեղևին: Պանրի յերեսից փոքրիկ կտոր անգամ պոկելու դեպքում կարող է նրա մեջ ճաք և նիստ մտնալ: Այդ պատճառով էլ յերեսը մաքրելու համար չեն քերում, այլ մեծ մասամբ լվանում են. լվանալը կեղևի համար վոչ միայն վտանգավոր չէ, այլև կեղևը միաժամանակ ավելի դիմացկուն է դարձնում, բացի այդ, լվանալուց հետո աղն ավելի լավ է ներծծվում, քան քերելու դեպքում:

Լավ դիմացկուն մակերեսը հաճախ պետք է ծածկված լինի սպիտակ, քորոցի գլխի մեծության բծերով, վորոնք նկատելի կերպով դուրս են պրծած նրա մակերեսին. մաքրելու ժամանակ այդ սպիտակ բծերը պետք է մնան. լավ մակերեսը հարթ չպետք է լինի: Նա պետք է լինի մոխրագույն: Հարթ, դեղնագույն պանրի յերեսը դիմացկուն չէ, ողի հոսանքից նա հեշտութամբ ճաքըրում է:

Փայտա օջառակների վախելը.— Անհրաժեշտ է միշտ պանրի ներք պահել չոր, մաքուր փայտյա շրջանակների վրա: Հենց վոր շրջանակը կդառնա խոնավ ու կեղտոտ, պետք է այն փոխել:

Ինչպես վոր թուլյատրելի չէ քրտնած, հարթ մակերես ունեցող պանրները շուռ տալ չոր շրջանակների վրա, այնպես էլ թուլյատրելի չէ չոր, մաքուր մակերես ունեցող պանրները շուռ տալ խոնավ ու կեղտոտ շրջանակների վրա: Թե մեկ և թե մյուս դեպքում տեղի յն ունենում մակերեսի քրտնախաշում, առաջանում է կեղևի անուղղելի արատ, վորից մթերքի արժեքն զգալիորեն ընկնում է: Քրտնախաշ յեղած մակերեսը դժվարութամբ է չոր

բանում, հեշտութեամբ ճաքճքում և, առանձնապես ողբի հոսանքին յննթարկվելու ժամանակ. մակերեսը դառում և թույլ, ստանում և նեխահոտ, վորն անցնում և (և բավականին խորը) պանրախճորին: Այդ պատճառով փայտայտ շրջանակների մաքրութեամբ պետք և շատ խիստ հետեւել: Շրջանակները փոփոխում են 10—15—20 որը մեկ անգամ՝ նայած պանրի հասակին, նրա խնամքին, նկուղների խոնավութեամբ: Նորմալ աշխատանքի դեպքում և նորմալ փոփոխման համար 100 գրուս պանրի համար պահանջվում և 125 փայտայտ շրջանակ:

Փոխելուց հետո ամառը շրջանակները ըփանում և լավ չորացնում են, խկ ձմեռը՝ միայն կեղտը քերում — մաքրում են և անպայման չորացնում:

Բացառապես յեղենու տախտակներից պատրաստած շրջանակների մակերեսը պետք և լինի հարթ, առանց փոսիկների, առանց ճաքերի. այդ առանձնապես կարեւոր և յերիտասարդ, ջընքուշ կեղև ունեցող պանիրների համար. նրանց համար ընտրում են ամենահարթ ու մաքուր շրջանակները:

## 16. ՊԱՆՐԻ ԽՆԱՄԲՆ ԱՂ ԱՆԵԼՈՒ, ԽՄՈՐՄԱՆ ՅԵՎ ՀԱՍՈՒՆԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Աղաւանում կամ սառը նկուղում. — Պանիրն աղաւան բերելու առաջին որը՝ ավելի արագ պողելու և ամբանալու համար, ուժեղ կերպով չոր աղ են անում, առաջին անգամ աղելուց 5—6 ժամ հետո առաջին անգամ շուռ են տալիս, դրանից 6—7 ժամ հետո յերկրորդ անգամ են շուռ տալիս՝ նույնպես աղ անելով: Հետեւյալ որն աղում են մեկ անգամ, յերրորդ որը խեմը հանելով՝ պանիրը վրայի աղով գցում են աղաջրի մեջ յերեք որով:

Առաջին որը պանիրը յերկու անգամ շուռ են տալիս նրա յերկու հարթ մակերեսները համաչափ պողելու համար. առանց քան կարճ ժամանակում չի կարողանա պողել: Առաջին յերկու որը պանիրն աղում են խեմի մեջ՝ նրա ձեւը պահպանելու համար: Այդ յերկու որվա ընթացքում սովորաբար պանիրն այնքան և պնդանում, վոր նրա ձեւի խախտվելու վտանգ չկա, այդ պատճառով հետագայում աղ են անում առանց խեմի:

Չոր կերպով աղ անելու դեպքում պանիրներն աղաւանում տեղափոխում են ավելի դով տեղ (ներքեւի յերկու դարակները),

ընդ վորում այդ դարակներէ վրա նշում են հատուկ տեղեր և ընտրում են հատուկ շրջանակներ, վորովհետև թէ դարակները և թէ շրջանակներն իրենց մեջ ծծում են այնքան աղ, վոր չեն չորանում, մնում են խոնավ և այդ պատճառով գրանք ուրիշ պանիրների համար գործածել չի կարելի:

Աղաջրի միջից դուրս հանված պանիրները տեղավորում են մնացած դարակների վրա և աղում են ամեն որ կամ որումեջ, նայած թէ նրանց յերեսներն ինչպես են չորանում: Սակայն ավելի լավ է աղ անել ամեն որ, վորպեսզի հարթ մակերեսներէ ջերմաստիճանը համաչափ լինի:

Աղաջրից հանելուց 8—9 որ հետո նորմալ առողջ պանիրները աանում են խմորման նկուզ, իսկ կասկածելիները դեռ 3—4 որ պահում են աղարանում, վորպեսզի ավելի խոր կերպով աղտան. նորմալ պանիրն աղարանում վոչ արտաքին տեսքից և վոչ էլ համի տեսակետից վոչ մի փոփոխութեան չպետք է յենթարկվի. նա պետք է լինի ամուր, առաձգական:

Խմորումն ցելուղում. — Պանիրն աղարանից խմորման նկուզ տեղափոխելիս այդ յերկու շենքերի ջերմաստիճանի տարբերութեանը 10-ից ավելի չպետք է լինի: Աղարանից տեղափոխված պանիրները խմորման նկուղում նույնպես անպայման տեղավորում են ներքին յերկու դարակների վրա (ավելի ցածր ջերմաստիճանում):

Նորմալ պատրաստած պանրի մեջ նկատելի խմորումն սկսվում է խմորման նկուզ տեղափոխելուց 15—18 որ հետո. ավելի կանուխ սկսվող խմորումն արդեն վտանգավոր է:

Յեթե պանրի կողքերն ոլիֆ են քսում, այդ դեպքում ավելի լավ է այդ կատարել պանրը խմորման նկուզ տեղափոխելուց 8—10 որ հետո:

Պանրի մեջ կատարվող խմորումը կանոնավորելու համար շոտ մեծ նշանակութեան ունի խմորման նկուղի խոնավութեանն ու ջերմաստիճանը:

Ջերմաստիճանի տատանում թույլատրելի չէ 2°-ի սահմաններում. որինսով, յեթե խմորման նկուղի մաքսիմալ ջերմաստիճանը 22° է, այդ դեպքում 20°-ից ցածր չպետք է իջնի, 20°-ի դեպքում կարող է իջնել մինչև 18° և այլն:

Խմորման նկուղի մաքսիմալ ջերմաստիճանը տարվա ընթացքում տատանվում է 18—22° Ց. սահմաններում:

Հարաբերական միջին խոնավությունը՝  $85\frac{0}{10}$ , սառանում-  
ները՝  $84$ -ից մինչև  $87\frac{0}{10}$ ։

Մամորման նկուղի ջերմաստիճանն ու խոնավությունը սահ-  
մանվում են նայած պանրի խմորման ընթացքին կարևոր է,  
վոր խոնավությունն ու ջերմաստիճանն ամբողջ խմորման նկու-  
ղում միատեսակ լինեն, իսկ դրա մասին դատելու համար ան-  
հրաժեշտ է շենքի դանաղան մասերում կախած ունենալ պսխո-  
րոմետրներ (խոնավաչափներ)։ Մամորման նկուղում չորությունը  
դանդաղեցնում է պանրի մեջ կատարվող խմորումը և նկարի  
առաջանալը, ստեղծում է մեծ չորակորուստ, և ընդհակառակը,  
մեծ խոնավությունից պանրի վրա բորբոս է առաջանում և խան-  
գարում է նորմալ կեղևակաղմությունը։ Տաքացնելու և ջերմաս-  
տիճանը պահպանելու համար կիրառվում են ջեռուցման դանա-  
ղան սխտեմներ—վառարանի, ողի, գոլորշու և ջրի միջոցով։

Հավագույն ջեռուցումը պիտի համարել ջրայինը, վորն  
ստեղծում է համաչափ տաքություն։

Մամորման նկուղի խոնավությունը կանոնավորելու համար  
կարելի չէ ոգտագործել գոլորշին, ընդվորում պետք է հաշվի  
առնել այն, վոր գոլորշին ողը խոնավացնում է փոքր տարածու-  
թյան վրա և դրանով ստեղծում է խոնավության անհամաչա-  
փություն։ Մամորման նկուղը, այլև մյուս նկուղները խոնավաց-  
նելու լավ, թերևս ամենալավ միջոցը հատակին փայտե թեփ  
շաղ տալը և այն սառը կամ տաք ջրով թրջելն է, նայած շենքի  
ջերմաստիճանին։ Փայտաթեփը, բացի համաչափ խոնավություն  
ստեղծելուց, հատակը լավ է պաշտպանում կեղտից։ Բավարար  
խոնավության դեպքում փայտաթեփը ջրով չեն թրջում։ Պետք  
է փայտաթեփը հաճախակի փոխել և վոչ մի դեպքում չթողնել  
այնքան, վոր փտի։

Ամառը ջերմաստիճանն ու խոնավությունը կարելի չէ կանո-  
նավորել լուսամուտները բաց անելով, սակայն խուսափելով մի-  
ջանցիկ քամիներից։ Յեթե կա մեքենայական ողափոխություն,  
այդ դեպքում ողը պետք է փոխել  $5-6$  ժամվա ընթացքում մեկ  
անգամից վոչ ավելի։

Պանրի խմորումն ըստ ինտենսիվության լինում է տարբեր  
Նորմալ պատրաստված պանրի մեջ խմորումը լրիվ վերջանում է  
մոտավորապես  $60$  օրում ( $40$ -ից մինչև  $80$  օրում)։ Մամորման  
ընթացքում լրիվ դադարել է, յերբ նա ամբացել և պնդացել է։ Դեռ խմոր



Չափավոր կամ սառը եկուղում.— Խմորումը վերջանալուց հետո պանիրները խմորման նկուղից տեղափոխում են չափավոր կամ սառը նկուղ՝ հաստունանալու համար:

Սառը նկուղում պանրի խնամքը գլխավորապես աղ անեղն է, վորը կատարվում է մեկ կամ յերկու օր հետո, խնամքով հետևելով կեղևին, յերեսի մաքրելուն և այլն:

Սառը նկուղի ջերմաստիճանը պետք է լինի 12—14°, խոնավությունը՝ 88—91%: Պանիրը պահվում է սառը նկուղում մինչև իրացման վայրերն ուղարկելը: Ուղարկելուց 1 կամ 1½ ամիս առաջ պանիրները պետք է դարսել իրար վրա 4—5 գլուխ միասին, նայած նրանց մեծությանը: Յուրաքանչյուր 4—5 օրը պանիրները վերադասավորում են այնպես, վոր ներքևից առաջինը դառնա վերևից առաջին, ներքևից յերկրորդը դառնա վերևից յերկրորդ և այլն: Այս ձևով դարսած թողնելը նպատում է պանրի մեջ արցունքների առաջանալուն և փափկացնում է խմորը:

Ուղարկելուց առաջ պանրի կողքերը քերում են և ազով հարթում, իսկ յերեսը լվանում են:

## 17. ՊԱՆՐԻ ԱՐԱՏՆԵՐԸ

Կա՛մ վորակի պանիր ստանալը կախում ունի չափազանց շատ պայմաններից և վարպետ պանրագործից պահանջում է մեծ զիտելիքներ, վորձ և մեծ ուշադրություն և զիտադրություն պանրի պատրաստման ամբողջ պրոցեսի ընթացքի վերաբերյալ՝ սկսած կաթը գործարան մտնելու մոտենտից մինչև պատրաստի պանիր արտադրելը:

Պանրի լավ վորակը կախված է գլխավորապես կաթի վորակից, պանրի ճիշտ մշակումից, այլև պանրի ճիշտ խնամքից՝ խմորման և հաստնացման ժամանակ:

Եմամենթալ պանրի արատները մենք խմրավորելի ենք ըստ առանձին ֆակտորների, վորոնք բնորոշում են նրա հատկությունները, միաժամանակ ցույց տալով այն հիմնական պատճառները, վորոնք առաջացնում են արատները:

### Ա. ՊԱՆՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄԻ ԱՐԱՏՆԵՐ

1. Պանրի ձապաղ ձևեր.— Առաջանում է թույլ թթվություն ունեցող կաթից, չհասած կաթից, մակարդման ցածր ջերմաստիճանից, խոշոր, չմշակված հատիկից, նկուղի բարձր ջերմաստիճա-

նից և ուժեղ խոնավությունից, պանրի կողքերը թույլ աղ անելուց՝ չոր ձևով աղ անելու դեպքում:

2. ձափեւ պանրի յեզեբէին. — Առաջանում են մամլելու շքրջանակի և խեմի արանքն անցած պանրի զանգվածը կտրելու, մամլելու ժամանակ խեմը պինդ ձգելու, խմորման նկուղում պանիրն անդդուշ շուռ տալու դեպքերում:

3. Զոր ձափեւ պանրի յերեօին. — Առաջանում են գերհասած կաթից, մշակման համար ստացված կաթի բարձր թթվությունից, գերհասած ինքնարուր շրդանամակարդից և բակտերիալ (գործարանային կուլտուրա) մակարդից, կաթի արագ մակարդվելուց, կաթի գերմակարդվելուց, մակարդածուն անխնամ մշակելուց, յերկրորդ տաքացման ժամանակ յեղած բարձր ջերմաստիճանից:

4. Պանրի յերեօին ցեխման բնույթ ունեցող ձափեւ. — Առաջանում են «խմորված» կաթից (խմորման փորձի ժամանակ խմորված թանձրուկ), կաթի յերկարատև փոխադրությունից, գերհասած կաթից, մամլելու ժամանակ թարմ պանրից շիճուկը վատ և անհամաչափ անջատվելիս, վորի հետեանքով պանրի յերեօին առաջանում են զոլեր կամ սպիտակ խալեր, վորոնց տակ մնում և շիճուկ և գրանից կեղևը թույլ և դառնում:

5. Քրեմախառ մակերեօ. — Պանիրը քրտնած կեղտոտ մակերեսի վրա կամ քրտնած կեղտոտ շրջանակի վրա շուռ տալուց, խիստ կեղտոտ, ալի ճարպոտած մակերեսից:

#### Բ. ՊԱՆՐԻ ՀԱՄԻ ԱՐԱՏՆԵՐ

1. Պանրի դառը համր. — Առաջանում է կովերին դառն բույսեր կերցնելիս, վատ աղից, պանրի մեջ դառնություն առաջացնող միկրոբներից, մեղմ (քնքուշ) պատրաստած, պանիրը ցածր ջերմաստիճան ունեցող նկուղում պահելիս, խիստ գերհասած մակարդից:

2. Կաղմնակի համր. — կերերից (սոխից, սխտորից, հլածուկից, սորուկից և ուրիշ բույսերից):

3. Ճարպահամ. — կովերին առատորեն վատորակ կերեր (փչացած քոշուպ, վոշ թարմ բարդա և ալի), հում կարտոֆիլ, թթաւ կոպիտ կերեր (ճահճային անտառային արոտ և այդ արտաից քաղած խոտ) կերցնելուց, դալից, գերխմորված մակարդից:

4. Թրաւ համ. — վոշ բավարար չափով մշակված հատիկից, թարմ պանրից շիճուկը վատ անջատվելիս, գերհասած, գերթթված մակարդից:

5. Հոտած համ.—Պանրի անժամանակ խմորումից, պանիրը ժամանակին չաղելուց, փչացած կերերից:

6. Նեխած համ.—Թույլ, անհամաչափ և չհասակցող հաստիկից, վորի կուտակման տեղերում տեղի յե ունենում վոչ ճիշտ խմորում, վորը պանրին տալիս և նեխած համ, այլև փչացած ուժեղ կերերից:

Putrificus բացելով վարակված պանիրն ունի խիստ նեխած հոտ (տես կաթի բակտերիաները—նեխման բակտերիաներ): Այդ բացելը կաթի մեջ և ընկնում գոմում կերից ու ջրից:

#### Գ. ԽՍՈՐԻ ԱՐԱՏՆԵՐ

1. Խոպիտ, դուրսբեկ, չոր խմոր.—կաթի բարձր թթվությունից, բակտերիալ և շրդանային ուժեղ մակարդից, կաթի արագ մակարդվելուց, մանր հատիկից, բարձր յերկրորդ տաքացումից, հատիկն արագ և անխնամ մանրացնելուց, պանիրը հանելուց առաջ մեծ քանակությամբ ջուր ավելացնելուց:

2. Թույլ քսվող խմոր.—Շատ ջուր պարունակելուց, կաթի թույլ մակարդվելուց, բավարար չափով չխառնելուց, թույլ շքր-պանածակարդից:

3. Փոկանման խմոր.—Բարձր ջերմաստիճանում արագ մակարդվելուց, կաթի գերթթվելուց, բավարար չափով չմշակված հատիկից:

4. Փորվող խմոր.—Բարձր թթվություն ունեցող կաթից, մանր գերչորացած և թույլ կազակչված հատիկից, պանիրը հանելուց առաջ մեծ քանակությամբ ջուր ավելացնելուց:

5. Հաստ յենթակեղեվային սեռ.—Ցերկարատե և ուժեղ աղ անելուց—չոր ձևով և թունդ աղաջրի մեջ, մամուլի ուժեղ ճնշումից, բարձր ջերմաստիճանից և նկուղի ցածր խոնավությունից:

#### Դ. ԳՈՒՑՆԻ ԱՐԱՏՆԵՐ

1. Խաղտավուն նրբեռանգ.—Վատ կլայեկած ամանից, բարձր թթվություն ունեցող սերղատած կաթից, կաթսաների ոքսիզանալուց:

2. Մուր-մեխրագույն կեռեր պանրի խմորի մեջ.—Մութ ներկ առաջացնող բակտերիաների գաղութներից. պանրի փափուկ խմորն այդ արատին ավելի տրամադիր և, քան կուպիտը:

3. Կարսի նրբեռանգ կեղեվի սակ.—Շրջանակի փայտից կամ դարակից պանրի կեղևի մեջ խոնավություն անցնելիս:

Չ. Մտնի- խիս ցկար. — Շատ տարածված արատ է Եմալչա-  
 յինս (прессовник) կամ «ցանցավոր» անուկով: Պանիրն ունի  
 քաղմաթիով մանր աչքեր՝ ցանցի նման: Պանրի արատը յերևան է  
 գալիս մամլելու կամ աղ անելու ժամանակ: Առաջանում է մեծ  
 քանակությամբ աղիքային ցուպիկի բակտերիաներ պարունակե-  
 ցուց: Այս արատն ամենից ավելի հաճախ յերևան է գալիս կովե-  
 րին փորլուծ առաջացնող կերեր կերցնելուց, իբրև լրացուցիչ կեր  
 աաքացած քաղած կանաչ կեր, փշացած ուժեղ կեր կերցնելուց,  
 կովերի կրծի բորբոքման և ուրիշ հիվանդությունների զեպքում,  
 խմորված շրդանամակարդից և բակտերիալ մակարդից (մակար-  
 գա-խմորման փորձի ժամանակ պանրիկը 15-18 ժամ հետո ու-  
 աած է լինում):

Յուցանիշները. պանրի դատարկ հնչյունը, յերեսի մեջտեղը  
 միքիչ վեր է բարձրացած, կողքերն ուղիղ են:

Ձ. Խոռո փայլուն աչեքով ցկար. — Աչքի պատերը փայլուն  
 են, անհարթ, թմբանման: Խմորը փխրուն է, համը վոչ մաքուր:

Արատն առաջանում է կովերին մեծ քանակությամբ ուժեղ  
 կերեր, առանձնապես քուսպ կերցնելուց, բարձր թթվություն ունե-  
 ցող (150°) շրդանարակտերիալ մակարդից:

Յ. Նկարն ունի խիս յեվ վոչ կամոնավոր դատավորված միջին  
 մեծության աչեք. — Արատը շատ է տարածված: Նմուշանս գոր-  
 ծիքով վերցրած նմուշի վրա 5-8 վոչ համաչափ դասավորված  
 աչքեր: Առաջանում է նույն պատճառներից, ինչ վոր «ցանցավոր»  
 աչքերը, միայն այն տարբերությամբ, վոր արատը յերևան է գա-  
 նկարը, միայն այն տարբերությամբ 3-4 շաբաթ անց և այդ պատճառով  
 լիս պանրի պատրաստումից 3-4 շաբաթ անց և այդ պատճառով  
 ունի ավելի կամ պակաս մեծության: աչքեր: Այդ արատի զեպ-  
 քում պանրի խմորը փոկանման է:

Կ. Յուղաքրվային խմորում պանրի մեք. — Շատ մեծ արատ է.  
 պանիրը խիստ ուռչում է, յերեսին և կողքերին առաջանում են  
 նեխման բնույթ ունեցող մեծ խոր ճաքեր. լինում են այնպիսի  
 ճաքեր, յիրը պանիրը բաժանվում է առանձին կտորների: Արատն  
 ուշ է յերևան գալիս՝ պանիրը պատրաստելուց 5-6 շաբաթ հետո:  
 Կաթի հետադրոման ժամանակ մակարդախմորման փորձում բա-  
 ցիլը չի հայտարերվում, պանիրը պատրաստելու ժամանակ վորե-  
 ղե աննորմալություն չի նկատվում: Կաթը յուղաթթվային բակ-  
 տերիաներով վարակվում է գոմում: Կաթի արատն առաջանում

և գլխավորապես կովերին թթվեցրած կերեր (սիրոս և այլն) և փշացած ալյուրի շփոթ կերցնելիս:

5. Անհամաճախ խմորում. — Պանրի կողքերի ավելի ուժեղ խմորումը տեղի յե ունենում հանելուց առաջ պանրի դանդվածը կաթսայի մեջ ուժեղ կերպով խառնելուց: Այդպես խառնելիս խոշոր հատիկները կենտրոնանում են դեպի յեղիքները, իսկ մեջտեղում հավաքվում են մանր հատիկները: Առաջանում և նաև մամլելու ժամանակ կողքերի խիստ սառչելուց, վորի հետևանքով շիճուկը մնում և կեղևի տակ, վորը և ստեղծում և խմորման համար նպաստավոր պայմաններ այդ տեղում:

6. Յեռեսի վրա փոսիկներ. — Այս արատը մեծ մասամբ պատահում և փափուկ խմոր ունեցող պանրի մեջ: Այդ առաջ և գալիս մակարդածուն արագ մշակելուց, խոշոր հատիկից, յերկրորդ անգամ արագ տաքացնելուց, վորի հետևանքով հատիկի վրա առաջանում և թաղանթ և շիճուկը վատ և անջատվում, պանրի բլուջի աղաջրում աղելուց, պանրի դանդվածի այս կամ այն մասում մանր կամ խոշոր հատիկների կուտակումից, խոշոր աչքերից կամ դատարկություններից, վորոնք առաջանում են կեղևին մոտիկ խիստ ուժեղ գաղաղոյացման հետևանքով. դաղերի դուրս գալուց հետո, պանրի խմորումը վերջանալիս, նրա յերեսին առաջանում են փոսիկներ:

7. Միակողմանի խմորման յեկրակված պանրեներ. — Արտան առաջանում և պանրի վոչ ճիշտ խնամքից, այն և՛ պանրի բլեք մամլելուց (մեկ կողմն ավելի ուժեղ և մամլվում, քան մյուսը), պանրի պաղելուց և քամհար լինելուց, չոր ձևով աղ անելիս պանրը յերկար ժամանակ մեկ կողմի վրա պառկելուց, հանելու ժամանակ պանրի դանդվածը շուտ տալուց:

8. Խմորում օսմարամիկի միջոցով. — կովերին մեծ քանակությամբ շաքարի ճակնդեղ կերցնելուց, մեկսից, շրդանային և բակտերիալ մակարդի և թթու շիճուկի մեջ շաքարամիկեր լինելիս, կաթի ամաններով չպաստերիզած շիճուկ փոխադրելիս:

9. Նկար չունեցող (կույր) պանր. — Նկար չունեցող և ճաքճքքով խմոր ունեցող պանրներն ստացվում են բացառապես վոչ ճիշտ տեխնիկայի կիրառման հետևանքով:

ա) կուպիս խմոր ունեցող կույր պանրներն ստացվում են ցածր ջերմաստիճանում կաթն արագ մակարդելուց, յերկրորդ անգամ բարձր ջերմաստիճանում տաքացնելուց, խոշոր հատիկն ուժեղ կերպով չորացնելուց, թուջի շրդանամակարդից, շատ դեպ

քերում՝ փոշի շրդանամակարդ գործածելուց, պանիրը խիստ մամ-  
լելուց, նկուղի ցածր շերմաստիճանից և ցածր խոնավությունից:

բ) Պանիրն ունի նորմալ նկար, բայց ինքնաճեղքվող է:

Այս արատն առաջանում է կաթի արագ մակարդվելուց, գերմա-  
կարդված կաթից, խոշոր հատիկն արագ, բայց վոշ բավարար  
չափով մշակելուց՝ և այլն: Արամի գլխավոր պատճառն այն է,  
վոր պանիրները խմորման նկուղից դուրս են հանում ժամանակից  
շուտ: Ջերմաստիճանը պատահաբար բարձրանալուց սառը նկու-  
ղում սկսում է նոր գազագոյացում և խմորը, վորն արդեն վորոշ  
աստիճան իր առաձգականությունը կորցրել էր, ճաքճքում է:

գ) Պանիրն ունի նորմալ նկար, սակայն մանր աչքեր և  
ճեղքվածքներ՝ կեղևի տակ: Արատն առաջանում է շիճուկից, վորը  
Ֆեում է պանրի մեջ՝ մամլելու ժամանակ նրա պողելու և որա-  
հարվելու հետևանքով, արագ կերպով կեղևի առաջանալուց, մա-  
մուլի ուժեղ ճնշումից՝ մամլելու սկզբին, մամլելիս պանիրն ուշ-  
ուշ շուտ տալուց, յինթակեղևային շերտը խիստ ուժեղ կերպով  
աղ ուտելուց, պանրի խմորման սկզբին ուժեղ աղ անելուց: Արատը  
գլխավորապես առաջ է գալիս կեղևի տակ շիճուկի հավաքվելուց,  
վորի հետևանքով ստացվում է աննորմալ խմորում, կամ կեղևի  
տակ խմորի մեջ մեծ քանակությամբ աղ լինելուց, վորի հետև-  
վանքով խմորի ճկունությունը թուլանում է:

Յեթե պանիրն արդեն այդպիսի արատ ունի, այն ուղղի  
կամ վերացնել հնարավոր չէ:

Այդ բոլոր պակասություններից կարելի չէ խուսափել հարկ  
յեղած նախազգուշական միջոցները ձեռք առնելով, որինակ՝ կո-  
վերին ճիշտ կերակրելով, կաթի արտադրման վայրերում կաթը կա-  
նոնավոր ստանալով և ճիշտ կերպով նախնական մշակման յին-  
թարկելով, գործարանում կաթը ճիշտ վերամշակելով, նկուղում  
պանրի նկատմամբ ճիշտ խնամք տանելով և այլն:

## 18. ՊԱՆՐԻ ՀԱՍՏԱՐՈՒԹԵՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԸ (3312 ՈՍՏ-Ի ՓՈՒՍԱՐԵՆ)

### 1. ՏԵՆԵԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ա) Ձեռք, բազր յեվ կազմը.—Մեծ գլուխ (եմմենթայ). ձեռ՝  
ցածր գլան, թեթեակի ուռուցիկ հորիզոնական և կողքի մակի-  
բեաներով (յեղերքներից արամագիծը 70—80 սմ, բարձրությունը  
13—15 սմ, քաշը 60—90 կգ, մոտ 1—1,5 սմ դուրս): Փոքր գլուխ

(գրչույեր). ձևը՝ ցածր դլան, թեթևակի ուռուցիկ հորիզոնական և կողքի մակերեսներով (յեղերքներից մտա 1 սմ դուրս), տրամագծի ծր 45—55 սմ: Բարձրությունը 11—13 սմ, քաշը՝ 20—30 կգ:

Նեղելվն առաձգական է, դիմացկուն, քիչ անհարթ՝ ցանցակազմի հետքերով, առանց կնձիռների ու վնասվածքների. բարակ է, առանց հաստ յնձիթակեղևային շերտի:

Յուղալիությունը. — Լրիվ յուղալի — չոր նյութի մեջ 50% յուղից վոչ պակաս:

Ջրի բաճակը. — 40 տոկոսից վոչ ավելի,

Սպի բաճակը. — 2,5 տոկոսից վոչ ավելի:

բ) Որգանդակների ցուցանիշները. —

Համն ու հոսք. — Մաքուր և քնքույշ համ, արմատը յուրահատուկ ավյալ տեսակի պանրին, առանց կողմնակի համերի ու հոտերի:

Կոնսիստենցիան. — Խմորը փափուկ, կապակցված, ելաստիկ, ամբողջ դանգվածում միատեսակ, գույնը — ծղոտադեղին, ամբողջ դանգվածում միատեսակ:

Նկարը. — Ուղղահայաց կտրվածքի վրա կեղևից 3 սմ վոչ հեռու, կտրվածքի ամբողջ մակերեսի վրա պետք է լինեն համաչափ դասավորված ճիշտ կլոր ձևի աչքեր՝ 1—2 սմ տրամագծով (մեկ աչքը 12—16 սմ տարածություն վրա):

Փոքր գլխի (գրչույերի) աչքի տրամագիծը 0,5—1 սմ: Նմուշահանով հանած 10—12 սմ կտորի վրա պետք է լինի 2—4 աչք:

## II. ՊԱՆՐԻ ՓԱԹԵՅՈՒՄԸ

Փաթեթումից առաջ պետք է պանիրը նախապես քերած — մաքրած, լվացած և լավ չորացած և դրոշմանշված լինի:

Յուրաքանչյուր տարայի մեջ թույլատրվում է տեղավորել միայն մի տեսակի պանիր, միատեսակ վորակով, յուղալիությամբ և մոտավորապես միևնույն հասակի:

Պանիրները փաթեթելու համար թույլատրվում է ոգտագործել չոր, մաքուր, պատրաստած ամեն տեսակի չոր փայտից, վորը վնասակար ազդեցություն չի գործում մթերքի վրա:

Կիսատակառի համար ոգտագործվող տախտակները պետք է լինեն չոր, հարթ և անղած՝ դրսի կողմից:

ա) Տարայի տեսակը. — Կիսատակառ, վորը մեծությամբ պետք է համապատասխանի պանրի գլխների տրամագծին:

բ) Տարայի սարողութունը.—Մեկ կիսատակառի մեջ 3 ձև՝ գլուխ, կամ 5 փոքր գլուխ:

գ) Գոռ: Իրման բուցուցիչ նյութեր.—Գլխին կրե արտաքուստ ուսուս են թուղթ, բարակ ֆաներա, մաքուր չոր ծղոտ կամ մանր փայտատաշեղ:

Մանրութուն.—Թուլատրվում է վագոններով տեղափոխել ատանց կիսատակառների, յուրաքանչյուր դարսի մեջ 3—4 գլուխ, գլուխները արանքում կամ դարսերի միջև մաքուր ծղոտ կամ մանր տաշեղ գնելով: Զփաթեթած պանիրը սալով տեղափոխելը (ստանդարտից դուրս)։—Յերբեմն կարիք է լինում պանիրը փոխադրել սալով. այդ լավ է կատարել հեռակայ կերպ. սալի կամ սահնակի քարշակից պինդ կապել մի ցից և դրան ուղղածից գեմ անել պանրի տակի փայտյա շրջանակ. այդ շրջանակի վրա կողքանց ուղղահայաց շարել պանիրները: Այս պանրի վերջին գլխին գեմ անել նույնպիսի փայտյա շրջանակ և նրան դեմ անել նույնպիսի ցից և ցցերն իրարից ամուր կապել:

Այս ձևով փաթեթած պանիրները սալի կամ սահնակի մեջ ունեն պինդ կապած կուլտի տեսք և ճանապարհին թուլացած տարանները ձգելու գեպը ու նշանակված տեղը, նույնիսկ վատ քաղքարոտ ճանանպարհով, կհասնեն ատանց ֆասովածքների:

Ամառ ժամանակ սալի մեջ պանրի տակ գնում են խոտ կամ ծղոտ, ապա ծածկում են բրեզենտով կամ քաթանի ծածկոցով, վորի տակ, կտարազներուց պաշտպանելու համար, գնում են նույնպես խոտ կամ ծղոտ:

Ձմեռ ժամանակ սահնակի մեջ գնում են խոտի հաստ շերտ (վոչ ծղոտ, Վորովհետև նա ցրտից վատ է պաշտպանում), ապա ախպիտի մեծության թաղիք, վոր ամբողջ կուլտը նրանով փաթաթվի, վերևից գնում են էլի խաթի մի շերտ, ծածկում են բրեզենտով և պինդ կապում են:

Այսպես փաթեթելիս պանիրը կարող է 3—4 որ 12—15° Ց ցրտի ժամանակ լինել ճանապարհին ատանց ցրտահարվելու վտանգի: Այդ ժամանակ պար է ատանձնապես ուշադրությամբ հետևել խոտի շերտի և թաղիքի անվթարությանը:

### III. ՊԱՆՐԻ ԴՐՈՇՄԱՆՇՈՒՄԸ ՅԵՎ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԶԵՎԵՐԸ

1. Պանրագործարանում, մամլելուց առաջ, բոլոր պանիրներին վրա գրողմակի (շտեմպել) կամ արաֆարետի միջոցով դիմացկուն, չվազցող անֆուս ներկով խփում են դրոշմանիչ, վորը պետք է ցույց տա հետևյալը՝ յուղի տոկոսը, գործարանի համարը, ժաբդի, յերկրի, հանրապետության կրճատ անունը, վորտեղ գտնվում է գործարանը և պանրի պատրաստման թվականը:

Դրա փոխարեն կարելի չի նաև պանրի կեղևի մեջ ժամել կազեյինի թիթեղ համապատասխան դրոշմանչով:

2. Յեթե գործարանում կամ կենտրոնական պահեստներում

պանրի խնամքի ժամանակ դրոշմանիշն սկսում և ջնջվել, պետք է ժամանակին վերականգնել:

3. Գործարանից կամ կենտրոնական պահեստից սպառման կենտրոններն առանց դրոշմանիշի պանիր ուղարկել չի թույլատրվում: Պանրի վրա սահմանված դրոշմանիշը չլինելու դեպքում նա համարվում է վոչ ստանդարտ:

4. Մարզի, յերկրի, հանրապետության անուշաները դրոշմանի մեջ նշանակվում են կրճատ ձևերով, որինակ՝ Հայաստանի ԽՍՀ—ԲՐ., Վրաստանի ԽՍՀ—ԲՐ., Ադրբեջանի Ա3,—Արդով—Սեծովյան յերկիր—ԱԳԿ և այլն:

5. Տարալի գրուսանուսը գործարանում.—կիսատակառի ճակատակողմերից մեկի վրա տրաֆարետի միջոցով դիմացկուն, չլվացվող ներկով նշանակում են՝ ա) համապատասխան յուզի տեղուսը, վորը խփում են կողքից՝ հեցերի միջև Չ տեղում, բ) գործարանի համարը, գ) տարվա սկզբից գործարանի բաց թողած տարաների հերթական համարը, դ) նետոտ քաշ, տարալի քաշ և բրուտոտ քաշ, ե) վարպետի և փաթեթման համար պատասխանատու անձնավորության ազգանունները:

6. Տարալի գրուսանուսը մրեմամ հեցերում.—ա) Ուղարկողի դրոշմանիշը, բ) մթերման կետի անունը, գ) արտադրական կազմակերպության առևտրական դրոշմանիշը (այն գործարաններին համար, վորոնց այդ թույլատրված է), դ) պանրի սորտն ըստ վերակի տեսչության սահմանման:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՇՄԱՆՆԵՐԸ

Բացի ստանդարտով սահմանված հիմնական դրոշմանիշումից, Գլխուղարգը 1934 թվից իր սխառնի հատուկ ընտրված գործարանների համար մտցրել է առանձին լրացուցիչ դրոշմանիշում: Այդ լրացուցիչ դրոշմանիշումը մտցնելու նպատակն է ուժեղացնել առանձին գործարանների պատասխանատվութունն արտադրած պանիրների վերակի նկատմամբ, ստեղծել բարձր վարկ և խրախուսել լավագույն գործարաններին:

Այդ լրացուցիչ դրոշմանիշումը (առևտրական մարկա) կատարելու իրավունք ունեն միայն հատկապես ընտրված գործարանները:

Այդ գործարանների ընտրության կարգը սահմանում է այն կազմակերպությունը, վորին յինթարկվում է պանրադրոշմանիշը:

Այդպիսի գործարանների ընտրության կանոնները հիմնականում հեռավայրն են:

1. Պետք է ընտրել մեքենայացված, ձիու ուժակալով աշխատող և ձեռքի

պանրագործարանները՝ տարեկան 100 ցենտներից վաչ պակաս արտադրողական-  
նությամբ, վորոնք բավարարում են հետևյալ պահանջներին.

ա) պետք է ընտրվեն այն պանրագործները, վորոնց արտադրած պանրի  
50%/6-ից վաչ պակասը վորակով 1933 թվին 1-ին սորաի յեր.

բ) ընտրվելիք պանրագործարանները պետք է կոմպլեկտավորվեն 1-ին  
կատեգորիայից վաչ ցածր վարպետներով.

գ) ընտրվող պանրագործարանների ակնխիկական դրուժյունը պետք է  
համապատասխանի հետևյալ պահանջներին.

1. Պանրագործարանի շինքը պետք է ամբողջապես նորոգված, ախտա-  
հանված լինի և պահվի պատշաճ սանիտարական դրուժյան մեջ:

2. Հատակը պետք է լինի լավ դրուժյան մեջ, կանալիզացիան և կեղ-  
տաջրի փոսը պետք է դանավեն գործարանից 100 մետրից վաչ պակաս հեռավո-  
րության վրա և բոլոր կանալիզացիան ջրերը պետք է հոսեն հատուկ ջրափող-  
բակով:

3. Մամլարանը՝ անհրաժեշտ քանակի սարքին մամուլներով պետք է  
ապահովել նորմալ մամլման համար անհրաժեշտ ջերմաստիճանը:

4. Աղարանը պետք է ունենա հարկ յեղած կահավորումը և ապահովի  
նրա մեջ գտնվող պանիրների համար անհրաժեշտ ջերմաստիճանը:

5. Պանրի նկուղները պետք է լինեն պատշաճ ձևով նորոգված, սարքին  
փարակներով, պետք է ապահովված լինեն սանտուժյամբ և լավ ախտահանված.  
ախտահանված պետք է լինեն նաև բոլոր զարակները:

6. Պանրագործարանի և նկուղները վենտիլացիան պետք է սարքին լի-  
նի, այնպես վոր հնարավոր լինի ժամանակին ողափոխություն կատարել, այլև  
կանոնավորել պահանջվող խոնավությունը:

7. Պանրագործարանի ամբողջ ինվենտարը և ամանները պետք է ամ-  
բողջովին նորոգվեն, լավ կլայելվեն և ախտահանվեն:

8. Պանրագործարանը պետք է ապահովված լինի դրոշմանշման համար  
անհրաժեշտ արաֆարետներով:

II. Պանրագործարանները ընտրությունը կատարում է հատուկ հանձ-  
նաժողովը, վորի վորոշումը հաստատում է տրեսոր՝ առվով ընտրված գործա-  
րաններին համապատասխան վկայական:

III. Ընտրված պանրագործարանները ցուցակներն ուղարկում են շքրջ-  
բաժանմունքներին, հրահանգչական կետերին, Գլխուղարգին և ԽՍՀՄ Սննդի  
տրջյունարևության ժողովրդական կոմիսարիատի վորակի վերաբերյալ կաթ-  
նայուղի ինսպեկցիայի Գլխավոր վարչությանը:

IV. Ներքոհիշյալ մարդերում, յերկըներում և հանրապետություննե-  
րում ընտրված պանրագործարաններն իրավունք ունեն բացի դրոշմանշելուց,  
իրենց արտադրանքին առ վորոշ՝ Գլխուղարգի սահմանած լրացուցիչ անուն,  
այն է՝

ա) Հյուսիսային կովկասի տրեսոր՝ «Շվեյցարական-կովկասյան».

բ) Արևմտյան Սիբիրի տրեսոր՝ «Շվեյցարական-Ալթայյան».

գ) Հայկական և վրացական տրեստները՝ «Շվեյցարական-Անդրկովկա-  
սյան»:

V. Մնացած ընտրված պանրագործարանները պանիրը դրոշմանշում  
են, ինչպես նախատեսված է ՈՍՏ 3316-ով, սակայն առանց լրացուցիչ նշումների:

VI. Պանրին հատկացված գրողմանշանը, այլև Գլխուղարդի սահմանած անունները՝ «Շվեյցարական-Կովկասյան», «Շվեյցարական-Ալթայան», «Շվեյցարական-Անդրկովկասյան» յուրաքանչյուր գործարան, պանիրը մթերման կեսն ուղարկելուց առաջ, յուրաքանչյուր գլխի վրա խիում ե կառչուկե գրողմոցով անվնաս չինջիոց ներկով: Գրողմանիշը (նրա շուրջը մակագրած) ըստ մեծ տրամադրի—9 սմ, ըստ փոքրի՝ 6 սմ: «Շվեյցարական-Կովկասյան» կամ «Շվեյցարական-Անդրկովկասյան» մակագրութան յերկարությունը 15 սմ է, լայնությունը՝ 3 սմ:

VII. Յեթև ընտրված պանրագործարաններն իրենց աշխատանքի պրոցեսում կարտողրեն վատորակ պանիր և այն կպահեն վոչ պատշաճ վիճակում, եպա տալովիս գործարանները տրեսաի հանձնաժողովի վորողմամբ զրկվում են լրացուցիչ գրողմանիշու իրավունքից, և գրողմոցները, այլև ատոեսատացիաները հետ են վերցվում և մնում են հանձնաժողովի տրամադրութան տակ: Իոկ պանրագործարանի վարպետը զրկվում է 1-ին կարգի կվալիֆիկացիայից, փորի մասին զրկվում է նրա աշխատանքային ցուցակի մեջ:

IV. ՊԱՆՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՍԻՍԵՄԸ

ա) Սահմանվում են պանրի վորակի գնահատման հետևյալ մեթոդները—ըստ քիմիական ցուցանիշների (յուղի տոկոսի վորողումը չոր նյութերի մեջ, ջրի և աղի տոկոսի վորողումը) և ըստ որդանուկպիտիկ ցուցանիշների:

բ) Ուրվաձևով զնախառումը կատարվում է 100 թվանշանային սխտեմով՝ համապատասխան հետևյալ սխեմայի, վորի մեջ յուրաքանչյուր հատկութան համար տրվում է համապատասխան թվանշան.

- 1. Համն ու հոտը — 45
- 2. Կոնսիստենցիան — 25
- 3. Նկար . . . . — 10
- 4. Խմորի գույնը — 5
